

Հոր.

Բագրի



Բագրի

7.


## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



Ծ. ՊԾՅԱՃԵԱՆ . . . . .	Գուռ
Ժ. ԱԹԹԱՐԵԱՆ . . . . .	Օփրն, փի՛ղ...
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ . . . . .	Աղօթք՝ լինելու քեան եղանակներուն
Բ. ՔԷՊԱՊՃԵԱՆ . . . . .	Խորտակուած քանակը
Ա. ՃԻՒՂԵԱՆ . . . . .	Մածկոց
Ա. ԲԱԿՈՒՆՑ . . . . .	Սեւ ցելերի սերմնացանը
Վ. ՕՇԱԿԱՆ . . . . .	Բանի վր նաթ «Սեւ ցելերի սերմնացան»ի մասին
Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ . . . . .	Պարսկահայ երիտասարդ քահանայի ծննդի մասին
Է. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ . . . . .	Բաղադրական գաւազնախօսքը Խորհրդային Հայաստանում
Յ. Մ. . . . .	Ե. Պարսումեանի «Մագէ ք ծագքը
* * * . . . . .	«Որտե՞ղ ես հանգչում հիմա»...
ՀՐ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ . . . . .	Ոսկէ աստղ
* * * . . . . .	«Մեր փնտռումներն անօգուտ մնացին»...
Հ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ . . . . .	Տէրեանը յիշում են Օրինորդում
Վ. ՏԵՐԵԱՆ . . . . .	Մի՛ խառնէ՛ք մեզ...
* * * . . . . .	«Ժամա՛նակ»ի ծնունդը...
* * * . . . . .	Մշակութային լարեր

~~1919~~ JUN 2019

# Բազմ



## ԱՄՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

ՅՈՒՆԵՍԿՕ-Ի ՔՆՆԻՆԻ ՓԵՏՐՈՒԱԿ 1980 ԳԼՈՐԻՆԻ

Ճիշտն ասած ինչպես կրող հետադարձ կրկնա-  
շունչ բանաստեղծությունը մաս կը կազմէ շարքի  
մը, որ Եղուարդ Պոյաճեանի նարագանները դրած  
են ճիշտին խմբագրութեան արամազրութեան  
սակ:

Պոյաճեան ճրագրած էր առի բանաստեղծու-  
թիւնները, ինչպէս նաև ոչնչացնէ ճիշտին էջե-  
րուն լոյս բնծայած ճոխ նկարագիրը պարզով  
միաները, այս ճոխ խորագիրով (Ճիշտն) ամ-  
փոփէլ ստանձին հատորի մը մէջ, երբ լրաց հա-  
սարանստեղծութիւնը...

Ճիշտն կը պատկերացնէ պատմութեան եր-  
կայնի գիտութեան մարզը՝ իր կառուցի ու հո-  
գեղին բոլոր երեսներով և, ինչպէս կ'ըսեն, հր-  
բայարակազմակերպութեան:


Միև անտիպները պիտի սանջ պարբերաբար:



2000

### ԳՐՈՒՆ

Բո՛ւն մեծն ես դուն, քո՛ւն լոյսն ես դուն,  
Իմաստը բուն՝  
Աշխարհ եկած հոգեւտարին.  
Ես դուն ես դեռ  
Բուն արժանիքն ու բուն որդին,  
Հեռուն կեցած, հեռուն հսկող ստուամներուն:



digitized by ODAZ.R.A.R. @ 09 96 - ԱԿ

Մեծ չէ՛ լեռը, մեծ չէ՛ ծովը, մեծ չէ՛ աշխարհ,  
 Ու դեռ մեծ չէ՛  
 Աստուածախոր Ունեունն անգամ,  
 Անդորրի մէջ բէ՛ մրրիկի.  
 Տեղ են անոնք՝  
 Առանց էեգի, միշտ խեղճիմաստ,  
 Միշտ անիմաստ...

Դու՛ն ես մեծը,  
 Խորունկ սրտով, խորունկ աչքով, խորունկ խոհով,  
 Խոր ուղիով,  
 Աստուածային ուղեւորմամբ,  
 Հակտի գիրով:  
 Մեծ՝ վասնզի  
 Համբո՛ւ տէր ես ու միշտ համբորդ,  
 Հեռուէն եկած, հեռուն նայող, հեռուն գացող...

Դուն ես մեծը մեծ բաներուն.  
 Մեծ էայլը միշտ՝ մեծ էայլերուն,  
 Մեծ մութը միշտ՝ մեծ մթութեանց,  
 Մեծ լոյսը միշտ՝ մեծ հանաչման:

Քեզմէ բացի, մութ չէ ոչ ոք,  
 Լոյս չէ ոչ ոք,  
 Բա՛ն չէ ոչ ոք:  
 Քեզմէ բացի,  
 Ա՛յ ամէն ինչ գոյութիւն է, պարզ, անբողոք,  
 Անողոք...

Կը՛ քայն դուն, — բայց հանաչմամբ, —  
 Կը՛ նայիս դուն, — բայց խորութեամբ, —  
 Կ'ունկնդրես դուն, կը՛ խօսիս դուն, ու կը՛ զգաս դուն՝  
 Կրա՛կ-կրա՛կ իմաստութեամբ:

Հող չես միայն, — կոյր ուծերու միշտ կոյր կցորդ, —  
 Հող չես երբեք՝ աստուածներու արարչական  
 Կստոյցներուն ընդմիշտ անպէտք,  
 Հող չե՛ս, հող չե՛ս դուն անլորդ,  
 Ամէն ինչի յախտեան խորք:

Էակ ես միշտ՝ միտք ու համբայ,  
 Միրտ ու համբայ.  
 Էակ ես դուն, սիրոյ, վշտի,  
 Նրազանքի ու հաւատքի.  
 Էակ մը, որ վայրկեան է յար,  
 Աստուածներու խորունկ խաղի:

\*\*\*

Մարդը՝ ցեխի, ցուրտի կտոր,  
 Մարդը ահա հին օրերէն բան մը պզտոր,  
 Ծով անյայտի, ծով հանաչման ծովանաւորը՝  
 Մեծ է նայնիսկ իր նամբայէն,  
 Համբու վրայ ձգած շուէէն.  
 Մեծ է անգամ իր իմաստէն, իր արկածէն եւ իր խաղէն.  
 Երկի՛նք մը վեր՝ իր իսկ յաչէն.  
 Մարդ է, մեծ է:

\*\*\*

Ամէն տեղ բանտ, ամէն ինչ բանտ,  
 Եւ դուն սուրբ նիզ սրբազնագոյն փայտուսներու,  
 Տագնապեցար, չընդունեցիր ո՛չ մէկ քառս,  
 Ոչ մէկ շղթայ,  
 Յայտուութեան ու գոն կեանքի ո՛չ մէկ մամուռ,  
 Ոչ մէկ բորբոս,  
 Վախճանական ոչ մէկ լուծում...

Ուղեղդ քու, ու սիրտդ քու, ու հոգիդ քու՝  
 Կը տառապին ակնբարթին շատ քիչին դէմ,  
 Եւ անսպառ դեռ շատին դէմ՝ յանրժութեան.  
 Կը տառապին ու կը մերժեն՝  
 Երբ սահման կայ, ու երբ չկայ:  
 Կը տառապին ու դժգոհ են՝  
 Ամէն բառի առջեւ կեցած,  
 Ամէն գիծի առջեւ կեցած, ամէն գոյնի առջեւ կեցած:

Կը տառապիս, կը տագնապիս,  
 Բան մը ընդմիջտ Դուն կը սիրես,  
 Ու կը մերժես հոգիիդ մէջ դուն այնքան բան...  
 Օ՛, դուն, օ՛, դուն,  
 Մութք կ'ատես, ցուրտը կ'ատես՝ —  
 Ահա մեծ ես...

Զէ հանգրուան հոգւոյդ համար  
 Ոչ մէկ կապոյտ.  
 Ոչ մէկ երկինք կրնայ գէեզ բաւարարել, բովանդակել.  
 Ոչ մէկ լաւ բախտ,  
 Ոչ մէկ դրախտ՝  
 Կրնան ժպիտ դնել շուրթիդ մինչեւ շիրիւմ,  
 Ու շիրիւմէն անդի՛ն, անդի՛ն...

Դուն կը փախիս, փախա՛ր արդէն,  
 Անմեղութեանց անմի՛տ-անմի՛տ եղեմներէն,  
 Անսիրտ վայրէն, անյոյզ վայրէն,

Անկիրք վայրեն:  
 Դուն կը փախիս, գիրն է քակտիք փախի՛լ, փախի՛լ՝  
 Դրախտ կոչուող դժոխք տեղէ, —  
 Ծաղիկներէ՛ որ բոյր չունին,  
 Մարմարներէ՛ որոնք չունին իրենց ծոցին մէջը արձան,  
 Ոչ մէկ քանդակ, յոյսը դէպի ոչ մէկ բխում:  
 Դուն կը փախիս հորիզոնէ, սատանայէ եւ Աստուծոմէ՛  
 Երբ սէր չունին,  
 Ոչ մէկ հմայք ու հրապոյր:

Թունդ քթխմոր՝  
 Ճանաչումի չյագեցող ծարաւներու,  
 Դուն ներկայէ՞ կրնաս հաւել ծով անցեալին,  
 Տեսիլներու դրօշ պարգած, մտնել ծոցը ապագային:

Կրնաս ըսել յարուցիչ խօսք մեռած բանին,  
 Ծնուցիչ խօսք՝ չծնածի՛ն:  
 Արարչութեան անծա՛յր-անծա՛յր մարգարայտին  
 հաղն է հոգիդ, եւ դուն անոր ճարտարագոյն մէկ խաղարկուն:  
 Աստուածներու քրիպիւնին՝  
 Ահա այսպէս հրա՛շքն եւ դուն:

Խոր սեւեռմամբ նայումս է հղած, հարցում հղած բռնորովին՝  
 Անթիւ համբայ, անթիւ քայայտ,  
 Անթիւ անկիւն դուն պատմութեան  
 Խոր յատակէն ելած-եկած, հեռուն կ'երթաս.  
 Կը բարձրանաս, վեհ ու վեհ՝տ վերացումով՝  
 Ճանաչումը ըրած քեզի  
 Աստուածային ջիւղ վերելակ:

Քեզմէ բացի ո՞վ կրցաւ զայ իր անցեալէն,  
 Ու անցեալէն ամէն ինչի՛  
 Աստուածներու եւ դժոխքի շաղակ սրտին.  
 Եւ ո՞վ կրցաւ իր հոգիին աներեւոյթ մետաքսներով  
 Սիրոյ հագուստ սեւել նոյնիսկ մահէն անդին էակներու,  
 Դժոխք վառել ու յարկածան գայն բորբոքել ընդդէմ չարի՛  
 Արդարութեան լուցկիներով:

Քեզմէ բացի, ո՞վ կրցաւ, ո՞վ՝  
 Միտքը հանել տիեզերքի ամենաջերմ փնտառութի,  
 Ընել հոգին տեսակ-տեսակ հաւատներու միշտ նախանաչ,  
 Սիրտը ընել,  
 — Բանն այդ տրտում՝ —  
 Մեծ սէրերու եւ կոյր կիրքի երեկոյեան վերջին ընթրիք...՝

Քեզմէ բացի,  
 — Մտիկ ըրէ՛, —  
 Հող չտուաւ, հիւք չտուաւ Յոյսի հունտին,

Արարչութեան ոչ մէկ էակ.  
 Ոչ ոք ինքզինք շարունակեց աշխատանքի  
 եւ ջերմօրէն գաւկէ գաւակ.  
 Ոչ ոք ցեխէն գազան կերտեց ու գազանին մէջ վառեց ջահ,  
 Անոր ապուշ ուղեղին մէջ՝  
 Դրա ինքզինք մանչցող Առկրատ,  
 Ճանկեբուն մէջ՝  
 Խուչելութեան գամի պտորաստ Յիսուսի ձեռք:

Կենսագիրքն եւ հիմէն ի վեր, սկիզբէն իսկ,  
 Ամէն բանի.  
 Երկրի, երկնի մէջտեղ կեցած կրակ աշուղ՝  
 Կրակ բառով պիտի պատմես,  
 Այն որ ոչ ոք կրնայ պատմել:  
 Պիտի պատմես, պատմեցիր միշտ,  
 Վէպը սրտիդ, վէպը աստղին,  
 Վէպը վերջին, որ չի բուժուիր,  
 Վէպը նամբուն, որ չի հատնիր...

\*\*

Դուն եւ մեծը. —  
 Փոխան մարմնի դիրքին հացի,  
 Ծալլ ու տգէտ խաղաղութեան՝  
 Դախնորած եւ հոգւոյդ համար  
 Պայքարներու անողորմ հաց.  
 Հաց աստղերու, անջրպետի, հաց պարապի,  
 Անվերջ հեռուի,  
 Հացեր նոյնիսկ անկարելի'...

Տիեզերքի խորհրդաւոր փուռին առջեւ,  
 Խորհրդաւոր անօթութեամբ խորհրդաւոր դուն յաճախորդ,  
 Վիհ եւ ֆաղցի,  
 Ծո՛վ եւ ֆաղցի,  
 Դուն անսպա՛ռ անօթութիւն...

Դուն եւ մեծը, կրկին ու միշտ,  
 Որովհետեւ ոչ թէ մորթո՞ւ՝ սի՛րտդ կ'այրի, սի՛րտդ կ'նփի.  
 Դրուած է ան բորբ հարցերու հին կրակին, սկիզբէն իսկ,  
 Սկիզբէն իսկ՝  
 Կ'այրի՛, կ'այրի՛...

Պիտի այրի...  
 Բանն այդ տրտում, սիրտ կոչեցեալ,  
 Պիտի այրի'...  
 Եթէ չայրի, դուն չես մեծնար,  
 Կ'ոչնչանաս.  
 Դուն այրմունքի, խոհեբույ մէջ խորովմունքի

Զաւակ ես միշտ հազարավիշտ,  
Որոնումի ու թռիչքի հի՛ն երաժիշտ:

Կրակին ես եթէ աչք տամ,  
— Անէ՛ն մութի քողը այրող,  
Անէ՛ն մութէ լոյս մը բացող —  
Քեզ կը ստանամ:

Թե՛ւ տամ եթէ ես կրակին,  
Մըրկահաւ չեմ տոանար, կը առանամ քեզ,  
Գուն մըրթիկէն արագ գացող  
Անեղ թռչուն,  
Իմացական անհուն արծիւ...

Ու կրակին եթէ խոհ տամ,  
Մի՛րս տամ եթէ ընդդէմ մահուան՝  
Քեզ ստեղծած ու թու վրադ երկինքն ամբողջ իր խորհուրդով  
Հովանաւոր ըրած կ'ըլլամ.  
Ուրէրուդ տակ գերդ պատուանդան՝  
Անմահութի՛ւն դրած կ'ըլլամ...

Ի՛նչ ես ուրիշ. — շարք-շարք կրակ եւ անթիւ շող,  
Ու գիրկ մը հող՝  
Քեզ թու վէրքիդ եւ յոյսերուդ խորք թաղող,  
Անեզրական բնացնչման դէմ գրահող,  
Ու սերմի հետ աստուածային՝  
Զքեզ կրկին նոր կեանքերու մայր մը ընող:

Հող ես, շող ես,  
Տիեզերքին ու դարերուն մշուշին մէջ, հեռո՛ւն, հեռո՛ւն,  
Աստուածային պահ ես միսքիք,  
Ուրիշ ոչինչ.  
Լինելութեան ու կորուստին անհուն, անծայր խարոյկին մէջ  
Շրթունք մը խեղճ, շրթունք մը սուրբ՝  
Ժպիտ մը խեղճ, ժպիտ մը սուրբ,  
Արցունք մը խեղճ, արցունք մը սուրբ...

Ինչպէ՞ս, ինչպէ՞ս գեթ պատմել,  
Առանց հուրի ու ազօթքի,  
Առանց խորունկ ջինջ երկինքի,  
Առանց ուխտի,  
Ազատութեան ու սէրերու առանց բառի,  
Զգացումի առանց վիհի:  
Ասեմ չե՞ն, որ կը կենսագրեն օրերդ ամբողջ,  
Լոյսեր չե՞ն, որ կը գծագրեն քեզ ու հոգիդ  
Այլումին մէջ դեռ շլուսցած, դեռ կիսալոյս տիեզերքին.  
Մըրթիկը չէ՞,  
— Ըսէ՛, ըսէ՛, —



Մրրիկը մեծ, աստուած կիրքին,  
 Որ կը բերէ, իշխան կ'ընէ քեզ աշխարհին,  
 Ու մրրիկ մը խորհրդաւոր,  
 Ուրի՛շ, ուրի՛շ,  
 Որ կը տանի, որ կը վանէ քեզ աշխարհէն...

\*\*

Դո՛ւն ես բարձր, բարձրագոյնը. —  
 Հողածինի խոնարհ սրտով, խոհով անգուլ՝  
 Հայրացուցիք իրենց պաղով, պաղ մեծութեամբ,  
 Ու տաղակալի անվշտութեամբ,  
 Ու մահէն գէշ յաւերժութեամբ՝  
 Աստուածներն իսկ:  
 Տուիր անոնց հայր ու որդւոյ մակատագիր,  
 Ոգիւնպոսեան բարձունքներէ որդիներու կեանքին մայազ,  
 Կեանքին հսկող հայրական աչք:

Եւ դուն սիրոյ ու ճանաչման որդիական բու աբարբով  
 Մեծութեան գիւտն ըրիր արդէն.  
 Որդիացար անվերջ սիրով,  
 Եւ արիւնիդ բոլո՛ւր, բոլո՛ր կշռոյթներով,  
 Համայնութեամբ՝  
 Բեզմէ ծնած աստուածներուն:

Ու հայրն այսպէս ինկաւ ծունկի աստուածացեալ իր որդւոյն դէմ,  
 Մըմնջելով անոր Հայր Մէք.  
 Եւ դուք գիրար ծնած անվերջ,  
 Եւ դուք գիրար մոռցած անվերջ,  
 Որոնեցիք, վերագտաք, հարիւրաւոր,  
 Հազարաւոր դարեր անվերջ...

Աստուածներուն կուրծքին տակը անձրդ ամբողջ  
 Զգացումի հին ծոցատետր,  
 Յուշարարի խոսվիչ քառ, անխղճութեան մետա՛ղ կիզող,  
 Տեսիլները աստուածութեան՝  
 Վերակերտող:

Յուշարարի բու սուրբ դերով կը յիշեցնես աստուածներուն՝  
 Ելլե՛լ պաղէն, ելլե՛լ մութէն,  
 Ելլել Զարէ՛ն ու ոչինչէ՛ն...

Ո՛վ մարդ, ո՛վ մարդ,  
 Աբարած մեծ, արարած բարդ,  
 Կր պարտուիս, բայց վեր ես դուն,  
 Կ'իյնաս գետին, կը տորտուիս՝  
 Քայց մեծ ես դուն:

Կը հայրամաս, կ'որդիանաս,  
Թե՛ր կը նետես նարոզ կեանքի եւ պատմութեան,  
Անցեալ, ներկայ եւ ապագայ՝  
Յաւերժական լինելութեան կ'ընես ուտայն...

\*\*\*

Ո՛վ մարդ, ո՛վ մարդ,  
Լինելական մրրիկներու ովկիանին մէջ՝ ոգի հպարտ,  
Եւ էու ոտքիդ, գիտում ոտքիդ, հետքը տեսայ  
Անտառին մէջ, լեքան գլխուն,  
Անդունդներու խոր յատակին,  
Ծովերու շուրջ, լիներու շուրջ,  
Ու գետերու, ու ջուրերու կանաչ ամփին,  
Քարայրներու քար յատակին...

Եւ էու ոտքիդ, — խիզա՛խ ոտքիդ, —  
Խօյ անցումին հետքը տեսայ,  
Ովկիանին մէջ, մրրիկին մէջ, մշուշին մէջ,  
Կեանքին անհուն արկածին մէջ.  
Տեսայ պատկերն երկու մաշած, սուրբ ոտքերու,  
— Մարդկային ոտք, —  
Գիտութեան մէջ, արուեստի մէջ,  
Դուցազնութեան ու խոյանքի հերոսական ուխտերու մէջ:  
Տեսա՛յ, տեսա՛յ՝  
Ոտքեր երկու,  
Անհուններու ուղիքն մէջ:  
Ինչպէ՞ս կրնաս վեր չըլլալ դուս  
Ժամանակէն ու միջոցէն,  
Հանուրն ի վար եկած-լեցուած քաղմամշուշ էակներէն:

Երկրագունտին միլիոնադար խռովներուն  
Մշակն եւ դուռն, խոռ՛վ էակ.  
Հողին, լոյսին ու ոգիին  
Ժամադրութեանց ու գրոյցին  
Մեծ տեղն եւ դուռն, տենդո՛տ էակ:  
Դու՛ն ես, որ միշտ իմացօրէն կը պալտիս,  
Ուրիշ ոչ ոք, ուրիշ ոչինչ:

Նուիրական ոտք եւ երկու,  
Ու էու ոտքով՝  
Երկիրն է, որ քայլ կը մետէ իր իմաստին,  
Երկինքն է, որ կ'առաջանայ դէպի խորհուրդ,  
Անհունն է, որ կ'ուլիանայ, կ'առաճգուի՝ անհունօրէն:  
Ռտմաճայի, ուռնահետքի չլմնող վե՛պը բուկին...

Երկու ոտքով հողածինի, — փոքրիկ, տխրած, —  
Քալեց նաեւ ինքը Աստուած՝

Ի Գողգոթա, ի յարութիւն:  
 Հողածիկնի քու ռոտերով,  
 — Մտիկ ըրէ, մտիկ ըրէ, —  
 Վերադարձաւ Աստուած կրկին՝  
 Աստուածութեան գաւիթ վերին, գաւիթ վերջին:



Դուն ես մեծը, սփանչելի՛ն. —  
 Ես ձեռքերուդ հետքը տեսայ, ո՛ւժը տեսայ  
 Գործերու մէջ անպատմելի:

Ձե՛ռքը մարդուն...  
 Ես գայն տեսայ  
 Կը փոխանցէր երբոր մարմին, երբոր հոգի՝  
 Մարմարեքուն, մետաղներուն,  
 Աւազներուն ու փայտերուն.  
 Ու զի՛ժ բանին, ու գո՛յն բանին, ու շո՛ւնչ բանին,  
 Կշռոյթ բանին:  
 Կու տար երբոր սէ ու շնորհ,  
 Եւ դուքս խուժող, ճառագայթող գեղեցկութիւն՝  
 Այդ ամէնուն:  
 Մէջէն քարին եւ դեռ մթին ու պաղ հաճի՛ն՝  
 Կը բանար ան կեանքին եկող լոյսի ճամբայ-  
 Խաւարին մէջ տգիտութեան ու տափակին՝  
 Կը դնէր ան ձեռքով հուժկու եւ խելացի՝  
 Կարծես արեւ գեղարուեստի:

Ձե՛ռքը մարդուն... —  
 Ես գայն գիտեմ իր հնագոյն, իր ճախագիր,  
 Առաջնայուշ ժամանակէն,  
 Համբու ընկեր՝ մարդու ռոտին,  
 Մարդու սրտին.  
 Ընկեր խելի՛ ստեղծագործ երկրածի՛նին,  
 Անոր ճակտի գիրին բանուոր:

Ես գայն տեսայ,  
 — Եւ ինչ մութ էր, եւ ինչքան ցուրտ,  
 Եւ որքան հուժ, եւ որքան պաղ՝ աշխարհն ամբողջ — :  
 Ես գայն տեսայ  
 Թշուառ գլխու, թշուառ փորի այն օրերուն՝  
 Ձէճֆ մը իբրեւ հիւլեական, սիրոյ ուսին:  
 Ես գայն տեսայ՝  
 Իւրաքանչիւր մատին վրայ, այն օրերու անյոյսին մէջ՝  
 Անթիւ յոյսեր, անթիւ խոստում,  
 Աշխարհ սանձող ուշիմութիւն:

Դրսեւորուած խեղճ էր ամբողջ,

Ձէ՞նք էր անյաղթ, հինգ մատներով ձեռքն այդ երկու,  
Թէ պատկերն էր տասնաստեղնեան՝  
Մարդու կեանքին, ապագայի բազում յոյսին:

Փայտը փայտին ամ շփելով,  
Ու շփելով միտքը մարդուն տիեզերքի մեծագաղտնի օրէնքներուն,  
Պատահարին ու քայքային՝  
Հանեց կրակ,  
Նախատարբն ու նախապատկերն այդ գեղեցիկ՝  
Ս'ւ մարդերու, ե՛ւ արեւի...

\*\*

Ձեռքդ էր բու, որ այս գիտով ա՛լ գրեթէ անկրկնելի՝  
Էութիւնդ բերաւ քեզի,  
Հորիզոններ ու խոյրնդուս այրող մտքով,  
Հոգիով, որ անյայտի հետ ամուսնացած՝  
Մ'այր կը դառնայ չպարփակուող, հետուն ժայթփող խոովներու:  
Ձեռքիդ գիտով այդ ջերմագոյն, պայծառագոյն՝  
Դէմքը մարդուն, պաղ, հողային՝  
Սերովրէի վերածուեցաւ բոցեղ դէմքի:

\*\*

Ձե՛ռքը մարդուն...  
Չտեսայ գայն ծոյլ, ծայրած,  
Ձրիամոլ.  
Տեսայ ես գայն աշխարհաբանդ, աշխարհաշէն...

Օր մը, տեղ մը, միշտ հնագանդ՝ մեծ խոհերու քաղցր ուժին,  
Կը սեպագրէր ժայռի վրայ, դաժան ու ցուրտ երկինքի դէմ,  
Բախտերու դէմ, նմաններու բազմութեան դէմ՝  
Յաղթանակի հպարտութիւն,  
Բառերուն մէջ դրած տեսիլք,  
Պայթող կրակ,  
Ու սէր, ու կիրք:  
Ապառաժեայ այդ մատնանէն, ճառագայթի խորճի նման  
Դուրս կը ժայթփէր խրոխտ պատգամ,  
Նոր դարերու նոր սերունդին:

Օր մը տարբեր, դա՛ր մը տարբեր,  
Մարդը նորէն,  
— Չպարփակուող, —  
Ովկիանական կոհակ իբրեւ, տարածութիւն եւ ափ փնտռող՝  
Մագաղաթեայ էջի վրայ լոյս ու խռովք կը շարագրէր:  
Ան կը գրէր՝  
Գիր ներկայի, գիր անցեալի, ապագայի.  
Գրիչ բռնած,

Իմաստութեան տանարի մէջ մոգսկետացած,  
 Բոցեր հագած, հո՛ւր զգեցած քարտուղարի պէս Աստուծոյ՝  
 Կը գտէր գորշ Առօրեայէն,  
 Այն՝ որ պէտք էր մնար մինակ, մնար խորունկ, մնար անանց:  
 Կորնչական ժամանակէն ան կը գտէր  
 Ոսկի ու բոց ակնթա՛րթը յանբժութեան:

Պզտիկ ձեռքի տկար թուղթով, բարակ ու թոյլ,  
 Զագատեցա՞ւ ու չագատե՞ց աստուածներն իր,  
 Մա՛րդը, մա՛րդը, մա՛րդը նորէն,  
 Սուրի բերան ժամանակէն:

✱

Ոչ ոք ունի ձեռք այդքան խոր, այդքան բերրի,  
 Այդքան գիտուն.  
 Կ'արտադրէ ան  
 Խաղաղութեան ու հանգիստի կահկարասի.  
 Կ'արտադրէ զէնք, կ'արտադրէ հուր,  
 Բաներ շէնդ, բաներ ամուր:  
 Ծովուն ընդդէմ կը վարէ նա,  
 Ու երկաթին իսկ ծանրութեան՝  
 Կը սորվեցնէ նստիլ օդին, պարապներուն անգամ վրան:  
 Իր մատներուն,  
 — ձարտար, նկուն, —  
 Արանքներէն, վարար-վարար  
 Կը բխին գիւտ ու կառուցման ոճեր բազում,  
 Հարստութիւն:

Բայց ո՞վ ուրիշ շինեց անվերջ այսքան քաղաք,  
 Այսքան պալատ, բնակարան,  
 Այսքան սփինքս եւ այսքան բուրգ,  
 Արձան,  
 Դամբան:

Ո՞վ արթնցուց անշարժութեան ծանր նինջէն,  
 Երկրի տակի մա՛րթ օրօրէն,  
 Այսքան մետաղ, ոսկի, արծաթ,  
 Ու յրջադէմ այսքան երկաթ:  
 Ո՞վ մօտեցաւ ծովուն սրտին, սփանջելի ու առեւիլի,  
 Բերաւ մարգրիտ ականակիտ,  
 Խորունկներուն խոր զգացման եւ խոր խռիւն  
 Աղերբն այդ բազմավնիտ:  
 Տիեզերքի միլիոն-միլիոն արգանդներուն,  
 Ամէն տարրի իգարանին  
 Ո՞վ հայթայթեց անութիւններ ամէն տեսակ,  
 Սերմեր արեան, սերմեր մտքի,  
 Երագանքի ու արուեստի:

Ո՞ւր չհասաւ ձեռքը մարդուն,  
 Ո՞ր խորութեան, ո՞ր գագաթին:  
 Քարայրներէն ու քարայրի խաւարներէն չի՞ մեկնիր ան՝  
 Մշակելու հոգւոյ ընտիր ցորեաններով՝  
 Տեւողութեան ու տարածքին փշոտ նամբան:  
 Զէ՞ անիկա ցեխը միթէ վաղնջական, սկզբնական՝  
 Դա՞ր-դա՞ր ձգուող, գի՛ւտ-գի՛ւտ մեկնող,  
 Հուրը դէպի ստեղծական,  
 Ա՞րփը դէպի աստուածացման:



Ով արարած, քառասական փուլէ անցած,  
 Անցած փուլէ ցուրտ ու ջերմի,  
 Մեղքի եւ միշտ խորունկ գոչման՝  
 Օր մըն ալ դուն  
 Սուտը գտար.  
 Սուտը, սուտը, որ երբ չկար՝  
 Ճշմարտութիւն երբեք չկար.  
 Սուտին գիտով դուն մա՛նաւանդ նիշդը գտար.  
 Ճի՛շդը, նի՛շդը,  
 Հի՞ն մեր կեանքին ցուրտ ու դաժան երածիշտը:

Պատկերն ես դուն Արարիչին, ոչ թէ մարմնով,  
 Նւնոյնն ես իր, ոչ թէ նիւթով,  
 Այլ նմանն ես՝  
 Ստեղծական քու հակումով:  
 Բջիջիդ մէջ իւրաքանչիւր՝  
 Նստած է ուժ ստեղծումի, ու եղծումի,  
 Ու մեկնումի...

Բաղանձներով դուն ո՞ւր չկաս,  
 Դուն չես հասած ո՞ր կարեւորն,  
 Ո՞ր միջոցին մէջ չի յաժիր երազդ քու.  
 Ո՞ր գագաթնէն ըրած չես դուն սիրտդ ջրանցք,  
 Եւ գործդ քու եթէ դիզեմ, ո՞ւր չի հասնիր,  
 Զի՞ ցածնար սեզ Հիմալայա լեռնն անգամ,  
 Գործքերդ ամբողջ չե՞ն մօտենար երկինքներու բիլ կապոյտին...



Աշխարհն ահա ծայրէ ի ծայր Տրովադա՝  
 Դուն Աֆրիլէս, դուն Ողիսես,  
 Ակամեմոնն հուժկու արքայ,  
 Ստեղծումիդ օրէն ասդին,  
 Դուն կը կուտիս, դուն կը փնտռես,  
 Եւ չես գտած, — պիտի գտնե՞ս, —  
 Սրտիդ գաղտնի, քա՛ղցր տեղէն

Առեւանգուած, հեռո՛ւ տարուած,  
Բոյր ու թրթիւ, բոք չհեկնան...

Շուքըդ ահա կէտ մը կեանքէ, կը նուանէ՛  
հորուքիւններ տիեզերքի-  
Շուքը սրտիդ՝  
Մէջն է առեր հազա՛ր-հազա՛ր սառած սատուած,  
Դիակ դարձած հազա՛ր տեսակ անմահութիւն.  
Մէջն է առեր՝  
Ուրի՛շ յոյսեր, ուրի՛շ դժբախտ,  
Ճշմարտութեան ուրի՛շ սատուած:

Քու նայուածքիդ մէջ կը ծփան  
ժամանակէ եւ անունէ ա՛յլ գերծ բաներ,  
Տարածքներու իմացումէն անջատ բաներ,  
Ազատ բաներ,  
Հեռու բաներ...

Բառք ո՛ր որ կրնայ հասնիլ, դուն կը հասնիս,  
Կ'անցնի՛ս նոյնիսկ:  
Թեւ որ ո՛ր որ կրնայ թեւել, դուն կը թեւես,  
Ու կը թեւես բի՛ւր աւելին:  
Թիւ ու բոյրի,  
Հաշիշներու,  
Աղօթական խնկացումի, վերացումի  
Երա՛գ-երա՛ց էակ ես դուն.  
Հրա՛շք-երա՛շք իմաստներու  
Եւ լուսեղէն լուս մոգութեանց ակունք ես դուն.  
Գրոց խորունկ՝  
Արարչական դրախտարժէք դրամներու.  
Եւ պահարան՝  
Զկարդացուած, չպարզուած, անմահական դեռ մութեակի:

\*\*\*

Կ'որոնես, մա՛րդ, ինքզինդ յար. —  
Սոկրա՛տ ես դուն.  
Հելլէնական կապոյտներուն մէջը շնչող մտքի արեւ,  
Զո՛հ բնդարձակ,  
Ճանաչումի սուրբ ուղեւոր,  
Նախորդի նախա-Յիսուս:

Տե՛քա՛րք ես դուն, մտախոռով ու մտափաջ.  
Արթուն, գիտուն՝  
Կը կասկածիս, կը տագնապիս, կ'որոնես դուն.  
Դատողական սուր կացինով կ'ոչնչացնես ինչ որ գոյ է,  
Կը թուի գոյ.  
Իմացական բրիչներով կը փորես փոս լինելութեան,

Ու չես հանգչիր,  
Մինչեւ բրիչն այդ չբախի  
Տարակոյսի վերջին ժայռին, կարծր ու անբեկ:  
Ու բախումէն տարակոյսին ու մտածման կ'ելլէ խալ ձայն՝  
Թէ դուն գոյ ես,  
Գոյ է աշխարհ, գոյ է Աստուած:

Դուն Փաստայն ես ու կը փայս՝  
հռով լեցուն, խղով լեցուն, սրտով լեցուն,  
Թիլին վրայ ըստակ ու ձիգ,  
Որ կը տանի մանրագոյնէն մեծագոյնին.  
Առկախ ու պիրկ բելին վրայ, ասի մը տեղէ անեռ՝ն մեկնող՝  
Դուն կը տեսնես, կը զարհուրիս, կը սփանչանաս,  
Կը տառապիս, կը խենքսմես...

Բայց Տանդէ՞ չես, ու Հումերոս, ու Վիրգիլիոս,  
Ռու Շէյքսպիր,  
Կէօթէ, Նիցչէ, ու Թոլսթօ.  
Աստուածախոհ Նարեկացի...

Բայց ո՞վ չես դուն.  
Ճղնիւ, չնչին արարած ես միայն միթէ,  
Ոնրագո՞րծ ես, խարեբա՞յ ես միայն միթէ,  
Ասոնց կողքին,  
Իմացութեան ու զարգացման ո՞ր անկիւնին վրայ կանգնած  
Մեծ կուռք մը չե՞ս:

Օ՛, բու հոգիդ...  
Զայն չեն խօսիր, գայն կը լռեն,  
Ծովածաւալ լուսիւնով գայն կը լռեն  
Ու կ'ընծայեն...  
Զեն աղնատեր ոչ մէկ ձայնով,  
Թշուառութեամբ:  
Լռել, լռել...  
Ա՛յս է ձայնը ճշմարտութեան,  
Ա՛յս է խօսքը աստուածներուն...  
Լուսիւնը մաս կը կազմէ այրութենիդ,  
Բառարանիդ.  
Լուսիւնը մարդուն, հրկէզ մարդուն,  
Վսեմ խօսքի ամենամեծ Դեմոսթենէս...

✱

Դուն ես գիրը ընթերցումի իմ փորձերուս,  
Դուն՝ որ հիմա կը քանդակես ողջ անձիս մէջ,  
Հիացումի խոր ու մաքուր ձայնարկութիւն.  
Կը սփանչանամ ես բու վրայ.  
Կը սփանչանամ՝



Ինքզինքդ յար հակասելուդ,  
Պզտորելուդ, պարզուելուդ,  
Միշտ եռալուդ...

Ձախ աչքիս դէմ թգուկ ես դուն,  
Եւ աչքիս դէմ՝  
Աստուածային արդէն գերմարդ:  
Ես կը տխրիմ, երբոր պատմէ՛ քեզ աչքս ձախ,  
Երբոր կ'ըսէ՝ —  
«Ս'նծ քաղաքի շուկան ես դուն,  
Խօսներու աղտ, հաշիւի ապտ,  
Ազտա՛տ շուկան՝  
Ուր իջած ես միւիոն դէմքով,  
Միլիոնացա՛ծ անուններով,  
Սակարկութեանց համանուագ յօրինելու:  
Գէր մըն ես դուն՝  
Կարագներու, բամպակներու եւ մետաքսի երկրպագու-  
Նիհար մըն ես՝  
Փաթաթէսի, չոր լուբիայի ցուրտ ծնրագիր,  
Աղօթասաց՝  
Ճարպ հալեցնող ուժիւի-  
Բրինձներու եւ կորեկի կարծես դայիր:

— «Շուկան ես դուն, շուկա՛ն, շուկա՛ն,  
Ուր միայն կան՝  
Բերրի սուտեր,  
Ստախօսներ:  
Շուկան՝ ուր կան  
Մոլեռանդներ՝  
Հին հագուստի, նոր հագուստի-  
Տաղերգուներ՝  
Հին կօշիկի, նոր կօշիկի-  
Ասմանէրդներ, կարն ու երկար՝  
Տալարներու, սքերլիկի ու ֆրանքի,  
Հոգի կրծող ամէն տեսակ տըվիզներու:  
Շուկան՝ ուր կան  
Տեսարաններ մայրեցման,  
Գողեր արդէն հին սրիկայ,  
Ռերագործներ բազմավաստակ,  
Յորելիանի ալ արծանի:  
Վեթերաններ՝  
Թթու կեանքի, լկտի՛ բարբի...»

Աստուածներու բացակայ վայր Շուկան ես դուն,  
Մայրէ՛ ի ծայր հոգի ծածկող, երկի՛նք ծածկող,  
Աստուա՛ծ ծածկող,  
Ահեղ հացով ահե՛ղ շուկան...»



Եթէ միայն հացի յատուկ, սուտի յատուկ, մահուան յատուկ  
Գուն արարած մը ըլլալիք,  
Բանջարեղէն-մարդ ըլլալիք՝  
Քեզ տեսելով կը մեռնէի առջի օրէն.  
Կը մեռնէին հրեշտակներ, աստղեր անթիւ,  
Երկինքներու, անհուններու, առեղծուածի կալուածաւոր՝  
Բիւր աստուածներ:

Աչքը իմ աչ կը վկայէ, վկայեց միշտ՝  
Թէ կէսդ քու կը բռննի լոկ ալիւրի մէջ,  
Ու սուտի մէջ,  
Նկարագրի խոր տիղմի մէջ.  
Այսուհանդերձ կէսդ միւս ու կարեւոր՝  
Ծնունդ կ'առնէ, կը սնանի լոկ արեւով,  
Լոկ երկինքով, լոկ երազով:  
Միայն կեանքով,  
Աստուածային միայն տեսնող.  
Ան կը շրջի երկրին վրայ, անվերջ, ցմա'ն՝  
Գերերկրային մաքուր-մաքուր ստուերներով...

Կը լմնաբ սէրս շուտով,  
Ձէր աներ միշտ, չէր հրդեհուեր հանդէպ քեզի՝  
Ձարն ու մութը, ցուրտը անվերջ, ցեխը անվերջ  
Ձրնէիք դուն եթէ աստղձ,  
Նոր շէնքերու, նոր կրակի եւ նոր լոյսի,  
Յաւերժական նկարագրի ու վերելի:

Հակասութեանց, — միշտ գեղեցիկ, —  
Երկուութեան, — միշտ կենսական, —  
Աստուածն եւ դուն երկրի վրայ,  
Աստուածը միշտ անհրաժեշտ:

Շուք կը ձգես քու ներկայէդ  
Գայիքներուն, հեռու, հեռու,  
Խորհուրդներուն անչափելի:

Օ՛, դուն, օ՛, դուն,  
Երկրագունտն եւ, անոր արդին.  
Կը գարնուիս, հոգւով, մարմնով,  
Հակասագրով՝  
Ովկիաններուն, մրրիկներուն, լեռնապարիսպ բարձունքներուն,  
Անդունդներուն...  
Կը գարնուիս՝  
Երկինքներուն, անհուններուն:



Պատկեր մը կայ աչքերուդ մէջ, բիրիդ ետին, բիրէդ անդին,  
 Սրտիդ մութնով գամուած այնտեղ.  
 Եթէ կին ես, այր մըն է ան, եթէ այր ես, կին է կիզիչ.  
 Այդ պատկերին կրնաս յաճախ կեանքդ գոհել,  
 Զոհել կեանքը ուրիշներուն,  
 Զոհել փառքեր ու կայսրութիւն,  
 Արքայութիւնն ճոյնիսկ վերին.  
 Որքա՞ն սիրոյ, որքա՞ն մոլի ու մոլեռանդ էակ ես դուն՝  
 Եթէ սիրես որեւէ բան. —  
 Կին ու կրօնք, հայրենիք եւ ազատութիւն,  
 Գեղեցկութիւն, գեղեցկութիւն...

165-2200  
591

Զոհել, գոհուիլ...  
 Զոհակրօն՝  
 Հին օրերէդ մինչեւ այսօր,  
 Զրհեղեղէդ մինչեւ այսօր,  
 Բարեխոնէդ մինչեւ այսօր.  
 Ի՞նչ չես գոհած, զո՞վ չես գոհած՝  
 Հսկայական քու սէրերուդ:



Սէրն է մեծը, —  
 Եւ դուն Սէ՛ր ես.  
 Վէրքն է դեղը մեռնող սրտին, —  
 Եւ դուն Վէ՛րք ես.  
 Երկինքներուն գազտնի դրան՝ հաւատքն ու կամքն են բամալին, —  
 Եւ Սէրէն ետք,  
 Խորհրդաւոր այդ գոյգ բառն ես:

ԵՂՈՒԱՐԳ ՊՕՅԱՃԵԱՆ

Ժ. Ա. Թ. Թ. Ա. Բ. Ե. Ա. Ն

ՕՓԸՆ, ՓԼԻՂ...

— Զբոսի՞ր քեզի, չե՞մ ըսած միշտ, որ կանուխ շարժինք ջիւ մը, ահաւա- սիկ ինկանք դարձեալ այս նախիրին մէջ:

— Կանուխ, կանուխ, բայց որքան: Յետոյ ի՞նչ օգուտ, երբ ալ դաս՝ այսպէս է մեր այս ժամերուն:

— Օգուտը այն է, որ չենք ճղմուիր գոնէ պահածոյ դրուած սրտերու նման, սապիլլի կոչուած ձեր այս թաւալուն դազազներուն մէջ:

— Դազա՞՞զ, գերեզմա՞ն... միշտ նոյն խօսքերը, նոյն դանդառները... Օ՞, Հէրրի, Հէրրի, պէտք է այլեւս վարժուիս, տարի մըն է նիւ Եօրք ես, պէտք է այլեւս վարժուիս...:

— Վարժուի՞մ... վարժուի՞մ... նորէ՞ն այդ խօսքը...: Բայց Քեթի, հապա դո՞ւն, դո՞ւն երբ պիտի վարժուիս, ե՞րբ պիտի սորվիս, քանի՞ անգամ կրկնած եմ քեզի, որ ես Հէրրի չեմ, իմ անունս Հրայր է, Հ-ը-ը-սա՛յր...:

~\*~

Եւ այսպէս, հետու ու հին աշխարհէ մը, աւազանի իր անունին կա- տաղօրէն կառչած աղայ մը եւ այս նոր ցամաքամասի այս նոր քաղաքին չես գիտեր որ աւազանին ո՞ր ջուրերուն մէջ Քեթի անուն մկրտուած աղջիկ մը, կատակելով, վիճելով, իրարու հակաճառելով, Մանհաթընի Կրանտ Սանթրալ կայարանէն ներս մտան, քաշող, քաշքշող ու հրմշտկող ամբոխի մը հետ, ստորերկրեայ կառաւարը անձերու համար:

Այո, իրաւ էր, Քեթի իրաւունք ունէր, ինք չէր վարժուած, ինք չէր հաշտուած այս շրջապատին: Ինք նոյնիսկ չէր վարժուած իրեն՝ Քեթիին...:

Տարի մը առաջ այս քաղաքը հասած էր Հրայր, ուսումի համար (կար- ծես ուրիշ տեղ ուսում տուող չկար), տարին բոլորած էր, բայց ինք տա- կուին ստորակէտով մը իսկ յարմարութիւն չէր գտած իր այս նոր քաղաքի մարդոց խօսելու, շարժելու եւ նոյնիսկ ամէնէն չնչին բաներու ամբողջ ոճին հետ: Տարին բոլորած էր, բայց ինք տակաւին վիտա-երեսակայական Փիլիժե- րուն մէջ ցոյց տրուած անծանօթ, դաժան մոլորակներէն մէկուն մէջ ինկա- ծի պէս էր կարծէք: Մուռ էր, սխալ էր, կեղծ էր կարծես այստեղ ամէն ինչ: Եւ ասիկա անաջին օրէն, օդակայան իր ոտք դրած առաջին վայրկեա- նէն ի վեր:

Անպէտք, անիմաստ, շունչ հատցնող, յուսալքող տարածութիւններ: Յետոյ՝ այդ ամէնուն մէջ ցիրուցան նետուած իբրեւ թէ չէնքեր, զամբարան- ներու նման, առանձին, թշուառ...: Յետոյ, յանկարծ, կրաղիւսի հրէշա- մարմին ու ահազու անտաններ, որոնք կարծես բուսած են միայն երկինքը խոցելու համար:

Այդ ամէնը դեռ ոչինչ: Հապա արե՞ւը, սա մեր ամէնուս յայտնի բու-

բի, տաքուկ արե՛ւը... Տարի մըն է հոս է Հրայր ու տակաւին չէ կրցած ճշդէլ, որ այս երկրին տրեւը ուրիշէ՞ կը ծագի եւ ո՞ւր մար կը մտնէ: Գիտէ՞ միայն այլեւս, որ այս մէկը իր դիտցած արեւներէն չէ երբեք, իր գիտցածին մէկ հեռաւոր ծանօթը, շատ հաւանաբար եւ կամ անոր անհարազատ մէկ ազգականը, սակայն երբե՛ք, երբե՛ք իրաւ արեւ մը:

Յետոյ... Ի՞նչ յետոյ: Ինչ Ի՞նչ բաներու կ'ուզէին, որ վարժուած ըլլար: Այստեղի մարդոց իրարու հետ ըլլալու, իրարու հետ յարաբերելու քաղաքավար ու ծպտուած խաղախուժեան՝, կեղծութեան՝, Ինք չի խօսիր տակաւին հայ, հայութիւն, ընկեր, բարեկամ ըսուած բաներուն ահարկող բացակայութեան մասին: Իսկ չէ՞ տեսած ամէն օր, չէ՞ նկատած, որ ամէն անձ, իւրաքանչիւր արարած այստեղ կ'ապրի ինք իրեն համար, ինքզինքով միայն: Ձէ՞ անդրադարձած, որ ամէն ինչ սկիզբէն դասաւորուած է այնպէս՝ որ մարդ ոչ ոքէ կ'ախտւմ չունենայ, ոչ ալ ուրիշը՝ իրմէ: Իսկ եթէ յանկարծ բանի մը պէտք ունեցաւ, կայ փաստորանը, ապահովագրութեան ընկերութիւնը եւ դրամատունը: Ալ Ի՞նչ ընկեր, բարեկամ, ամուսին, զուակ կամ ազգակից... Ի՞նչ բանի համար:

Այս ամէնը ըսէ՞ր հիմա իր կողքին քալող ու աղջկան, որ թիչ տաաջ վարժուելու-չվարժուելու քարոզ կը կարգար իրեն:

...Այս աղջիկը, այս ֆեթի՞ն: Ճանչցած էր զինք համալսարանը: Պարտաճանաչ ու ճշգրտագոյն ուսանողուհի մըն էր, որ դասերուն կը հետեւէր շատ ուշադրաւ ու ինքնատիպ բժախնդրութեամբ եւ, այդ ջանասիրութեան կողքին՝ շուտով մտերմանալու եւ աւելի շուտ մտերմութեան սահմանէն քայլ մը անդին ցատկելու աւելի ինքնատիպ, կործէք բնածին յատկութեան շնորհիւ, բանակ մը ամբողջ հետեւորդ ունէր համալսարանին մէջ...:

— Ի՞նչ է, Հըրբէյր, Ի՞նչ եղաւ քեզի. — յարեց յանկարծ աղջիկը, — յես խօսիր երբեք, խորատուզուած կ'երեւիս:

— Ոչինչ, անարամազիւր պարզապէս... այսօր տոսնձին կը զգամ, — ըսաւ Հրայր շտր:

- Օ՛հ, Հըրբէյր, Հըրբէյր, որքան կը ցաւիմ, որքան մեղք է քեզի...
- Մե՞ղք... ինձի՞, — յանկարծ փրփրեցաւ Հրայր, — մեղքցիբ դուն քեզի, դուն... դուն այդ քո... օ՛հ, թող, չիտօնեք:
- Ե՞ս... Ե՞ս, յետոյ Ի՞նչ... ոչ, խօսէ՛, ըսէ՛:
- Կ'ըսէի մի մեղքնար ինձի, այդքան...
- Ո՛չ, ըսէ՛, լեզուիդ վրայ բան մը կար, ըսէ՛, վերջացուր...
- ... Կ'ըսէի... կ'ըսէի պարզապէս... պարզապէս... է՛, մոռցիբ, ոչինչ...:

Ի՞նչ ըսէր հիմա, ինչպէ՞ս բացատրէր: Կոչրի մը ինչպէ՞ս լուսին լոյսը բացատրել եւ կամ խօսիլ երկինքի կապոյտին մասին: Մնաց որ, այս աշխարհի մարդիկը վարժուած են զիրար հասկնալ միտի, միանի միջոցաւ միայն եւ արժէք չեն տար ո՛չ երկինքի կապոյտին, ո՛չ լուսնի լոյսին, ոչ ալ որեւէ բանի, որ շահ ու սոկոս չունի:



Այսպէս կ'իջնէին ստորերկրեայ կառուարին անվերջանալի սանդուխներէն: Առաջին օրէն Հրայրին այնպէս կը թուէր, որ մեքենական այս սանդուխները երկրազուստը կը փորեն, կ'իջնեն մինչեւ խաւարներուն անվերադարձ, վերջին խորերը, ուրիշ այլեւս ստատանն միայն դիտէ ինչպէս գուրք ելլէլ:

Բարեկուն մը ամբողջ բազմութիւն՝ եկած ու խոնուած է կայարանի նը-  
կուղին խոնաւ, մզլոտած կամարներուն տակ: Երկրագունտի շրջ ցամաքե-  
րուն դեռ չլսուած, չյայտնուած վայրերուն, ու քարտէսին չազիւ Ծանօթ,  
չես գիտեր ինչ միջօրէականներուն խոնաւտեսակ ու խոնաւդոյն տեղերը,  
իրենց սեւով, գեղինով, թուխով ու թխագոյնով՝ եկած ու կուտակուած են,  
ճահիճի մը պէս, Մանհաթընի այս նկուղին մէջ:

«Եւ ասիկա Ամերիկա է, եւ ասիկա Նիւ Եորք է, — մտածեց Հրայր,  
այսինքն թէ՛ նոր քաղաք, — բայց, Աստուած իմ, ինչքան շուտ է հինցած  
այստեղ ամէն բան, ինչքան շուտ է խաթարուած, նեխած...»:

Հասաւ վերջապէս եւ կառախուսքը, եօթը զլխտնի դեւ մը կարծէք իր  
ճիւղադային աղմուկով: Եկաւ-չասաւ երկրագունտի փորտիքներէն յանկարծ  
դուրս ցցուող, աղբաթաթախ հրէշի մը ալք վիրաւորող, սրտխառնուք տը-  
ւող կնկարտութիւնով: Յստակութիւն, մաքրութիւն ըսուած բաներուն կար-  
ծէք զարաւոր թշնամիները, դարերու ամբողջ իրենց ոխն ու առեւտրութիւնը  
մազձի մը պէս ու մազձային դոյներով բերած-թափած են կառախուսքի ըտ-  
լոր կառքերուն վրայ: Մտտած են, կնկարտած են ինչ որ դոտած են ողորկ  
ու յստակ, մասնաւորի նոյնիսկ անպիղծ, անարատ տարածութիւն չձգելով  
որեւէ տեղ:

— Պատանիներ են, — յարեց Քեթի, ինքզինք կարծէք արգարացնելու  
չեչտով, — պատանիներ են, այսպէս կը դժեն: Կրաֆիթիմ արուեստագէտներ  
կ'ըսենք իրենց շատ յաճախ, շնորհայի դժողներ կան մէջերին, կը գրեն, կը  
գծեն... այսպէս կ'արտայայտուին...

— Հապա օրէնք, կանոն, կրթութիւն...

— Ի՛նչ, այստեղ այսպէս է, այսպէս մեծցած են, այստեղ ազատ  
են...

— Օ՛, կը տեսնեմ, աչա՛ս են, — հեզնեց Հրայր գտնութեամբ, —  
այս լսկոտները օրորոցէն ազատ են եւ կրնան օր մը երկրագունտը ամբողջ  
մրտեկ, իրենց այդ ազատութեամբ...

Բայց ի՛նչ ըսած էր, ի՛նչ կրցած էր ըսել Հրայր, որ այսպէս յանկարծ  
խոթողեցաւ, թթուեցաւ Քեթիին դէմքը. միւսլիւսմանի մը Մոնամմէտին կար-  
ծէք չայհոյած ըլլար, այնքան դաժանացաւ աղջիկը: Եւ տեսակ մը զուսպ,  
բայց ճանկոտող արհամարհանքով.

— Ու՛՛լ, — ըսաւ, — դիտե՛՛ս, այստեղ Ամերիկա է, իրենց երկիրն  
է, թող ազատտեն, թող մրտեն, քեզի ի՛նչ... դուք ձեր Արեւելիքին մէջ...  
Արեւելիքի մարդիկը... Օ՛, չխօսինք այդ մասին, չխօսինք, օ՛՛՛՛լ...:

Ու քիչ ետք, երբ կառախուսքը ճամբայ ելած էր դժոխային նոյն աղ-  
մուկով, բոլորովին տարբեր Քեթի մը մօտեցուց դէմքը Հրայրի ականջին ու  
այս անգամ գորովալիբ, քաղցր լեչտով մը.

— Հըբրէյթ, ինդրեմ, շնեղուիս: Ան՛՛մ ըսած քեզի, որ այդ բաները  
մոռնաս: Քեզիցիկ բա՛ն կը պակսի այս քաղաքին մէջ, ինչո՛ւ միայն տգեղու-  
թիւն, ազոտութիւն կը տեսնես:

Եւ իր խարտեակ քնքշութեամբ աւելի եւս սեղմուելով Հրայրին՝

— Քըմ-ան, — ըսաւ, — մոռցի՛ր բոլորը, այսօր իմ տունն երթանք,  
Պուլը պիտի գայ, գիտե՛՛ս Պուլը, այդ միւս ընկերս, զաւաթ մը կ'առնենք,  
միտսին կ'ըլլանք, քիչ մը կը փոխուիս:

— Պո՛ւլը... Օ՛, այո, այդ միւսը...: Ենորհակալ եմ հրաւերին չա-  
մար, որքա՛ն պիտի ուզէի: Բայց ոչ այսօր: Այս տրամադրութեամբ կրնամ  
ձեզ ալ խանդարել...:

Քեթի ուսերը թօթուեց, գինչպէս որ կ'ուզես ըսելու պէս, եւ, Քուինդ-պորո կայարանը երբ հասան:

— Պայ-պայ, Հրրբէյր, պայ-պայ, թէյք քէր...:

Քեթի դուրս ելաւ, ամբոխին մէջ մուրեցաւ, տանց նոյնիսկ անգամ մը եւ նայելու:

Հրմշտուկ մը, իրարանցում մըն ալ ծայր տուաւ վերջին կայարանին մէջ, ուր պիտի իջնէր: Կառախումբի ընդերքներուն ծուարած քիչ առաջ-ւայ անխօս, անժպիտ ու կարծես թէ կոյր, կարծես թէ խուլ արարածները, հիմա յանկարծ դուրս պրծելու խուճապին են մատնուած, մէկը միւսէն առաջ անցնելու, մէկը միւսէն արագ շարժելու անասնային կիրքով մըն են վարակուած:

Հրմշտուկէն ջղայնացած հախոնցի մը (կրնար նաեւ չինացի ըլլալ) իր միտքանկ հաստու լեզուով, հաստու, միտքանկ բարկութիւններ սկսաւ դուրս տալ, յետոյ դառնալով իրեն:

— Հիբ մօ սիվիլիզացիոն սրբ, մօ սիվիլիզացիոն, — ըսաւ ու հրուեցաւ, հրմշտուկեացաւ-գնաց:

Յեղճ մարդ, տակաւին չէր անգրադարձած, որ այդ սիվիլիզացիոն ըսուածը սապիլէյի այս սանդուխներէն չէր կրցած վար դալ ու մնացած էր մտկերեսներուն վրայ, այն ալ այնքան մակերեսային, այնքան ծպտուած կերպով:

Գուրը արդէն համատարած մութ էր: Մութ էր ու անձրեւ, պզտոր, լպրծուն:

«Այս ի՞նչ տեսակ ամառ է, այս ի՞նչ եղանակ», — մտածեց Հրայր հայ-հոյանք մը հաղիւ գոպելով: Այս քաղաքին մէջ շահուցուած, չբացատրուած անթիւ հարցերու կարգին, զինք ամէնէն աւելի ջղայնացնողը, ամառ անունը իտարալատութեամբ իւրացուցած այս եղանակն էր: Ամառ եւ մշտնջ, ցեխապատ երկրէնք: Ամառ եւ անձրեւ, հանապազօրեայ դաւադիր անձրեւ:

Եւ յիմարարար իջնող այս անձրեւին հետ, իւրաքանչիւր փողոցի իւրաքանչիւր անկիւնին ետին, դարանակալ սպասող առանձնութիւն մը այսօր: Սովահար, հրէշային մերկութեամբ առանձնութիւն մը, որ յամառքէն կը հեռուի Հրայրի քայլերուն, փողոցներու ամբողջ երկայնքին: Կանցնի առաջ, կու գայ ետ, կը կառչի իր ուսերուն, կը փաթթուի սոքերուն... Այսօր ճար չկայ, այսօր մերկ, սովահար, այս հրէշային առանձնութիւնը Հրայր տուն պիտի տանի: Պիտի տանի տուն ու նստի հետը, ընտելացնէ զայն, իր սենեակին շորս պատերուն մէջ:

Թրջուած էր, ջրաթաթախ սպունգի նման՝ տուն հասնելէ շատ առաջ: Այս զգուշի հեղուկը եթէ նոյնիսկ մինչեւ սկիորները թափանցած ըլլար, Հրայր դարձեալ պիտի դժուար ըմբռնէր, որ Յուլիս մը այսքան խորդախ, այսքան կեղծ ըլլար: Որ ամառ մը էլլէր եւ այսպէս ձմեռներու պոսնիկ մը դառնար: Մինչեւ հասաւ տուն, անձրեւը իր սուկորներուն անցած էր, սակայն ինք ալ այս ամառուան մինչեւ ետքը պորտը թափանցած...:

Սանդուխները լուսաւորուած կ'ըլլային՝ մթութեան հետ ամենասերտ բարեկամութիւն կնքած լապտերի մը միջոցաւ: Հրայր ի զուր փորձած էր աւելի ուժեղ լոյս մը գետեղել այդ լապտերին մէջ, անդրդուելի յամառութեամբ մը, այդ նոյն լապտերը կը վերադառնար իր դուռ ու կոյր ինքնութեան, օրը իրիկուն չեղած: Շատ ուշ ըմբռնեց, որ այդ այդպէս էր՝ մութի դաշնակից գործերու համար:

Եւ այդ իրիկուն, իր յարկարաժինին դարձուածքը երբ հասաւ, Հրայր պահ մը ընկրկեցաւ, կանգ առաւ: Արտատովոր բան մը կար, սանդուխնե-

րուն գլուխը, Ղերբ, իր դրան գիմաց : Սանդուխներուն կիսամութին մէջ լոյսի խուրձ մը, պայծառութիւն մը կարծես, մարդու կերպարանք առած : Լոյս սի, մութի խափ մըն էր արդեօք, տեսիլք մը արդեօք, կրկնեբեւո՞յթ մը, թէ... ուրուական :

Նլաւ, տեսաւ : Ո՛չ ողի էր, ոչ ալ ուրուական : ... Աղջիկ մըն էր պարզապէս, ճերմակներ հազած :

Զինք որ հշմարեց՝ աղջիկը ինքն ալ ալայլեցաւ, քաշուեցաւ մէկ կողմ եւ սկսաւ միւս յարկաբաժինին դրան զանգակը զարնել :

Բայց այս աղջիկը, այս լուսեղէն, աննիթական աղջիկը ի՞նչ գործ կրնայ ունենալ քովի վարձակալին հետ, այդ անամբողջ, կիսամարմին արարածին հետ :

Ճաղատ ու կարճ մարդ մըն էր քովի նոր վարձակալը, անդրերկրային ինչ որ էակներ յիշեցնող ճաղատութեամբ եւ այնքան կարճ, կարճութեւէ այնքան ալ պակաս, որ քիչ առաջ ճերմակներով աղջիկը երբ սկսաւ դրան զանգը տալ, Հրայր յանկարծ ձիւնապիտակին առասպելները յիշեց, կարծես Պլանչ Նեժը տեսաւ, որ եկած էր թղուկներուն մօտ ապաստան գտնելու :

Այդպէ՞ս էր արդեօք... Առասպելին ձիւնասպիտակին էր, այսպէ՛ս, իր դիմաց, ճերմակներով պարուրուած, իսկ դրացի մարդուկն ալ նոյն առասպելին թղուկներէն մէ՞կը արդեօք, որ կախարդական չես գիտեր ինչ խաղերով եկած-ինկած էր այստեղ :

Կախարդանք կամ ոչ, կարելի չէր բնականոն անուանել ինչ որ սկսաւ տեղի ունենալ այս յարկին ներքեւ այն օրէն ասդին, որ լերկ դուխով այդ դաճած մարդը եկաւ այստեղ բնակութիւն հաստատեց : Յաղաղութիւն, լուսութիւն անհետանց մերժնականապէս, սանդուխներէն սկսած : Աստիճանները խաւարեցան, նսի՛ խորհրդաւոր կիսամութով մը, յետոյ՝ մէկ օրէն միւսը կարծէք բանուկ փողոց մը դարձան : Գիշեր ըլլար թէ ցերեկ, անծանօթ մը կը հանդիպէր միշտ աստիճաններուն վրայ եւ կամ կարճուկին դրան դիմաց : Եւ նոյնիսկ դիշերուան ամենախոր ժամերուն կասկած ներշնչող իրարանցումներ, անհանդարտութիւն, շատ յաճախ աղմուկ սկսաւ ըլլալ եւ շատ յաճախ տեսակ մը ճիշեր, տեսակ մը խորունկ, խուլ աղաղակներ հանդիսա ու քուն խանգարել սկսան :

Հրայր մտաւ տուն՝ քաղաքաւոր շարժում մը ուրուադձեւէ հտք ճերմակ աղջկան դիմաց : Կղպեց դուռը կրկնակի, անցուց երրորդ կղպանքն ալ... Պատուերուած էր իրեն այդպէս, առաջին օրէն, երբ Նիւ Նորք հասաւ, զգոյշ ըլլալ, շատ զգոյշ, լաւ կղպուի... կղպուի : Յետոյ, այսօր, այս աղջիկը... ի՞նչ գիտնար... աստիճաններուն վրայ, այդպէս մինչեւ ոտքերը ճերմակներով Ծածկուած... :

Բայց ի՞նչ օղուտ բանալի, կղպանք, ինքզինք այսպէս պատի, պատնէչի, նոյնիսկ պարիսպի ետին այդ միւս տեսակ մը անապահով զգալուն դիմաց... Այս իրիկուն Հրայր դարձեալ ինքն իր անձէն դաշտապանուելու, ինքն իր դէմ կղպուելու պէտք կը զգայ : Հիմա դարձեալ իր աթոռէն, իր սեղանէն, մահճակալէն, իր սննակին շորս պատերէն եւ ինքն իրմէ, ինք իր անձէն դուրս փախչելու այդ տեսակ մը խուճապ տուող պահանջը եկած-կտուած է մորթին, թափանցած մինչեւ էութեանը պաղտնի խորերը... :

Գոնէ հեռաձայնի սա զղուելի գործիքը անգամ մը հնչէր, դոնէ մէկը զինք փնտռէր, բարեկամ մը, թող թշնամի մը իրեն հետ գոնէ հայերէն երկու նախադասութիւն խօսէր, հայերէնով հայհոյէր, եօթը պորտը իրարու անցնէր, որ ինքզինք այսպէս կորսուած, անպէտք, անօգուտ, ինքզինք այսպէս առանձին, բոլորովին առանձին շղար :



Շուտով գիրքի մը փարեցաւ Հրայր :

Բայց էջերը այս տեղամ սաղայելիական խաղեր սկսան խաղալ : Իւրաքանչիւր էջի մէջ, իւրաքանչիւր բառի տակ յանկարծ աչքեր հրեւցան ու զինք դիտել սկսան յամառօրէն, խտտօրէն : Այդ էջերուն մէջ, այդ տողերուն տակ Հրայր ինքզինք դիտել սկսաւ, կարծեա մտածել ինքն իր մասին... : Իր աչքերն էին, իր Հարազատ նայուածքը, այդպէս ամէն բառի տակ, որ կարծես կ'ուզէին իր անձին խորերը, էութեանը մինչեւ արմատները պեղել, քանդակել, քայքայել... : ... Օ՛, ուրիշ տեղ մը, ուրիշ դէմք մը, ուրիշ աչքեր, նայուածքներ դտնել շուտով, գտնել, փրկուիլ... :

Հապիւ ինքզինք դուրս նետեց Հրայր : Եւ ախրան էր այլայլած ու խուճապի մատնուած, որ Հաղիւ անդրադարձաւ, այդ ուլ դեռ վար Հասնելէ ետք, թէ ազլիկը հոն էր տակաւին, թէ առաջուայ ճերմակազգեստ աղջիկը, ասնդուիներուն վերի անկիւնը նստած, կծկուած դրացի կարճուկին դրանը դիմաց :

Անժամանակ, անձիտ անձրիւը, ամբոն այս ամբողջ օրը նկիսած քուրջի վերածելէ ետք, ժամ ու ժամանակ թունաւորելու իր ոճն էր փոխած հիմա ու դարձած մշուշ, կեղտոտ, լպրծուն մշուշ : Եւ համատարած մառախուղին տակ, այս արուարձանի կանաչազարդ փողոցներու ու մայթերու ամբողջ երկայնքին, կանաչ, փարթամ ու հեղձուցիչ անապատ... ամերիկեան արուարձան : Խաղաղութիւն, խաղաղութիւն, լուսթիւն ու... զերեզման անասնման :

Գիհետուն մը, պառ մը կար միայն, թաղի ծայրամասին, կիսախուար, անհրապուր, աննշացած մարմնի մը մէջ իրրեւ տակաւին դարնոզ միակ բազկերակ... : Եւ որքան մարդ, Աստուած իմ, որքան արարած, անշունչ, անկենդան անապատէն ետք յանկարծ յայտնուող ովասիտի մը կարծէք շուրջը բոլորուած... :

Գուաթ մը, երկու : Երկու հատ եւս արաք, տեսնած, անայլայլ, մինչեւ որ այլեւս հաշիւը կորսնցուց, մինչեւ այլեւս արեւ, անձրիւ ու մշուշ եւ օր եւ զիչեր ու տակաւին ներկայ, անցեալ, ապագայ զաւեշտական շուրջապի մը մէջ մտան, դարձան անյուրջ, անիմաստ : Մինչեւ այլեւս անկարելի հետուները մնացած սիրելի դէմքեր գաւաթներուն հետ տողանցի մտան ու պարպեցող հեղուկներուն հետ հին ու քողջը ջերմութիւններ սկսան պարպել էութեանն ներս : Բայց այդ ամէնուն ետին, դարանակայ, դաւադիր ասանձնութեան այդ ահաւոր աչքերը... զինք քայքայել, քանդել ուզող իր Հարազատ աչքերը, իւրաքանչիւր գաւաթի իւրաքանչիւր ումպին մէջ... :

Պիտի կտորէր, փլուէր գաւաթը իր փեքրուն մէջ, երբ ձեռք մը յանկարծ ուսին դրաւ :

Իր կողքին կայնած մօրուքաւոր մարդն էր, պղտոր, տամուկ աչքերով :

— Ըսէ՛, բարեկամ, դուն շուները կը սիրե՞ս... :

— ...

— Տես օտ տիկինը, — շարունակեց մօրուքաւորը, մօտը կանգնած կին մը ցոյց տալով, որուն գրկին մէջ շունի նմանոց անասուն մը կար, — այս տիկինը շունի պատմութիւններով մէկ ժամէ ի վեր ուղեղը կը հերկէ : Ըտի իրեն չեմ սիրեր, ես շուն չեմ սիրեր, բայց որո՞նք կ'ըսես... :

— Բայց պարտն, պարտն, — սկսաւ բացազանչել խնդրոյ առարկայ կիտը, — դուք կը մոռնաք, որ այս երկրին մէջ ամէն ընտանիք իր շունը ունի, երկու, երեք երբեմն : Եթէ լաւ կենդանի չէ, ինչո՞ւ կը պահեն, ըսէք ինձի, հա՛, ինչո՞ւ շուներ կը պահեն... :

Եւ Հրայրը իրրեւ վկայ բռնելով :

— Այնպէս չէ՞, պարոն, — շարունակեց տիկինը, — օ՛հ, ընէ՛ք, ընէ՛ք, խելացի չե՞ն շունեքը... մարդ ինչպէ՞ս կրնայ չսիրել բարի, ազնիւ, հաւատարիմ այս անասունը... օ՛հ, ընէ՛ք ինչդեմ... :

Հրայր շարժում մը փորձեց, շփոթ, անտարբերութիւն կամ տոնուազն չհարգութիւն արտայայտող շարժում մը, շունի այս վէճէն իր օձիքը փրկելու համար։ Բայց ի՞նչ օգուտ, ահաւասիկ որ հիմա շունի դատաւոր կ'ուզեն կարգել գինք, շան հետ կամ շան դէմ, այս է հիմա խնդիրը... :

Հիմա արդէն մօրուքաւորը իր գաւաթը մէկ հարուածով կուլ տուաւ, կարծէք նաեւ կուլ տուաւ իրեն մնացած համբերութեան վերջին կաթին ալ ու, ահաւասիկ իրար սեղմելով՝

— Ձեմ սիրեր, ըսի, ես շուն չեմ սիրել, ոճի՞ր դործեցի... սա ի՞նչ բախտ է, բարեկամ, այս ի՞նչ փորձանք է... հոս եկանք հանդիստ շուն մը քաշելու, երկու ազուոր գաւաթ պարպելու, գուն մի ըսեր, որ եկեր ենք շան քարոզներ լսելու... :

Մօրուքաւորին այս խօսքերէն ետք, կինը գլուխը կախեց ու պարտըւած, արտուժ մայնով մը.

— Կ'երեւի դուք գաւաթներ չէք ունեցած, — սկսաւ խօսիլ կարծէք ինքն իրեն համար, — չէք բաժնուած հարազատներէ... դաւալ մը ասդին, դաւալ մը անդին, հագիւ հասակներն առած՝ հետօ՛ւ, հետաւօ՛ր վայրեր։ Ամուսին մըք ալ, որ մեզ լքեց-զացեր է երիտասարդ ք... իկի մը հետ, դուք ալ այսպէս առանձին, չոր փուչի պէս տնկուած, անպէտք, անիմաստ... իսկ այս շունը, հաւատարիմ, մի՛շտ ներկայ, շղթայ մը կրնաք անցընել վերին ու պահել, պահել... :

Մօրուքաւորը քիթին տակէն անհասկնալի բաներ մը մոյտաց, յետոյ գաւաթը շալկեց ու, գլուխը ճօճելով՝ դնաց պատին վերջին ծայրը տպաստանեցաւ։

Գաւաթ եկաւ, գաւաթ դնաց, գաւաթներու տողանցք եղաւ Հրայրին դիմաց։ Շան պաշտպան խեղճ կինը ինչի՞ր շփոթեց Հրայրէն խօսք մը կորզելու համար, սակայն վերջապէս յուսահատեցաւ, երբ տեսաւ մարդը խմիչքին հետ չափազանց լուրջ խօսքի էր մտած։

Փոժ, ժամանակ յայտնի չէր, երբ այլեւս դուրս ելաւ։ Պէտք էր վերջապէս ելլէր... Սակայն դուրսը... դուրսը, փողոցն ալ լրջութիւնը կորսնցուցած կ'երեւէր, կարծէք իր դիտցած ամուր, հաստատուն գետինը չլլար։ Շան վէճի մը բռնուեցան երկու մայթերն ալ։ Աջինը ելաւ ու դէպի ծախեկաւ, ծախ կողմինը փորձեց մինչեւ անը դալ, բայց կէս ճամբան միտքը փոխելով ելաւ ետ դարձաւ։ Ինքնաշարժներն ալ, չես դիտեր ինչու իրենց ճամբէն դուրս ելած՝ եկան կանգնեցան Հրայրին դիմաց ու սկսան բառաչել, կատրած կողմերու նման։ Բայց այդ ամէնը ոչինչ, ինք վերջապէս տուն հասաւ։

Քնդիր մըն ալ սանդուխներուն վրայ ծայր տուաւ։ Ինք վեր ելլողն էր, այդ մասին կասկած չէր կրնար ըլլալ։ Ատտիմանները, սակայն, սկսան այժսօր հակառակութիւն ցոյց տալ, սկսան կարծէք դէպի վար դառնալ։ Սակայն Հրայր տեղի չտուաւ, մաղցիլ նոյնիսկ եթէ պէտք եղաւ, ինք մաղցեցաւ, մինչեւ հասաւ իր դուռը։

Այնտեղ սակայն ճերմակ, փայլուն լոյսի նման բան մը կար։ Իրեն այնպէս թուեցաւ, որ աղջիկ մըն էր, ճերմակներ հագած եւ որ տեղ մը, անզամ մը տեսած էր զայն։

Հիմա արդէն բանալիի հարց մը ծագեցաւ։ Բանալի չկար, որ կարեւոր էր դուռը բանալ, եղածներն ալ տեղը գտան, չգտան ու Հրայր աշխատեցաւ, տքնեցաւ։ Ձեղաւ ու չեղաւ։ Յետոյ... յետոյ այլեւս ստատանան գի-

տէ ինչ պատահեցաւ :

Աղաղակներ, պոռչտութեան, աղմուկներ... կարծէք վերջին դատաւորանի իրարանցում մը եղաւ եւ թմբուկներ, սարսափազդու թմբուկներ իր ակնջին տակ : Վտանգ, աղէտ, աւազանգ... չկրցաւ դիտնալ ինչ պատահեցաւ : Միայն երբ աչքը բացաւ, տեսաւ, որ պտուկած էր ամբողջ հասակով իր դրան առջեւ եւ որ աղջիկը, ճերմակներով աղջիկը սարսափաւար իրարանցումի մէջ էր, երկու ձեռքերով քովի թղուկին դուռը ծեծելով կու լար, կ'ողորար, կ'աղաչէր :

— Օփրն, փլի՛գ... օփրն, փլի՛գ... օփրն, փլի՛գ... օփրն... փլի՛գ... փլի՛գ...  
Հրայր պահ մը շուտաւ մնաց, միջամտէ՛ր, հետանա՛ր : Կարծեց իրեն համար էր, կարծեց աղջիկը իրմէ կը վախնար : Բարի, խոնարհ ձեւեր առաւ, ձայնին տուաւ քնքո՛ւշ, կարեկէց շնչեր :

— Օրի՛որդ, օրի՛որդ, մի վախնար, ես գիտնով չեմ, ահա... տես : Բայց աղջիկը ոչինչ կը տեսնէր, ոչինչ կը լսէր, դիւահարուած, այս սահարուած էր կարծես, խելայեղօրէն դուռը կը ծեծէր ու կ'աղաղակէր :

— Օփր՛ն, օփր՛ն, օփրն, փլի՛գ... :  
Աղջիկը այնքան շարժեցաւ, այնպէս շարժեցաւ, որ ի վերջոյ յոգնութենէն յանկարծ դետին փռուեցաւ ու սկսաւ հեծկտալ :

Հրայր այլեւ ըլլայնացաւ, կատուեցաւ, պոռայ, կանչեց, հայհոյեց եւ սկսաւ կատաղօրէն դուռը հարուածել : Ձեռքով դարկաւ, ոտքով դարկաւ, մինչեւ որ ներսէն ձայն մը լսուեցաւ,

— Հսի քեզի, որ քսան տղար է, — կը կրկնէր ձայնը, — եթէ չունիս՝ կորսուէ՛ դնս, թէ՛ ոչ՝ փողոց նետել կու տամ քեզ :

— Ես կու տամ, ես կը վճարեմ, — բացազանչեց Հրայր անզգալարար : Կղպանքներու ձայնը լսուեցան, սղարիկ ճեղքով մը դուռը բացուեցաւ, այդ ճեղքէն ձեռք մը դուրս սպրդեցաւ եւ նոյն ձայնը :

— Նախ վճարէ՛, — հրամայեց :

Ուղեղին մէջ շրջագայող ուշո՞ւն էր արդեօք, թէ իսկապէս կոտորուկան անցուղարձերու ականատես էր այսօր, Հրայր չհրցաւ ճշդել : Եւ ի՞նչ անդրազարձ, եւ որքա՞ն արագ...

Պահանջուած դուրսը հաղիւ տեղաւորած էր դուրս երկարած ձեռքին մէջ, հաղիւ այդ ձեռքը իր սիին մէջ սրուակի նման բան մը դրած էր, երբ աղջիկը, ճերմակներով աղջիկը կը խուժէր վրան, կը խլէր իրմէ այդ սրուակի նմանող բանը եւ ասեղով մը կը ներարկէր մարմնէն ներս :

Այս էր ուրեմն... կախարդ, կախարդանք : Բայց որքան խակ, որքան անմիտ ըլլալու էր ինք, որքան դժուար, այդ որքան ուշ հասկցաւ եւ այլեւս, Աստուած ի՞մ, որքան, որքա՞ն տխրեցաւ : Բայց ինչպէ՞ս դիտնար, որ այս աղջիկը... հողի կարծես, հրեշտակ կարծես, անմեղ, անբիծ, այս լուսեղէն, լոյսով կարծես շինուած աղջիկը... : Հիմա, հիմա տիկնամիջ ըլլար, ամբողջ մական ոտմբ ըլլար, պայթեցնէր, օդը հանէր սա դրացի թղուկ հրէշին որ՛նը :

Հրայր այդպէս երկրազունտներ քանդելու, քոյքայելու, քոյքայուելու մտքերուն հետ էր, երբ աղջիկը, քրէնի հաւ, թե՛նի հաւ, կը կրկնէր :  
Յետոյ տեսակ մը տնդիմարեւի խանդաղատանքով :

— Կրնա՞մ այս գիշեր մօտդ անցընել...

ՃԻՐԱՅԸ ԱԹՔԱՐԵԱՆ

Ս. Կ Ի Ր Ա Կ Ո Ս Ե Ա Ն

**Ա Ղ Օ Թ Ք**  
**Լ Ի Ն Ե Լ Ո Ւ Թ Ե Ա Ն Ե Ղ Ա Ն Ա Կ Ն Ե Ր Ո Ւ Ն**

Եթէ սէրը այսօր գայ առաջնայի կերպարով,  
յայտարարէ գոյութեան գազունիքները միանայլ՝

հազարութիւն անանց,  
բերկրութիւն անանձ

եւ բոյրերու գազունորոգայթ մականուն  
էութիւնն իր վարդ,

կամ աւետէ լիութեան գազունիքները միանայլ՝

հազարութիւն անանձ,  
բերկրութիւն անանց

եւ լոյսերու ծիծաղախիտ ոսկետուն  
էութիւնն իր բարդ, —

հարշ տայ պիտի յաղթ ու ձիգ՝ իր խոյանձով սլացիկ,  
մտատանջութեան քանձրացեալ արիւն լեռները արճին  
եւ հար արիւնին սրտին մխացող մութը գեղեցիկ...

Եթէ սէրը վազը գայ առաջնայի էութեամբ,  
յայտարարէ գոյութեան գազունիքները միանայլ,  
կամ աւետէ լիութեան խորհարդները լուսանայլ  
եւ յազթ ու խոնարհ խօսի արփիին ծծումբն ու ոսկին,  
ընէ՝ հրճուագին երկիւղն անհունին, հեշտանձն արիւնին.

— ա՛յս է ծծումբը հասու՝ բառերուն ջինջ ոսկիին,  
այս է հերթուածը հրդեհ՝ գոյներուն բոց ոսկիին,  
որ մեզի կու տայ սէրն իր անմարմին,  
որ մեզի կու տայ գանձ իր արփիին,  
որ մեզի կու տայ արփին իր գանձն,  
կոյս տեսիլներու արփին անցարփակ՝

ազատարար այժուներու ստառնումներն սճանչելի,  
յաւերժախօս խորհուրդներու վառատուններն անմատչելի...

Ո՛վ աշտանակ իմ հեքանու հայրերու,  
 քէ սիրուհիս վազը գայ անյիշաչար ժամանակին սկունքէն,  
 բազմի գահին պէտլի՝ ինչպէս խորհուրդն արիւմին  
 եւ անտէ՛ նսկե՛ծայն պատգամները սիրոյ անուռ մատնամին,  
 կամ յազք ու խոնարհ խօսի արփիին ծծումքն ու ոսկին,  
 իր ղինջ ու ոսկի անթագ բառերուն խարայկներն անյսգ՝  
 իբրև գոյութեան խորհուրդ միաձայլ, ծծումք լուսահայլ,  
 տարածէ՛ անկտնգ մեզ մաքրագտող օրէնքը հուրին,  
 ըսէ՛ հրճուագին հեշտանքն անհունին, ազօքն արխնին .  
 — ա՛յս է քերթուածը երգեհ՝ հրդեհներու հրդեհին,  
 այս է քերթուածը սիրոյ՝ պատգամներու պատգամին,  
 զի հեզ ու խոնարհ,  
 անտարտ ու արի առաքելուհին  
 ժառանգն է գահին,  
 իմաստն է լոյսին...

Գահին ծծումքէն յարութիւն սուած առաքելուհին երգ է յազքական :

Կ'երազեմ դժուար գայուտորդ բարի,  
 կ'երազեմ երկար երկունքն իմ վայրի .  
 քերես ծնիմ կախը հրդեհէն,  
 քերես ծնիմ գահիդ արփիէն,  
 իմ սպասումէն,  
 քու յապագումէն  
 ծնիմ վերջապէս, քերես աշօք, ինչու ոչ հիմա՝  
 քու ազօքներով, օրհնութեամբ, սխտով,  
 որանց շնորհիւ միմիայն պիտի իմ դէմք գառնայ  
 անհունը գերած խորհուրդ լուսաշաղթ,  
 անցեալէն ժառանգ, գալիքին սառնդ...

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Բ. ԲԵՊԱՊՃԵԱՆ

ԽՈՐՏԱԿՈՒԱԾ ՔԱՌԵԱԿԸ

Սանկն շոգի կը բարձրանար դէպի վեր, դէպի ուռաստաղ: Բայց անիկա առանց իր նպատակին հասնելու՝ կը կտպէր պատուհանի ապակիներուն եւ խոհանոցի սալաքարերուն: Եւ միայն անոնց կշտանալէն ետք կը շարունակէր իր ճամբան դէպի վեր, դէպի առաստաղ: Աւելի սաստիկ կ'ետար ջուրը, շոգին աւելի առատ դուրս կ'ելլէր, այս անգամ առանց ապակիներով եւ սալաքարերով ատեն կորսնցնելու — անոնք կուշտ էին այլեւս — կը սլանար դէպի առաստաղ եւ, անոր զարնուելով՝ կը տարածուէր խոհանոցին մէջ: Յետոյ կը լեցնէր բովանդակ խոհանոցը: Հակառակ անոր, որ սանին մէջ ճաշ կ'իտէր, շոգին որեւէ հոտ չէր տաներ իրեն հետ: Անհամ շոգի, անհոտ շոգի: Կին մը կը կենար սանին առջևը, շոգիով լեցուն խոհանոցին մէջ, ձեռքը փայտէ զգալ մը՝ կը խոսնէր կերակուրը: Կերակուրը կը թանձրանար, կը դառնար պինդ: Բայց ան աւելի արագ կը շրջէր զգալը, կը շրջէր աւելի հեշտօրէն: Կը շրջէր զգալը եւ կը մրմնջար զուարթ երգ մը: Խոհանոցը կը լեցուէր այրած կերակուրի հոտով: Ան կը շարունակէր երգել:

— Սիրանո՞յշ, ճա՞շս, — գոռաց ձայն մը:

Երիտասարդութեան փոթորկոտ տարիները անցած էին: Կարպիս կը զգար իրեն հոգացող անձի մը պակասը: Մէկը, որ իր ճաշը պիտի եփէր, շոքերը պիտի լուար, վրայ-գլուխին պիտի նայէր՝ պակասը կը գգար կնոջ մը: Գոտաւ օրիորդ Սիրանոյշ Սանոյիանը: Առողջ ակտաներով, հաստատուն կազմով այս օրիորդը համեստ էր նաև: «Համեստութիւնը շատ լաւ բան է — ըսաւ Կարպիս, — շատ լաւ բան է»: Միայն սոցեղ էր օրիորդ Սիրանոյշ: Վերջը ճարը կը գտնուէր, խորհեցաւ Կարպիս եւ խորհելով սրամիտ ժըպիտ մը երեւցաւ երեսին վրայ: Ամուս-

նութեան օրը, օրիորդ Սիրանոյշի ծնողքին օրհնութիւններէն աւելի՝ հետաքրքրուեցաւ նախկին օրիորդին հետը բերած փայտէ անուակին պարունակութեամբ: Օժիտը մէջըն էր: Ետտ գարձացաւ, երբ հարսանեկան խնճոյքի ընթացքին — հաղիւ քանի մը անձեր ներկայ կը դառնուէին — կէնը իրեն դառնալով՝ «Ետտ մի խմեր», ըսաւ: Սխալած էր արդեօք իր ընտրութեան մէջ: Եթէ հեազանդիլը դիտէր Սիրանոյշ, ինչպէ՞ս կը համարձակէր սեփական կարծիք յայտնել: «Պիտի սորովի, — ըսաւ, — պիտի սորովեցնեմ»: Ինչո՞ւ, երջանիկ էր, որովհետեւ գինով էր:

— Այժմուկ մի՛ հանէք, — գոռաց պարոն Կարպիս: Անոյշ եւ Լեւոն անկիւն մը քաշուած՝ իրարու հետ կը խաղային: Վախնալով լռեցին:

— Ձայնդ կարէ՛, — հրամայեց պարոն Կարպիս: Լեւոն կու լար, որովհետեւ հայրը ձեռքէն խլած էր իր փոքրիկ ինքնաշարժը: Աւելի բարձրաձայն լալ սկսաւ ապտակը ուտելով:

— Ձըլա՞յ որ Մաթուֆեաննոց տոյց հետ խաղաք, — պատուիրեց պարոն Կարպիս: Ձխաղացին:

Ձխաղացին, աւելի լացին, շրտեցին: Արդիւրած էր շարաթը մէկ անգամէն աւելի սինեմա երթալ: Լեւոն իրիկունները հօրը գալէն առաջ տունը պէտք է ըլլար: Եթէ ընտանիքին պատիւը պահել կ'ուզէր, Անոյշ պէտք չէ խաղար թաղին սըրիկաներուն հետ: Անոնց ուզածը յայտնի էր: Անոյշին կարծիքը ո՞վ հարցուցած էր: Կարեւորը իր ըսածն էր, քանի որ փորձառուն ան էր: Ձըլա՞ր որ զպրօցին կարեւորութիւն տար, կարեւորը ամուսնութիւնն էր: Բայց եթէ Ալմասեանները իրենց աղջիկը լիւ՛ւ է զրկէին, խնդիրը տարբեր կ'ըլլար: Ըլլալիք բա՞ն էր, որ Ալմասեան մը իր աղջիկը լիւ՛ւ է զրկէր եւ ան՝ հօկայ Գորեանը չընէր: Տղան գիրքէ

կարևորութիւն պէտք չէ տար: Ուրկէ՞ միտքը ինկած էր արտասահման ուսանիլը: Երկրին մէջ համալսարան չկար: Եւ յետոյ, ինչո՞ւ համալսարան: Որո՞ւն համար խանութ մը բացած եւ տարիներ շարունակ շարժարուած էր: Ի՞նչ ըսել է օտար աղջիկ տունը, ո՞վ էր, ի՞նչ էր, ընտանիքը յայտնի՞ էր: Հոս աղջիկ չէր մնացած: Եւ ի՞նչ ընտանիքի աղջիկներ, հողիներն կու տային իրեն պէ՞տ մէկուն կինը ըլլալու համար: Հրահանգ կու տար, որ իսկոյն թողու օտարուհին: Ըսել է ամառը անգամ չէր ուզեր հետը բերել: Գոնէ երես տեսնէին: Չտեսնուած խաչ տառակութիւն: Ամուսնութեան յուրը չորս շաբաթ ետք պարզ նամակի մը ձեւով եկած էր: Մարդ օտարին անգամ չէր ընէր ասիկա: Ապերտիտութիւն չէի՞ն ըսեր այս ըրածին: Ան՝ որ ձեռքէն եկածը ըրած էր իր տղուն համար: Օտարացած էր պարզապէս: Եւ ինչպէս: Արտասահմանին աղքեցութիւնն էր ասիկա: Նոյնպէս աղջիկը: Լիսէն բարտած, օտար չեղու սողված էր: Կը բաւէր, որ քիչ մըն ալ տանտիկինութիւն սորվէր: Յիմար մըն ալ ան էր: Արտասահման կը հոյսովէր: Ծառ խիստ խօսեցաւ հետը: Ո՞վ պիտի նայէր իրենց, եթէ ծերանային: Պարօպ տեղը այդքան դրամ ծախսած էին իրեն համար: Հոս ապագայ չկայ եղեր: Ապագա դուն պիտի շինես: Աղջկայ այսպէս ի՞նչ է որ: Ընդամէնը ամուսնութիւն մը: Գրածներն ալ նամակ ըլլային: «Օղը լաւ է Լոս Անճելոսի մէջ» եւ նման բաներ: Օղին գատ ուրիշ բան չկար կարծես: Պատրաստ էր նոյնիսկ օղանաւի տոմսակը դրկելու, որպէսզի անգամ մը գար, պարզ այցելութեան մը համար: Հիմա ալ ձոն մը կլած էր մէջտեղ: Արատած էր նամակով, որ ուշադիր ըլլայ: Յարզէ ընտանիքին պատիւը: Պայման դրած էր, որ եկեղեցական ծէսով ամուսնանան: Ծոնը չէր ուզեր: «Հոս եկէք, հետերնիս եղէք»: Ծոնը չէր ուզեր գալ: Տղուն անունը Բիլլըրտ դրին: Կատողեցու, բացատրութիւն կը պահանջէր, իսկոյն: Ծոնը ամերիկացի էր, տղան ալ ամերիկացի էր եւ Լոս Անճելոսին օդերը հիանալի էին, միայն քիչ մը շատ տաք:

Հովի պէտք ունէր զովանալու համար, ի՞նչ ըրաւ տիկին Սիրանոյշ: Տիկին Սիրանոյշ լոնց: Լոնց եւ լիցքեր պատրաստեց, երբ Անոյշ եւ Լեւոն ապագակեցան ազմուկ հանելուճ համար: Լոնց եւ փոշիները առաւ, երբ աղջկան լիսէ երթալը արգիլուեցաւ: Յետոյ, երբ արտօնութիւնը կլաւ, եկեղեցի փութաց մոմ վառելու համար: Լոնց եւ տղուն հարիւրնոց մը տուաւ իր խնայողութեան, երբ ան գրամի պէտք ունէր: Լոնց եւ ամուսնական անկողինը տաքուց, որպէսզի տանտէրը վերադարձին սիրոյ լուսադոյն նախապայմանները գտնէր: Լոնց՝ յսելով նոյնիսկ աղոց երկրէն բաժնուելու նպատակը եւ մեկնումի օրը անոնց աչքերուն մէջ չզանելով այն՝ ինչ որ կը փնտռէր, «Պիտի չվերադառնան ասոնք», ըսաւ: Այդ օրուրէն սկսեալ տիկին Սիրանոյշ կորուսեցաւ խոհանոցին մէջ: Մանկն գլուխը կեցած փայտէ դալով խոնկեց կերակուրը, շոգին բարձրացաւ, գրաւեց ամբողջ տունը: Կերակուրը այրեցաւ, տիկին Սիրանոյշ շարունակեց ճաշ խօսնել: Պանձածի հոտեր լիցուցին տունը, իսկ ան կը մրմնջէր երգ մը, որուն բառերը կարելի չէր հասկնալ: Ամէն ինչ պարզ էր եւ հառկեալի: Տունին տէրը ան էր, քանի որ դրամը ան կը շահէր: Այդպէ՛ս պէտք է ըլլար: Որոշումները վճարական էին, ըմբոստութեան պէտք չկար: Պօքը խօսք էր: Սիրանոյշ պէտք չէ խոսնուէր իր գործերուն: Իր գործե՞րը: Գրեթէ ամէն ինչ իր գործն էր: Ո՞ր միայն խանութը, այլեւ՝ ամուսին վերաբերեալ շատ մը բաներ: Աւելորդ ծախսերու պէտք չկար: Թող հիւրասենեակը լաւ ըլլար, կը բաւէր: Օտարը ուրիշ ի՞նչ պիտի տեսնէր: Մէջ մըն ալ իր վրայգլուխը: Կնոջը համար շատ ֆանթազիի պէտք չկար: Ինչքան չէր տաներ, թէ ինչո՞ւ այս տարուան հազուադէպ ալ տարի անգործածելի կը դառնար: «Գործ չունեցող մարդու բան», ըսաւ: Ամբողջ օրը տունը կեցողը ուրիշ ի՞նչ կրնար ընել: Պգաբկներուն հետ շատ կազուկ կը վարուէր: Մարդ խիստ պէտք է մեծցնէ ազաքը, որ չլիսանան: Այդ գործըն ալ իրեն մնացած էր: Որքան որ Ը

լայ, էրիկմարդը կը հասկնար խստութեանէ: Մարդ պէտք եղած տեղը պէտք է արտակէր, սանկ լաւ մը: Տղաքը լալկան էին, իրենց մօրը կը նմանէին: Ճիշդ տնոր պէս լալ մը ունէին: Անոյնինը հասկընալի էր, ան աղջիկ էր: Բայց Լեւոնին ի՞նչ պէտք է ըսուէր: Թող զիչ մը մեծնար, անոր պէտք եղածը կը սորվեցնէր: Երիկմարդ ըսածդ պինդ պիտի ըլլայ: Անխղճ ըլլալու աստիճան: Գոնէ միտները այդպէս պէտք է կարծէին: Հակառակ պարագային՝ մատին միայ կը խաղցնէին մարդս, մա՛նաւանդ կիները: Նախ ձեռք ըսելը պէտք է սորվէր: Այնպէս մը, որ դիմացինը, բոլորովին յուսահատի: Չհամարձակի անգամ մը եւս հարցնել: Չգացուծ կոչուածը պէտք է մեղցնէր: Միակ լուծումը այս էր, եթէ որսուցներ կ'ուզէր տալ, որոնք փոփոխներանք չէին կրնար տալ: Լեւոն պիտի սորվէր, որքան ալ առաջին փորձերը յուսադրիչ չէին: Խուճապահար վերադարձած էր իր սիրային առաջին փորձէն, որուն մզուած էր բարեկամի մը միջոցով: «Ի՞նչ կայ նեղութիւնք, — ըսած էր, — սէրը այս է»: «Սէ՛ր», ըսած էր Լեւոն, եւ քաշուած իր սենեակը՝ օրերով հետը շրտելու համար: Բայց պարոն Կարպիս իբրեւ առատամեծ մարդ իւրաքանչիւր Եարաթ օրը տուած էր անհրաժեշտ քան ոսկին, որպէսզի տղան կարենար զուսացում տալ իր մարմնական պահանջներուն: Իրականութեան մէջ չէր գիտեր, թէ ան ինչ կ'ընէր այդ դրամով: Կը շարձարուէր անտույզ դրամներէն, այսուհանդերձ, չէր համարձակեր ըսն մը հարցնել:

Կեանքը միօրինակ էր, բայց այդպէս պէտք չէ ըլլար: Դեռեւս երիտասարդութեան սովորութիւնները պէտք է շարունակէր: Խնդաց: Բացայայտ էր, որ Տիգրանին կը նայէր: Ինչպէ՞ս, կը սխալէ՞ր, Անփորձ չէր ան: Եսա դժուար չեղաւ Իրականացնել իր ծրագրերը: Իր սովորական ժպիտը, կառքով տուն տանելու առաջարկը, ամուսնական ժողոված մատանին — հիանալի էր այս հնարքը՝ հին եւ ազդու — շուտով հասցուց դինք իր նըպատակին: Ի՞նչ էր այդ ժպիտին նշանա-

կութիւնը: Ամէն մարդու այդքան մտերիմ ժպիտը չէր տեսած: Պիտի շարունակէ՞ր ժպտիլ այդպէս: Աւելի լուրջ չէ՞ր կրնար կենալ: Ուղղակի երես կու տար: Մտերիմ ճաշկերութիւնք՝ գլուխ դիւր: Մտերիմութիւն, որ չէր գոհանար բառերու մտերմութեամբ եւ կը ստանար նոր սրակ: Եւ կերան դիրար, եւ ինչպէ՞ս: Ձտանուած համարձակութեամբ՝ թէ՛ ուտողին եւ թէ՛ ուտուողին: Մասակացող ախորժակով՝ թէ՛ յանցաւորին եւ թէ՛ զոհին, որ հակառակ իր ուտուելուն կը մընար լման եւ կը ծաղկէր: Խաղալիք չէր ասիկա, իր պատինն էր: Ընկերութիւն, ի՞նչ տեսակ ընկերութիւն: Ան շատ լաւ գիտէր, թէ այդ ընկերութեան կեդրոնը ուր կը գտնուի: Իրեն թող հարցնէր, եթէ չէր գիտեր: Ամուսնացած կին էր: Սահմանը պէտք է գիտնար: Չափանքը պէտք է խորհէր, եթէ ուրիշ բան նկատի առնել չէր ուղեր: Կրնար իրեն կապուիլ: Մարտաց: Պահանջները կրնային շատնալ: Եսա դրամ ծախսելու մտադիր չէր: Օր մը պորպագէս ամուսնութեան մատանին չ'անած պէտք է տեսնէին զիրար: Թեւեւ արթնար այն ատեն: Ինչոքի պէտք է խոստանար, որ պիտի չ'անէ ալեւս այդ խոստանակը: Պէտք է խզէր կապերը: Ո՞ր կապերը: Ապա ինքզինքը կրնար մոռնալ: Եւ մոռցաւ: Միքանային լացը լեցուց տունը: Օղը հիանալի էր:

Պարոն Կարպիս կը սիրէր երգելը: Կ'երգէր Մօրիս Երվալիէի, Թինօ Բոսիի, Խոթիթ Փիտիի երգերը: Գոց գիտէր անոնց բոլոր երգերը, այդպէս կ'ըսէր: Կըլուր-կըլուր դարձնելով կը ծանրանար ճաշերուն վրայ, զանոնք վաւերական փարիզցիի մը ռոտունութեամբ արտասանելով: Թեւեւ այս շեշտուած ճաշերու պատճառով կը նկատուէր իբրեւ հմուտ ֆրանսագէտ, որքան ալ իր հմտութիւնը կը սկսէր եւ կը վերջանար այդ նշանակալից ճաշերով: Բայց եւ այնպէ՞ս ան կ'ուրախանար: Երբեմն, մա՛նաւանդ զինով եղած ատենները, կը սիրէր երգել նաեւ հայերէն երգեր, որովհետեւ անոնք չ'ուզումնալից էին: «Կուսնիկ, լա, լա, լա», «Միծնալիկ, լա, լա, լա» եւ «Կարունու, լա, լա, լա» իր սիրած երգերն էին: Պար-



աւարով կ'երգէր, ստիպուած էր: Տղոցը սենեակէն կը խուժէին էլիլիս Փրեայիի եւ պիթըլիզներու ձայնները:

Տիկին Սիրանոյշ առանձին էր տանը մէջ: Բազմոցին մէկ անկիւնը կը նստէր անշարժ: Ժամանակին հոսիւը չէր գգար: Որքա՞ն ատեն նստեցաւ այսպէս: Ինքն ալ չէր գիտեր: Հայնացքը սեղանին վըրայի երկու լուսանարներուն սենեաւած էր: Անոյշը եւ Լեւոնն էին: Ախոս՞ա, որ հոս չէին: Անոնք պիտի հասկնային իր վիճակը: Պիտի միթարէին զինք: Նամակով ամէն ինչ կործար չէր գրել: Միայն ծածուկ կրնար հաղորդել եղելութիւնները: Շատ գոռոչօքն կ'արտայայտուէին իրենց նամակներուն մէջ, խորհելով, որ կարպիտն ալ կը կարգար գանոնք: Ուշագիտ պէտք է ըլլային: Շատ քիչ անգամ կը գրէին: Անոյշը իր ընտանիքով, այսինքն՝ ամուսինով զրաղած էր: Դեռ դաւակ չունէին, բայց տունը ընկիւթ շատ շաներ կային եւ յետոյ, երբեմն, աշխատելու ալ կ'երթար: Այդ ի՞նչ աշխատանք էր՝ չէր հասկցած, ամէն պարագայի՝ խանդավառութեամբ կը գրէր Անոյշ, թէ պերկ ալ աշխատեցար: Ետնպէս Լեւոն: Ապագան պիտի լինէր: Կեանքը դժուար էր եւ տունին դործը անվերջանալի: Տիկին Սիրանոյշ միթարեց ինքզինք: Պալեաննեց ողբան ալ լատ քիչ նամակ կը գրէին: Անոնք ալ զրաղած էին: Գործը վերջ չէր գտնուիր:

Ոտքի ելաւ յանկարծ: Փռչիլ լսթով սկսաւ սենեակը շրջիլ: Վճակահնութիւն մը կար իր շարժումներուն մէջ: Աւելի կը կրուէր իրերուն հետ: Իր դէնքովը, այսինքն՝ փռչիլ լսթով, կը յարձակէր անոնց վրայ: Կը սեղմէր, կը ճզմէր, կը տրորէր գանոնք: Սենեակը կը լինար տիտուններուն, սեղաններուն, արծաթէ ամաններուն հառաչանքով: Յայտնի չէր ըլլար, թէ անոնք ջաւէն, թէ հանձնէն կը հառաչէին: Ամէն պարագայի կը հնազանդէին յարձակողին անյողողող կամօքին եւ կը փայլէին: Երջանիկ տիկին Սիրանոյշ մը խորունկ շունչ մը կը քաշէր, մտնալով ի՞ր յոգնութիւնը: Նոր թափով եւ նոր եռանդով կը շարունակէր իր արշաւանքը, պաշարելով նոր իր մը: Ան-

համար իրեր պէտք է գտնուէին սենեակին մէջ: Տիկին Սիրանոյշ, գինովցած իր նուաճումներէն՝ կը շրջէր սենեակը, ըմբռնելով յաղթանակի քաղցր գինին:

Պարոն կարպիտ լատ կը սիրէր կարգալը: Մասնաւոր հետաքրքրութեամբ կը կարգար թերթերը, օտար թերթերը: Լուրերը հոն էին, թէ՛ քաղաքական եւ թէ՛ մարզական: Մեռելի թերթ կարգալու սովորութիւնը շունչէր: Կենդանութիւն, աշխուժութիւն, շարժում — ահա այս բոլորը կային թերթերուն մէջ: Իսկ գիրքը լմացած չուր էր, պոռտ մը խելքի շուրջ շարադրուած շատախօսութիւն, որուն չէր արժեք դրամ տալ: Որքան ատեն, որ Անոյշ եւ Լեւոն պզտիկ էին, կըցած էր գիրքերը տունէն դուրս պահել: Սիրանոյշ բարեկամներէն քանի մը գիրքեր փոխ առած էր, որոնք տղոցը մտայն զարգացման համար անհրաժեշտ էին: Անիմաստ բան: Ան իր մտայն զարգացումը շուրջին կը պարտէր, կեանքի դրոպրոցին: Իր դարձացումը, շրջալու համար զարդոյթը, աւելի քան մեծ եղաւ չարահաս Անոյշին եւ Լեւոնին գիրքեր գտնելը՝ սենեակով, Վնասը, որ կար, նուազադորնի իջկցելու: Համար առաջարկած էր կարգացուած գիրքերը ծախել: Երբեմն փոխ առած հայերէն թերթի մը մէջ տպուած մահապղնեք բարձրագոյն կը կարդար, ըմբռնելով լեզուին գեղեցկութիւնը, ծանրանալով իրաքանչիւր մանկին վրայ, շիտիլով թառերուն նրբութիւնը, որոնք թէ՛ լեզուին համանիւային հարբասութիւնը եւ թէ՛ հանգուցային ազգական եւ բարեկամներուն առատամեծութիւնը կը դրսեւորէին: Առատամեծութիւն մը, որ կը պարզէր նուիրատուներու նիւթական եւ բարոյական արժանիքները: Այդ պահերուն էր, որ տուգորուած մայրենիի հմայքով, կը հիւտէր անոր գովքը եւ իր գաւակներուն կը քարոզէր կարեւորագոյնը՝ շանտեւել Սեմաքանը: Յետոյ կը վերադառնար իր միւս թերթերուն, կարգալու համար օրուան լուրերը, մերթ ընդ մերթ մտովին վերադառնալով մահապղնեքներուն: Կը ժրմնէր կարգ մը անուններ, զլուրը կը ճոճէր զեահասակած ծախսով մը, որ հանելի տեսնելովի մը

յատկանկիւնքը կը կրէր: Ուրիշներու պարագային՝ կ'որակէր անակոնով մը, որ փաստորէն յուսախաբութիւն կ'արտայայտէր: Յետոյ վերատին կը շարունակէր կարգալ օրուան լուրերը՝ պարտականութիւնը կատարած մէկու մը գոհունակութեամբ: Անոյն եւ Լեւոն միասին խաչքառ կը լուծէին, տիկին Միրոնոյն վազուան ճաշերով կը զրաղէր: Անշորբութիւն կը տիրէր տան մէջ:

— Պիտի հնազանդի՞ս, — բաս ախկին Միրանոյն, — պիտի հնազանդի՞ս: Պիտի իշխե՞ս, սանձը ձեռքէդ պիտի չձգե՞ս: — Պէտք է լու՞ս, — բաս ախկին Միրանոյն: Որովհետեւ շատ խօսիլը լաւ չէ: Շատ խորհիւն ալ լաւ չէ: Ձգէ, ան թող խորհի, ան որոշէ. դուն միայն հնազանդէ: Կարեւորութիւն մի՞ տար կնո՞ղ բռածին, տունին տէրը գունեւ, պէտք է որ ըլլաս: Պարտադրե՞ ինքզինքդ, եթէ պէտք ըլլայ՝ բռնի՞ ուժով: Առաջին օրէն սկսեալ, որ պէտք չփոթութիւն շտրիկ: Խնդա՞, եթէ լուռ ուղես, լաց, եթէ խնդալ ուղես: Պոստ՝ որքան որ ուղես, պոստ սննդանոցէն, պոստ՝ ի սպաս կատարեալ յազմանակին: Կուտութիւն, ոչինչ առանց կուտութեան, բաս ախկին Միրանոյն: Սէր՝ իրրեւ պարտականութիւն, մեքենարար կրկնուող սովորութիւն: Միտրինակութիւն, զոր մտնալ կ'ուզէ մարդ: Ձմբոստանա՞ս, ձգէ՞ իր ուզածը ընէ: Մի՞ գանդատիր: Արտայայտէ միակ մէկ բան՝ հանո՞յք: Կարելորդ ամուսնութեան զոյատեւումն է այս կամ այն պայմաններու տակ: Ձրլլայ որ խարուխ, ուշադիր եղիր: Նայէ, որ մաքուր աշխիկ առնես: Պատուոյ հարց է ախկա: Ուզածդ ըրէ: Ազատ ես եւ ազատութիւնդ պէտք է պաշտպանես: Օտարին չհատատաք, չփստահիք անոնց խօսքերուն: Կրնան ձեր վնասը ուզել: Միակ վստահելի անձերը մենք ենք: Եւ քանի որ այս այսպէս է, կը պահանջենք կատարեալ հաւատարմութիւն, հնազանդութիւն, մասնաւոր ինծի հանդէպ: Որքան ատեն, որ ես կամ եւ պիտի ըլլամ, եւ պիտի խորհիմ ձեր բարբիտ համար:

Որքա՞ն ատեն շարունակեցին ձայնե-

րը: Շարունակեցին: Գոյութիւն ունէի՞ն անոնք: Անոյն եւ Լեւոն չէին գիտեր: Պարբերաբար փորձեցին դիմադրել բաներու հեղեղին, որ տարիներ շարունակ ողողցնող գանձը: Առաջ քշեցին իրենց անհատականութիւնը, պարզապէս դիմադրած ըլլալու համար: Պոսթկալով հասկըցնելու համար, թէ իրենք համակարծիք չեն բուսածներուն, Պարտուելով լրեւեցին: Եւ լրելով յաղթեցին:

— Եկէ՛ք, օգնեցէ՛ք ինծի, — բաս ախկին Միրանոյն:  
 — Պիտի գանք, շուտով պիտի գանք, — բաս Անոյն:  
 — Հնազանդեցէ՛ք, պէտք է որ հնազադի՞ք, — բաս պարոն Կարպետ:  
 — Ոչ այլեւս, — բաս Լեւոն. ձայնը հետուէն կու գար:  
 — Խոստացած էիք գալ, ինչո՞ւ չէք գար, — բաս ախկին Միրանոյն:  
 — Անշուշտ որ պիտի գանք, բայց...  
 — Բայց չենք կրնար, որովհետեւ...  
 — Որովհետեւ սէրը եւ յորատնքը կը պակսին: Հաւատարմութիւն, հաւատարմութիւն: Հնազանդութիւն, հնազանդութիւն եւ նորէն հնազանդութիւն, — բաս պարոն Կարպետ:  
 — Որովհետեւ մենք թեղի չենք կրնար օգնել, — բաս Լեւոն: Ձայնը դժուարութեամբ կարելի էր լսել:  
 — Դո՛ւն պիտի լուծես խնդիրներդ: Դո՛ւն, միայն դո՛ւն, — բաս Անոյն:  
 — Յոգնեցանք այլեւս, մենք մեր կեանքը պիտի ապրինք, — բաս Լեւոն:  
 Կարելի չէր ըլլար ձայններուն եկած ուղղութիւնը ճշդել: Տիկին Միրանոյն սահանջները կը սրէր բան մը լսելու յոյսով: Գուր եւ յստակ կ'իմացուէր միայն պարոն Կարպետին ձայնը:  
 — Ես ձեր արարիչն եմ, — կը պոսար, — իմ խօսքս մտիկ պէտք է ընէք: Մունկի պէտք է գաք, խկոյն... Հնազանդութիւն, հնազանդութիւն եւ նորէն հնազանդութիւն:  
 Լեւոն արթնցաւ: Գովի անկողինը պարպ էր: Անն-Մարի գետ տուն չէր եկած: Ժամը առտուան երկուքն էր:

Ծ Ա Ծ Կ Ո Ց

Քաղաքին փողոցները  
 կը ճնշուին քարերու շունչով .  
 Ամէն ինչ հեռու է մարդկութենէ,  
 Մաքուր,  
 Ո՛չ գեփիւս կայ,  
 Ո՛չ ալ անձրեւ  
 Եւ ոչ ալ լոյս :  
 Շէնքերը չափ հն,  
 Քաղաքը ծածկուած է  
 Սեր սպակիւի հսկայ գմբէթով,  
 Ջոր մաքրելով իր փոշիէն՝  
 Ձեռնդած հն անցեալին մէջ  
 ՎԵՐԱՄՔԱՐՁ . . .  
 . . . . .

Մարդիկ խոյս տուած են :

Քաղաքին շուրջ անոյ  
 Ազրին անտառէն  
 Վեր բարձրացած ծռիխի ամպերը  
 Գունաւոր քուրեր կ'անձրուին  
 Եւ ամէն ինչ, բաղադրաւես  
 (Բնական կամ արունստական)  
 Կ'ապրի երկրորդ շրջան մը,  
 Ետ կը մտնէ սեր հողին մէջ,  
 Կը ծլի ետ մոխիրներէն  
 Եւ կը սահի կակարդէզ վար . . .

Նյեկտրական հասանքը բջիցներէն կ'անցնի,  
 Ինքուզը մահէն անմիջապէս ետք կը պատահի .  
 Անմահութիւնը արտագրուած է  
 Ու նպատակը անվերականդարէն սպաննուած :

ԱՐԱՄ ՃԻԻՂԵԱՆ



Ահա՛ն Բակունցի Հեռագայ պատմուածքը վերջումդ Վահէ Օշականի գրութիւնը, որուն դիտի Հանդիտիք քիչ անդին, պատրաստուած էր Եղերարտա պրոզէտին ետեւրուած բացատրիկին համար, բայց որովհետեւ տուեալ թիւին աւարտին հաջ հասաւ անիկա մեր ձեռքը, ստիպուեցանք ներկայ համարով ներկայացնել զայն:

Իսկոյն պիտի նկատուի, որ ծանօթ չափանիշներով գնահատուած Բակունցի նշանաւոր այս պատմուածքը բոլորովին տարբեր ընկալումով մը վերջումս է Վահէ Օշական, ա՛յն աստիճան, որ այդ նոր մեկնարանութեան հետ կ'արժէ անդամ մը եւս ու անմիջապէս կարգուլ մեկնարանուած «Անրմնացանք»:

1

Եւ հարցնում եմ Աւագին.  
 — Մն՞ում է այն վարագոյրը...  
 — Մնում է:  
 — Իսկ մա՞յրը...  
 — Մայրը դեռ հաւատում է:  
 Յետոյ բարձրանում է մի այլ վարագոյր, եւ երեւում են արեւի շողերով ողողուած Արաքսի տափարակը, առափնեայ դեղնած եղէզները, որոնք հազիւ օրորում են դետի զովից:  
 Աւագի հետ հասնում ենք հնձած արտերի սահմանին եւ նստում միայնակ չինարու տակ: Ընկերս սրբում է ջրանած ճակատը եւ արեւից այրուած աչքերը դարձնում մութ սաղարթի կողմը: Ճիւղերի վրայ նստել են գէջ սարեակներ եւ դաշտային գորշ ճնճղուկներ: Նրանք անհանդուտանում են, եւ թւում է, թէ հարցնում են իրար, թէ ի՞նչ մարդիկ ենք, Հրացան Ղլա՞յ մեր ձեռքին կամ քար լե՞նք առնի: Ազգա Հանդարտում են, որովհետեւ ծեր սարեակը յանդիմանում է նրանց անտեղի յուզմունքի համար: Այնուամենայնիւ թռչունները բարձրանում են վերեւի ճիւղերի վրայ: Նրանք կորչում են տիւրեւների արանքում, եւ չի դադարում թռչնային անհանգիստ զրոյցը:  
 Ամառն է, յաւիտեան համր կաւ...

Ահա Հեռուում երեւում են այդինքնի գորշ պարիսպները եւ սնկերի պատերը՝ հատուցուած նոյն Հին կաւից: Արեւը խանձել է, քամին եւ անձրեւը պոկել են պարիսպների կտտարները, մի տեղ փոս արել, մի ուրիշ տեղ թողել սրածայր:

Նստել են կաւէ Հին պատերն այս ընդարձակ դաշտում, ինչպէս չոքած ուղտեր: Նրանցից մէկը ցցել է վիզը, միւսի միայն սապատն է երեւում, երբ որդը շոքել է տաղի ոտքերի վրայ, կարծես հիմա պիտի իջեցնի եւ յետին ոտքերը:

Գնա միջին Հին Բարելոն, էլամների աշխարհը, մինչեւ աղի լիճը եւ Միջագետքի խանձուած դաշտերը, ամէն տեղ կը տեսնես այս բիրլիսական կաւը, մահարձանի պէս մի շինար եւ սրբազան բզէզներ:

Իսկ այս դաշտում ինչքան արագ են մահանում պարիսպները, երկաթէ անիւնները տրորում են բրդոտ սարդերին, եւ արգուտնը կաւը ուռածանում է նոր սերմերով:

— Վե՛ր կաց, Աւազ, դո՛վն ընկաւ...

»

Նրան անուանում էին Աէթ, եւ որովհետեւ Հայրը վաղուց էր մեռել, կոչում էին մօր՝ Երանուհու անունով՝ Երանի տղայ Աէթ եւ կամ՝ Երանի Աէթ:

Կարճ էր Հասակը, թէ բարձր, թաւ էր ձայնը, թէ բարակ, եւ գիտէ՞ր նա սրինգ նուազել, սիրե՞լ էր նա մի աղջկայ եւ Հենց այդ շինարու տակ մեզ նման Հանգստացե՞լ էր նա, երբ վերադառնում էր Արաքսի ափերի արտերից, — այդ բոլորն ինձ չաւանդեց իմ ընկեր Աւազը կամ պուցէ ե պատմեց, սակայն իմ յերողութեան մէջ ժամանակը խոշնացրեց այդ պատմութեան պայծառ գոյները: Եւ հիմա, երբ դրում եմ նրա մասին, որին չեմ տեսել, ես իմ ընկերը պատմածից յերում եմ այն, որ Երանի Աէթը գիւղի ամենալաւ սերմնացանն էր:

Շոգից եւ յողովութեան ծանրանում են իմ կողմերը, եւ երբ փակում եմ աչքերս, լսում եմ Հաղարատը գերտնդիների խշուր, նոյնիսկ Հասկերի վայր ընկնելը: Յետոյ սաստկանում է այդ խշուրը, զով է լինում, եւ լսում եմ բազմաթիւ նիզակների իրար զարկելը: Աղմկում են եղէզները... Երեւի դետի Հունով լեռներից իջնում է սառը Հոսանքը:

Ապա մեկնում եմ Աւազի կողքին եւ աղմկող եղէզների արանքից նայում Արարատին: Երեւում է լեռան մուգ-կապույտ ստուերը, վրան ձիւնի նրման սպիտակ ամպ: Երբ օրօրում է եղէզնը, օրօրում է եւ լեռան կապույտ ստուերը, Հազի նշմարելի զոզում է զապաթի սպիտակ ձիւնը, որ ցուրտ ցուլէ է տալիս շիկացած օդում:

Ու լիաթոք շնչում եմ գովը, որ իջնում է լեռան բարձր զապաթից, ամպի նման սպիտակ ձիւններից եւ այն կապույտ, ինձ Համար յաւիտեան անհուսանելի ամպերից...

Գետնի կաւն արեւից ճաքել է: Խոր ճեղքերից բարձրանում է խանձուած Հողի բոյր: Մի սարգ Հիւսել է ոստայնը ճեղքի վրայ: Ծղնօտի Եայրը մտեցնում եմ ոստայնին, եւ Հողի մթին խորքից դուրս է վազում քաղցած գազանը՝ բրդոտ մի սարգ եւ ամենի արագութեամբ պտոյտ է անում ոսկեգոյն թելերի վրայ, անհամբեր փնտռելով որսը:

Մշնօտների արանքում մի սեւ բզէզ զլորում է աղբի կլոր գունտը: Ա-

Հա նա, աղքատներ սկզբաբեկը, այն քղեցը, որին եզրիպտացիք անուանում էին սրբազան, որովհետեւ Հաւատում էին, թէ նա է գլխորում երկրագունտը, ինչպէս այս կըրտ աղբը: Մի բողբէ նա սեւին է տալիս ծղնօտներէ մէջ, ապա աղբագունտի Հնա գլխորում Հողի ճեղքը:

Ես մասնորով տրորում եմ կաւը, ամենահին նիւթը, որ կայ այս տափարակում: Քանի՜ ոտքեր, քանի՜ ոմբուկներ եւ անիւներ անցել են այս կաւէ վրայով, ինչքան է ծեծել ձիւնը, եւ Հողմը, եւ արեւը, եւ անձրեւը:

Այս կողմերում Արաքսը դարձանը ելնում է իր արեւից, վարար ջրերը տիպ էն փուստ լայն տափարակի վրայ, եւ առափնեայ եղէգնուտները դառնում են կանաչ կողմեր: Սերմնացանը ցանում է սերմը, երբ յետ են գնում ջրերը, եւ դեռնին նստում է թաց տիպը: Նա Հանում է ոտքերը, մինչեւ ծնկները վեր բարձր եւ փայտեայ կոտը պարանոցից կախ՝ գնում է օրօր եւ Հաւատար քայլերով: Գնում է եւ աջ ձեռքով լիարուսն վերցնում ծանր Հատիկները, որ մի վայրկեան շուրջ են արեւի տակ, ինչպէս ճնճուկներին երամը եւ ծանրութեամբ ընկնում Հողի մէջ:

Ահա այդպիսի սերմնացան էր Սէթը, Հողի մշակ: Ունէր մի մայր, մի Հին տնակ, երկու բարդի, որի կատարին ամէն տարի ծանօթ արագիլը նորոգում էր բունը եւ ուսուս Երանի Համար բերում գորնան խնդութիւն, ինչպէս միւս արագիլները՝ գիւղի մնացած տներին Համար:

Երբ արագիլը տղմուտ Հողերում այլեւս գորտ չէր բռնում, ուրեմն յետ էին դնացել Արաքսի ջրերը, եւ ժամանակն էր, որ Սէթը կախէր կոտը, սերմ ցանէր, իսկ մայրը կնէր փորելու բակի մարգերը, որոնց կէսը փչացնում էին Հարեանի Հուերը, իսկ սոխի մարգում պատկում էր իր՝ Երանի կատուն:

...Այս ամենապարզ պատմութիւնն է, ամէնից Հասկանալին: Գիւղը դաշտակներ թիկունքում, գիւղում գաղտնի պատրաստութիւններ տպոտամբութեան, երբ Հարաւից արշաւէր կարմիր Հեծելազօրը: Ահի գիւղերը, բաւնութիւն, վախ, կողոպուտ: Գիւղերն էր, երբ դէպի դիրքերն էին քլում սովաւար մի բազմութիւն, երբ դիրքերից յետ էին փախում նրանք, որոնք ուզում էին զրտինք թափել Հողի վրայ, արտերը ջրել եւ ունենալ խաղաղութիւն իրենց խեղճ խրճիթներում:

Երբ գիւղում Հարաւից լսեցին թնդանօթի առաջին որոտը, եւ նահանջող թշնամին եւ դարձրեց ձիերի գլուխը, թշնամու թիկունքում պայթեց սպառնալուցութիւնը, որպէս արձագանգ այն առաջին որոտի, որ խրճիթներին աւետեց ազատութիւն դաշնակցական գերութիւնից:

Վերեւ էր, էլի արագիլներ կային, եւ իւրոտ փայլով արեւի տակ շողում էր արդաւանդ տիպը: Յանկարծ գնդակների տարափ տեղաց եղէգնուտներին կողմը, որտեղ սպիտակ ձիւտներին դէմ ամբացել էին մի խումբ սպառնալուց գիւղացիներ:

Սէթը չուցեց այն շինարու ետեւը, եւ որոտաց նրա Հրացանը: Արշաւազ ձիւտներին վախեցած երամը շաղ եկաւ, ապա նորից գունդ կազմեցին եւ թաց Հողերի վրայով միերը քշեցին դէպի միայնակ ծառը, որ սեւ ստուերը նետել էր ամայն դաշտում:

Երեկոյան կարմիր Հեծելազօրը գիւղը մտաւ: Միայն միւս առաւօտ, երբ եկան եւ ծանր թնդանօթները, դաշտի բարակ արահետով, կղէգնեայ պատգարակի վրայ, ընկերները առն բերին ըսպանուած սերմնացանի մարմինը: Նրա սրունքները մերկ էին, մի կողքի վըրայ շրթացած տիպ էր եւ խանձուած արիւն: Երեւում էր միայն սառած աչ-

քը, որ նայում էր անշարժ, ինչպէս գուրջ ամպը անհունի խորքից...  
 Նա արնաքամ սողացել էր թաց հողերի վրայով դէպի եղէգնեբլ, դէպի ջուրը, կուտ մասներով շանդռել էր գետինը, ցեխոտել էր մասնեքը եւ անզգայութեան մէջ ցեխոտ մասներով սեղմել էր թրատուած ուար: Յետոյ երեսն է վայր թաղուել էր սառը հողում՝ որպէս ոսկինստ սերմ:  
 Ես նայում էի մի ցածր դռնակի, որի ետեւը ո՛չ ձայն կար, ո՛չ շարժում: Արեւամուտին ախարան բարձր էին երեւում րակի երկու բարդիները:  
 — Երան հորքուրը ո՛չ տղայի դիակը անսաւ, ո՛չ թաղումը: Երբ նրան յայտնում են, որ ահա բերում են, նա ճշով դուրս է վազում, ըստ միևեւ շնամբը չի հասնում... Չորս օր մնում է ուշաթափ: Ասում էին, որ կը մեռնի...  
 2

Լեռնային գիւղերում այս շէնքը կը նմանուէր հին մարագի: Կտուրին կը լինէր կտր անցք, եւ տափակ մղաններով բարձր կալից յարդի տաք շեղջերն ալիքալիք կը մղանէին ներս: Յետոյ անցքը կը փակէին շոր ցախով, եթմի անտիրական շուն կը ձմեռէր յարդի վրայ, Մարտի վերջին շունը կը ցնկնէր վեց ապօրինի լակոտ, որ յլեացել էր ցարտ աշնանը, ցանկապատի տակ:

Այդպէս կը լինէր լեռնային գիւղերում:  
 Այս շէնքը եղել է հարթավայրի գիւղի կկեղեցին: Հանել են վարսագուրը, սրբերի պատկերները: Դարբինը տարել է մկրտութեան քարէ ուսուցանել են այժմ կարմած խոփերը նետում է աւազանի պղտոր ջրի մէջ: Արնայել են քարէ երեք աստիճանները, որով իջնում են գետնափոր ակումբը, երկու պղնձեայ աշտանակները, որոնցից կախում են նաւթի լամպեր: մասքել է եղէգնեայ կտուրը եւ ջահերի նման կախուած եղէգնեքը, որ ճօճում են, կրք բացում է դուռը: Ակումբի եղէգնեայ կտուրի տակ ապրում են հին աղանիներ, եւ կրք գուրը բուք է լինում, նրանք ծուարում են միւսից մըլլած նիւերում, այնտեղ, ուր պահում էին արծաթեայ անոթները:

Նոր նկարներ են դարդարում սպիտակ պատերը, եւ հին կամարների տակ հնչում են նոր խօսքեր: Այդ գետնայարկ շէնքում ողմկում են երիտասարդ սերնդի գուարթածայն դրոշմները:

Դրան գլխին, քարի վրայ, առաջին տարին բանդակեցին մի մուրճ եւ մի մանգաղ, ներքեւը՝ անպահճոյճ գրեթով գրեցին՝ «Կեցցէ»: Այդ անզարդ քանդակից այժմ ցուրում է առաջին հասարակական սրբազան պարզութիւնը, այն անկրկնելի հմայքը, որ ունի օղորնական օրերի անմարտ ոճը, երբ նոր մարդը հնի թանձր խաւարից թռչում է դէպի նոր արշալոյս եւ առաջին հետքերն է դրոշմում քարերի վրայ, թղթերի վրայ եւ պայծառ ինքուրթեամբ սկսում է իր նոր էջը:

Առաջին դրօշները գտնւում են սրբութիւն, հերոսներն անմահանում են, եւ գալիս են նորոգ գուտաններ՝ նրանց եւ այն հերոսական օրերի մեծարման երգերով:

Եւ ահա նոյնիմբերեան տօներին կղէգնեայ կտուրով այդ ակումբում եղաւ մի սովորական գէպը:  
 Վառել էին բոլոր ճրագները, եւ կամարների տակ դեռ մութ էր: Նոր նիսակ թռում էր, թէ ճրագների լոյսից աւելի էր թանձրանում խաւարը: Լուսաւոր էր բեմը, եւ բեմի լոյսը հազիւ էր հասնում առաջին շարքերին, որտեղ փայտեայ ցածր նասարանների վրայ իրար էին սեղմուել կանուխ եկած

Հանդիսականները :

Իրանակն անդադար բացւում էր, նոյնմբերեան քամին ներս էր փչում, օրօրւում էին եղէգները, եւ ճրագների լոյսը գողում էր : Մարդիկ, որոնք ներս էին մտնում այդ դոնակով, իջնում էին քարէ երեք աստիճաններով, նրանք կորչում էին մութի մէջ, երեւում էին ծխախոտի կրակները, ինչպէս քիչերային լուսաւոր բոլորները : Յետոյ առաջանում էին դէպի լոյսը :

Աղջիկները զարդարում էին բնօրէն : Ի՞նչ կարող է լինել դաշտերում, նոյնմբերեան օրերին... Դեղնաւուն փշատերեւ թուփեր, դեռ կանաչ մասրենու ճիւղեր եւ դաշտային արցանգեղներ, որոնք ծաղկում են ցրտերի հետ եւ միայնակ վայելում անան արեւը : Աղջիկները դեղնաւուն փշատերեւ թփերից, մասրենու կանաչ ճիւղերից եւ անան դաշտի ծաղիկներից հիւսել էին մանեակներ ու պսակներ, բամպակի բացուած կնդուղները հազարէլ էին պըսակներին եւ այդ տմէնը նկարների կարմիր երիզները հետ հիւսած՝ կարեւր պատերից :

Անկիւնում գրօշներն էին, որոնք հակումի էին կանգնել մի պարզ եւ արդէն կարմիրը մաշուած դրօշակի, որի վրայ նոյն անպահճոյճ մուրճն էր ու մանգաղը, ինչպէս քանդակել էին դրան ճակատին : Այդ աստամբութեան առաջին դրօշակն էր, որ պարզեց գիւղը, երբ հարաւից որոտաց ազատութեան առաջին թնդանօթը :

Դուռը բաց էին անում, ներս էր մտնում նոյնմբերեան քամին, օրօրւում էին եղէգները, նուազում եւ ապա բռնկւում էր ճրագների լոյսը, եւ ծփում էին դրօշակները : Ինչպէս հին պիտուր, որ խանձուել է անեղ մարտերում, ասպատամբեան խուճացած դրօշակը կարծես մեղմ շշուշով աւանդում էր սեղանի տրեքին այն պայծառ օրերի դաժան պարզութիւնը, երբ իրեն բարձրացրին հողի մշակները, որպէս փրկութեան փարոս եւ ասպատամբեան նշան, ինքը փողփողաց խրճիթների վրայ, լսեց գնդակների մեռադաժայն աղմուկը, տեսաւ առաջին զոհերի արիւնոտ մարմինները եւ, երբ պղնձէ փողները հնչեցին թաղման նուազը, խնարհուեց նրանց գերեզմանների վրայ :

Բնմի մարդկանց հետաքրքրութեան առարկան այն նոր վարազոյրն էր, որ քաղաքից նուէր էին բերել երկու երիտասարդ բանուոր : Նրանք վերեւեց ամբասցել էին վարազոյրը, մնում էր, որ ձգէին պարանը, եւ վարազոյրը ծալուեծալ իջնէր : Սակայն այդ հանդիսաւոր բոպէն թողել էին վերջը, երբ կը հաւաքուէին բոյրը, եւ իրենք՝ քաղաքից եկած երիտասարդները, խօսք կ'առնէին ողջոյնի եւ կ'առնէին իրենց այդ, ինչպէս եւ միւս նուէրների մասին :

Դոնակը նարից բացուեց, մէկը լուցկի վառեց քարէ աստիճանները լուսաւորելու, եւ մի ամբողջ խումբ երար յետեւեց ներս մտան : Լուում էր ծանր կօշիկների դոփին. ապա նրանք դուրս եկան մթնից, եւ հանդիսականները նրանց մէջ տեսան մի անմանօթ մարդու, որ հասարակ շինել էր հագել եւ ձմեռային գլխարկ : Նա խարխափելով էր դալիս, որովհետեւ ներսի տաքից գոլորշի էր նստել տկնոցների հաստ ասպակներին :

Միւսների հետ այդ մարդը բարձրացաւ բնմը, եւ նրանք, որոնք զրուցում էին կամարների ասի, առաջ եկան ու խիտ նստեցին, այնպէս որ վերջի շարքերը հաղիւ էին նշմարւում : Նա սրբեց տկնոցները եւ հետաքրքրութեամբ նայեց շուրջը : Աղանիները լուսաւոր բնմից եւ այդքան մարդկանց ազմուկից անհանգիստ թպրտացին կտուրի տակ, մի քանիսը ճախրեցին լոյսերի եւ մարդկանց վրայ, ապա կորան մութի մէջ :

Մարդը մպտաց աղանիները թպրտոցի վրայ, թէ՞ ջերմութիւն դաաց եւ յստակ ձայնով սկսեց իր պարզ զրոյցը :



Նա չէր գուցէ այն արթուն խօսքը, որ հոռու է, ինչպէս իմաստուն գրոյցը, երբ առաջին վայրկեանից խօսողն իրեն է բեւեռում բոլորի ուշադրութիւնը, երբ չկայ ինքը՝ խօսողը, իսկ նրա ճշմարիտ մտքերը ժուրճի նման հարուածում են եւ բախում խոր դռներ, երբ խօսքի մէջ կայ անխորտակելի ճշմարտութիւն, որ հարթում է իր ճանապարհը ուրիշների օրաում եւ ուղեղների մէջ, երբեմն փայլում բարձր մտքերով եւ երբեմն զարմացում իրերի ու մարդկանց ճշգրիտ ճանաչողութեամբ:

Նա խօսում էր այնպէս, կարծես պատմում էր միայն մէկին, այն սրբատաղին մտերմութեամբ, որ ունի պատմողը լսողի հանդէպ: Նա պատմում էր այն շարքալ օրերի մասին, որ անդարձ անցել են, խարբայութեան, սուտի, շահագործման, հողեւոր այլուստման, ծեծի եւ բռնութիւնների այն ժամանակների, երբ սով կար, եւ սուր, եւ բնաւ, եւ կեղեքում: Երբ պատմում էր այդ ժամանակներից, շատերը վերջում էին պատկերներ, որոնք անջնջելի դրոշմ էին դրել նրանց յիշողութեան մէջ: Ով քաղց էր յիշում, ով որդուհի՝ որ անվերապա՞ զնաց պատերազմ, ով յիշում էր իր դառն ապրտպտը, երբ բախում էր ունեւորի դուռը, եւ ում մէջքի վրայ խարազանի հետքերը սաւում էին, որպէս հին վէրք:

Յետոյ նա դարձաւ ապտամբութեան օրերին, իրրեւ միակ էլք, իրրեւ հոյակապ թոխէք զէպի ազատութիւնը, որպէս միակ ճանապարհ, որ մարդուն հանց լուսաւոր ափը: Նա յիշատակեց ստեղծագործ աշխատանքը, երբ անապատները յաղեհում էին լրից, եւ ուրախանում է մարդն իր ոտզած դուշտերով, երբ ծուխ է բարձրանում գործարանների ծխնւլոյզներից, եւ հերտաը դժուար աշխատանքով հալում ու կոփում է իր կամքը, որպէս ամրակուտ պողպատ:

Նա անսպասելի վերջացրեց... Բոլորովին հանդիտա, առանց ծայրը բարձրացնելու: Մի վայրկեան լուս մնացին, յետոյ բարձրացաւ ծափերի աղմուկը: Կարծես հազար-հազար ազանիներ թարտացին ու թափով ճախրեցին:

Հնչեց երգը, եղաւ նուազ, ապա նոր ողջոյններ, դարձնալ զուարթ երգ, դուրս եկաւ այն երիտառարդ բանուորը եւ խօսեց յախուռն աւիւնով: Նա թուեց նուէրները, եւ այդ վարկեանին ծանրութեամբ իջաւ նոր վարազոյրը, որ բերել էին նրանք պիղղական ակումբի համար:

Չարմանքի ալիքը զնաց մինչեւ վերջին շարքերը: Վարազոյրի վրայ ամբողջ հասակով նկարուած էր մի վիթխարի սերմնայան, յիստէ կոտը պարանոցից կախ, մինչեւ որունքները բաց ոտքերով: Լոյսի տակ շողում էին այն ոսկեղոյն հատիկները, որ աջ ձեռքով նա շաղ էր աալիս արզաւանդ ցիւերի վրայ:

- Երանի Սէթն է...
  - Իսկը Սէթը...
  - Աչքերը, աչքերը...
  - Էս մեր հողերն են... Ա՛յ էն զամիշները, էն մեր լիւր...
- Գիտէ՞ր այդ անյայտ նկարիչը Երանի Սէթին եւ այս գիւղը, նրանց հողերը, — զժուար է սաեւ: Գուցէ նրա համարձակ երեւակայութիւնը ազատ ճախրել եւ երկնել էր այդ պատկերը, որպէս ամենից յարմարը զիղակուն բեմի համար:

Առաջին տպաւորութիւնը մնաց անջնջելի: Թեթեւ ծփում էր վարազոյրը, սերմնայանը ծալում էր, եւ ներքեւից այնպէս էր թւում, կարծես քայլում է սերմնացանը, եւ գետի զովից օրօր-

ուում է եղէգնուտը: Իսկ խորքում՝ կապոյտ մշուշի մէջ, հազիւ նշմարելի երեւում էր զոյգ Արարատը, ինչպէս նոյեմբերեան պարզ գիշերներին երեւում է գիւղի կտուրներից:

Երկու կին, որոնց ազգական էր պատու Երանը եւ նրա նահատակ սր-  
ղին, ջերմ հաստով ընդունեցին ամբողջի կարծիքը, որ խօսք վարագոյրի  
վրայ Երանի Սէթն է: Նրապէց մէկը վեր կացաւ եւ փոքրիկ ձեռքը մօտեցրեց  
սերմնացանի բուրիկ ոտքերին: Կարծես իր ձեռքի ջերմութիւնն ուզում էր  
հաղորդել անկենդան պատկերին, իբրեւ ջինջ սիրոյ նշան: Միւսը եւ մի ու-  
րիշ կին մեղմ հառաչեցին ու լաց եղան մեռած սերմնացանի համար:

Այդ գիշեր արցունքը սրբազործեց մի ոսկի առասպել:

••

Քանի նոյեմբեր անցաւ...

Ու դեռ մնում է այն հողալէն ակումբը, եղէգնեայ կտուրով, եւ ծը-  
փում է վարագոյրը, եւ բոց աչքերով մի սերմնացան սեւ հողերի վրայ ա-  
ռատութեամբ շաղ է տալիս ոսկի հասիկներ:

Գայիս է արդէն խուլ մի պատու, եղէգնեայ աւելը ձեռքին: Սրբում է  
յատակը, զայրանում է աղանիների վրայ, երբ նրանք նստում են պղնձեայ  
աշտանակների վրայ, որ դրուած են վարագոյրի երկու կողմը: Նա աւելում է  
ակումբի բակը, ապա նորից ներս է մտնում եւ մաքուր ձեռքով սրբում վա-  
րագոյրի փոշին:

Երբ ոչ ոք չի լինում ներսը, պատու Երանը հանդարտ զրուցում է որ-  
դու պատկերի հետ:

Յետոյ մայրը համբուրում է սրչու անկենդան ոտքերը:

••

Փողոցի անկիւնում ինձ հանդիպում է իմ ընկեր Աւազը: Ես հարցը-  
նում եմ նրան.

— Մնում է այն վարագոյրը...

— Մնում է:

— Իսկ մայրը...

— Մայրը դեռ հաւատում է...

— Լաւ է, որ ոչ ոք չի փշրել այդ առասպելը:

Յետոյ Աւազն ինձ պատմում է նորութիւններ գիւղից եւ գիւղի մարդ-  
կանցից:

Փողոցով անցնում են մարդկանց զորասիւներ, թնդում է նուազախում-  
բը, եւ ես լսում եմ պղնձէ փողերի յաղթական երգը:

Յետոյ իմ աչքի առաջ յայտնում է մի յաղթանդամ սերմնացան, որ  
մեր սեւ ցիւրի վրայ ցանում է ոսկեհաստ սերմներ:

ԱԿՍԵՆ ԲԱԿՈՒՆՑ



Վ. ՕՇԱԿԱՆ

ՔԱՆԻ ՄԸ ՆՈԹ  
ՍԵՒ ԳԵԼԵՐԻ ՍԵՐՄՆԱԳԱՆԻ ՄԱՍԻՆ

Այս 2400 բառնոց կարճ գրութիւնը երկու մակարդակի վրայ դրուած է, հակառակ ունոր, որ մէկ պարզ պատմութիւն կը պատմէ եւ որուն կը յարին մարդիկ բնական հակումով մը: Կարելի է սակայն զայն նկատել միտմոյլի երկ, ճիշդ այնպէս՝ ինչպէս դրողը կը յղանայ իր գործը ու մեր գրողներէն ամէնէն շատ Բակունցի կը պատշաճի այս կերպը: Այսուհանդերձ, պատմութեան մերկուծումը կը յայտնաբերէ ճշմարտութիւններ, որոնք նոր գոյն կը նետեն մեր մտածելակերպին վրայ: Յետոյ, ամէն գրող իրեն յատուկ ուշադրանք կ'ունենայ, մարդիկ ու երեւոյթները դասաւորելու իր սկզբունքը ու սխալ չէ ըսել, թէ իր երկը իմացական այդ լուսաբանին մէջ միայն իր բուն նկարագիրը ցոյց կու տայ: Մէկ դիտարդ ըսելիք կ'ունենայ գրող մը, մէկ դադանիք, որ հազար ձեւերու տակ իր անձն է, իր էութեան միութիւնը՝ կտոր-կտոր ամէն գրութեան մէջ տարազնուած: Աւ յատկապէս՝ իր գրականութեան պորտաբարը կազմող երկերուն մէջ:

Այդպիսի գրութիւն մըն է «Սեւ ցիւրի սերմնացանը», յղացուած Բակունցի լուրջ ու հասուն շրջանին, 35 տարեկանին: Ոտրհրդաւայ գրականագէտներ (Թ. Չարեան, Երկիր, Ալիսի Բակունց, Երեւան, 1965, Ս. Աղաբաբեան, «Սովետական գրականութեան պատմութիւն», Ա. Հասար, Երեւան, 1961), որոնք պաշտօնական տեսակէտը կը պաշտպանեն՝ կ'ըսեն, թէ այս վիպակը ցոյց կու տայ հերոսներու մարդկայնութիւնը, խորհրդային կարգերու հաստատման համար մղուած կռիւններուն մէկ միջադէպը ու հայ գիւղացիի հերոսական բնոյթը: Այս բացատրութիւնը մասամբ ճիշդ է միայն: Բակունցը գիւղագիր, Հայաստանի բնութեան յաջող «նկարագրիչը», մարդկայնու-

Թեան ջատագովը — ինչու չէ : Բակունցը յեղափոխութիւնը նկարագրող, դա-  
 դափարական պայքարները ու դատակարգային տեսլականը արտայայտող զը-  
 րի՛նչ — համոզիչ ոչինչ ունի : Իր կրիչ պատմութեան քննարկներն, ուր Յեղափոխու-  
 թեան թեմային կը դպնայ ան («Վանդանց Բաղին», «Բրաւտի տղան» եւ «Սեւ  
 ցեյրի սերմնացանք»), եւ ո՛չ մէկը հատուցում է դասական դարձած Կար-  
 միր Բանակ — Դաշնակ կուռի առանցքին շուրջ : Այդ թեման պարզապէս պա-  
 րզայական ներկայութիւն մըն է, հանդիսատեսը ուրիշ, աւելի կարեւոր ե-  
 ղեթութեան մը : Շատեր հաւանարար ուզէին, որ Բակունց նկարագրած ըլլար  
 երկար-բարակ, ամէն տեսակ ամականներով ահաւոր տեսարաններ, ուր հա-  
 մայնափար դարձած միամիտ դիւղացին կը խուլանալու հակայեղափոխական  
 ուժերու կողմէ : Ի՛նչ ափսոս, որ «Խմբապետ Շաւարշ»ի նման գրութիւն մը  
 չունի Բակունցը... Ատոր զուտ զեղարուեստական պատճառը կայ, որուն  
 պիտի անդրադառնանք աւելի ուշ :

«Սեւ ցեյրի սերմնացանք» հերոս չունի, բարին աւանդական իմաստով,  
 ոչ ալ զէջքերու առանցք : Կան մարդիկ, որոնք ճառ կը խօսին, ուրիշներ  
 կեանքի ու մահուան մասին բաներ մը կ'ըսեն, սակայն անոնք ալ երկրորդա-  
 կան են : Պատմութիւնը տեղի կ'ունենայ լուսնային մէջ ու, որոշ անկիւնէ մը  
 դիտուած՝ նոյնիսկ հայկական բնաշխարհի մը ներկայութիւնը այնքան կեն-  
 ոական չէ Բակունցին, որուն համար ազդեր ու մարդիկ պատմութեան բնմը  
 եկած են շատ աւելի հիմնական ճշմարտութիւններ, Ժխակատարութիւններ  
 ներկայացնելու նպատակով :

Վիպակը չորս տեսակ զոյութիւններէ կը բաղկանայ — բնութիւնը,  
 միջնա ու թռչուն, մարդիկ եւ, վերջապէս, դիւցապունները : Ու զբաղէտին  
 ամբողջ արուեստը կը կայանայ ցոյց տալու մէջ, թէ այս չորսը նոյն բացաբ-  
 ծակ արժէքը ունին, անկախ իրողութիւններէն եւ, բայց այնպէս մը առնչուած  
 են իրարու, որ մէկ միութիւն կը կազմեն, որ զբաղէտին միութիւնն է, ո-  
 րովհետեւ ոչ մէկ երկվայթեան ու ոչ մէկ փշրանք հողի վրայ՝ գրողը դուրս  
 է, իբրև մարմին ըլլայ թէ իբրև գիտակցութիւն՝ այդ չորսի միութիւնն է :

Առանցքը կը կազմէ սերմնացանը, որ վիպակի մէկ երրորդը անցնելէն  
 ետք մէջնալ կ'ելլէ : Մինչ այդ՝ բեմը դրուած են միջատներ, հող, Աւաղ ու  
 եղէգնիք, արևով ողողուած եղէգնիք, որոնք քիչ ետք երազի մը մէջէն տես-  
 նուած բազմաթիւ նիպակներու իրարու զարնուելու ձայնը կը հանեն լեռնէն  
 իջնող ջուրի ազդեցութեան տակ, մինչ Արարատի դապտիին ձիւնը կը ցոլայ  
 շիկացած օդին մէջ : Այս առաջին շնորհաբերուն մէջ սակայն Բակունցը դրած  
 է իր գրութեան իմաստին բոլոր սեւապայները — եղէգ, կրակ, երկինք, եր-  
 կիր, ջուր, կարմիր, արեւ, հնութիւն : Կը պակսի միայն ճակատագրական  
 արարքը, դիւցապնին ծնունդը : Մտայեալ էջերուն մէջ զբաղէտը պիտի գծէ  
 ու նկարագրէ անոր ծնունդը, նոր առապելի մը հերոսին կեանքի գալը տող  
 առ տող՝ մինչև որ վերջին տողերը գոցեն անիւին շարժումը, դադարին ժա-  
 մանակն ու պատմութիւնը ու մենք մանեք դիւցապնի դրական նոր աշխարհի  
 մը մէջ, ուր սակայն կ'իջիտ հին աշխարհի օրէնքը : Այս հինը թիւադրելու  
 համար՝ Բակունցը գործածած է բազմաթիւ տարրեր — հին եգիպտական սքա-  
 րապէ բղջիլը, դրոշ ու մաշած պարիսպներ, աստուածաշնչական կաւը, Մի-  
 ջնապաքի խանձուած դաշտերը, ուղտեր, եւայլն :

Վիպակի կառուցին կարեւոր տարրերէն մէկը ժամանակն է : Առաջին  
 բաժնին ժամանակը՝ ներկան է : Ռոտակցական կարճ մաս մը կը ներկայացնէ  
 Աւազի տիպարը, այդ անունին մէջ դնելով իր հասարակ իմաստին ամբողջ  
 ծանրութիւնը : «Յետոյ քարմնու մ է մի այլ վարագոյր եւ կրեւում են ա-

րևի շողերով ողորդած Արաքսի տափարակը, առափնեայ շնդնած եղեգնե-  
րը, որոնք հագրի օրորում են գետի զովից»<sup>(\*)</sup> : Երկու տողով ճակունց տուած  
է արդէն Վահագնի ծնունդին հիմնական կէտերը — երկիր, երկինք, արեւ,  
եղէզ, ջուր : Այս ներկայանցեալ է արդէն, որ կը տարածուի դէպի ետ՝  
մէջն տանելու կենդանիները, միջտաները, բնութիւնը՝ իր մահուան եւ վե-  
րածնունդի քանի մը պատկերներով, որոնք զրութեան համամարդկային նը-  
կարագիր մը կու տան : Կան դադարաբի գիծեր — հողը, որուն մէջ կը կոր-  
սուին միջատը, մարդն ու իր ձեռակերտները եւ սակայն կը ծառայեն ու-  
նացնելու զայն նոր սերմերով : Հաս արուեստը ոճին մէջն է — իր նիւթին  
չափ տարրական, մերկ, սկզբնատիպարային լեզու մը՝ որպէսզի նուազագոյ-  
նի իջնէ մարդկային մտքի միջամտութիւնը իրականութեան նուաճումին մէջ,  
բնութիւն ու մարդ իրարմէ անջատ իբրեւ նկարագրութիւն՝ որպէսզի հաւա-  
սարօրէն մաս կազմեն մէկ ու նոյն իրականութեան, որ կան է : Կաւր, րուն  
հերոսը :

Երկրորդ բաժինը, որ կարճ էջ մըն է, անցելի մէջ, կը տեղագործուի  
Ք կը ներկայացնէ սերմնացտներն անձը, Սէթը : Սէթի մասին (որ Ազամի որ-  
դիններէն մէկն էր, ըստ Աւետարանի) ոչ մէկ ճշգրիտ տեղեկութիւն ունինք :  
Միայն գիտենք, որ իր մօր անունով կը ճանչցուի, գիտենք նաև սերմ ցա-  
նելու իր եղանակը : «Գնում է եւ աջ ձեռքով յիարուսն վերցնում ծամր հա-  
տիկները, որ մի վայրկեան շողում են արևի տակ, ինչպէս ձննդուկներ ի-  
րամբ, եւ ծամրութեամբ ընկնում հողի մէջ» : Մարդոց, բնութեան եւ կենդա-  
նիկներու սերտ յարակցութիւնը կրկին կը շեշտուի, մինչ սերմնացանի տիպա-  
րէն կը բխի համայնականութիւն մը, որ կ'ամբողջացնէ կառն յաւերճակա-  
նութեան յղացքը : Սէթ չունի իրեն յատուկ ինքնութիւն, այլ խորհրդանշանն  
է սերմնացանին, որ ո՛չ միայն ծանր պարտականութիւնը ունի շարունակե-  
լու կենքի ծաղկումը, այլևս տիեզերական սկզբունքի մը մէկ գործիքն է,  
մարդ ու մարդէ աւելի բան մը, որ պէտք է զստուի, որպէսզի կենքը չը-  
գադրի : Ու այս յաւերճացումը տեղի պիտի ունենայ երկու փլուզումի վրայ —  
բնութեան մէջ ու մարդկային երեւակայութեան մէջ :

Երկրական բայց կենսատու այս գերը իր առաջին յատկացումը կը  
ստանայ երրորդ բաժինին մէջ : Ժամանակը դեռ անցեալն է, 1920ի շուրջ,  
Անկիւն Հանրապետութեան շրջանին : Քաղաքացիական պատերազմ կայ Իսաչ-  
նակցականներուն եւ կարմիրներուն միջև, սակայն պատմական այս պատ-  
տառը բոլորովին պարզապական է, որովհետև բուն գործողութիւնը Սէ-  
թին գոհարեումն է : Տեսարանը յատկանշական է. Արևու էր, էլի արագիլ-  
ներ կային եւ իւրոտ փայլով արևի տակ շողում էր արգասանգ տիպը : Ցան-  
կարծ գնդակների տարափ տեղաց եղեգնուներ ի կողմը, որտեղ սպիտակ միա-  
ւորների զէւ ամբացել էին մի խումբ ապստամբ գիւղացիներ : Սէթը չափեց  
այն չիմարտ յետեր եւ որոտաց նրա երացանք... : Միայն միս առաւօտ,  
երբ եկան եւ ծանր քնդանօթներ զաշտի բարակ արանետով, եղեգնայ պատ-  
գարակի վրայ, ընկերները տուն բերին սպանուած սեմնացանին մարմինը :  
Նրա արուեսները մերկ էին, մի կողմի վրայ չարացած տիպ էր եւ խանձուած  
արիւն : Երևում էր միայն ատած աչքը, որ նայում էր անշարժ, ինչպէս գորշ  
ամալը անհունի խորից... : Նա արնաբաժն առագցել էր քաց հողերի վրայով

(\*) Ալիսի Բակունց, «Պատմութեան ճանաչում», Ա. շարք, Երևան. Հրատ. Հրատ. Ստ-  
մուէլ, Փարիզ, 1938 :

զէպի իղգնեմը, զէպի ջուրը...: Յետոյ երեսն ի վայր քաղուել էր սաղը հոգում՝ որպէս սպիտակ սերմ:

Մենքիլ իբրեւ ոսկեհատ սերմը ապագային, թաղուել կաւին մէջ ու ցեխին տակ՝ ինչպէս իր ցանած բոլոր սերմերը, մեռնել վերատին ծնելու համար՝ ուրիշ բան չէ, եթէ ոչ վերագարձը Հեթանոսական միջերուն ու վահագնին առասպելին ու պատահական չի կրնար ըլլալ հրացաններու որոտն ու վառուի ծուխը ու փայլող արեւը եղէզնուտներու կողմը...:

Չորրորդ բաժինը կրկին անցեալի մէջ է ու տեղի կ'ունենայ հաւանաբար 1920էն 25ի շրջանին: Կը կազմէ վիպակին կեդրոնը ու կը ներկայացնէ առասպելին ծնունդը: Վայրը՝ ակումբ մը, որ առաջ եկեղեցի եղած էր, որ մարտի կը նմանէր...: Սակայն ոչինչ փոխուած է. մկրտութեան քարը կը ծառայէ խոփերը թրծելու, բայց խորհրդանշական իմաստը նոյնն է: Գետնափոր ակումբին զանազան մանրամասնութիւնները կը յիշեցնեն Հեթանոսական միջնադարը — պղնձեայ աշտանակները, ջահերու նման կախուած եղէգները, եղէզէ շինուած կտուրը, որուն տակ կ'ապրին հին ազանները, նիշերուն արծաթեայ անոթները, գուսանները, որոնք Հերոսները կը ժեծարեն երգերով, պարմանուհիներն ու նաժիշաները, որոնք ծաղիկներով կը զարգարեն բեմը, դրօշակները, պղնձէ փողերը, եւայլն: Գիւղացիք խոնուեր են, որովհետեւ ակումբին բացումը տեղի պիտի ունենայ, նոր սկիզբ մըն է ու նոր վարագոյր մը պիտի դրուի: Մինչեւ այդ՝ հարստասան մը կը խօսի՝ «մալդուսն» նոր սկսող պատմութեան մասին, անոր հոյակապ թռիչքը զէպի ազատութիւն... ստեղծագործ Հերոսին դժուար աշխատանքը, մինչ ծուխը կը բարձրանայ Հեռուն, բարաքի գործարաններու ծխնելոյզներէն, եւայլն: Վարագոյրին բացումը առասպելին ստեղծութեան առաջին արարն է:

Վարագոյրի վրայ ամբողջ հասեկով նկարուած էր մի վիթխարի սերմնացան, փայտէ կտուր պարանոցից կախ, մինչեւ սրունքները բաց ոտներով: Լոյսի տակ շոգում էին այն սուկեղոյն հատիկները, որ աչ ձեռքով նա շաղ էր տալիս արգասանք ցելերի վրայ»:

Ուշագրու երեք կէտ կայ նկարին վրայ — սերմնացանին վիթխարի աչքերը, եղէզները, լեռը: Ժողովուրդը վարագոյրին վրայ կը ճանչնայ իր սերմնացանը, բայց Բակունց անմիջապէս կ'աւելցնէ. «Գիտէ՞ր այդ անյայտ նկարիչը Երանի Սէթին եւ այս գիւղը, նրանց հողերը, — դժուար է ասել»:

Քանի մը կրնէր արդէն կը հաւատան, թէ Սէթին նկարն է, ու այդ գիւղին իսկ անոնց «արցունքը սրբագործնց մի ոսկի առասպել»:

Ահա այս կերպ Բակունց մեզ կը յայտնէ, թէ առասպելային մասնագիտութիւնը ո՛չ միայն չէ մեռած, այլև գործօն է մեր դարուն՝ յար եւ նման հին ժամանակներուն: Վերջին բաժինը մեզ ետ ներկային մէջ կը բերէ, յաղթական ներկայի մը, որ կ'իշխէ առասպելը: «Ու դեռ մնում է այն հողաշէն ակումբը, իղգնեմի կտուրով, եւ ծփում է վարագոյրը, եւ բոց այժերով մի սերմնացան սեւ հողերի վրայ առատութեամբ շաղ է տալիս ոսկի հատիկներ»:

Ու վիշապաքաղ Վահագնի առասպելը, որուն շնորհիւ մեր նախնիքը իմացական ու զգացական ուժ կը դռնէին մարդու վայել կիսնք մը ապրելու՝ կը վերածննդ մեր օրերուն՝ կերպարանափոխուած իբրեւ սերմնացան Սէթի առասպելը: Կայ ծակի աստուածէն՝ աշխատանքի եւ ստեղծագործումի աստուածը, պահելով սակայն երկիր ու երկինք իրարու միացնող եղէգը ու արեգակնային աչքերը եւ կտուրով ո՛չ այնքան ընդդէմ վիշապներուն, որոնք կը լլկէին հիներուն երեսակալութիւնն ու երազները, այլ՝ մեր օրերու մարդկային շարքին, առեւտրական ու պատերազմի ոգիին գէժ: Նոր դարերու վիշապաքաղը սերմ-

նացանն է, որ մահուան դէմ կը պայքարի ու կը յաղթէ: Այս է պատճառը, որ Բակունցի մօտ սփիւն ու ողբերգութիւնը, մահուան եղբրական նկարագիրը բացակայ են, պարզապէս որովհետեւ իրեն համար մահը նոր սկիզբ մըն է, մարդիկ չեն մեռնիր, այլ ետ կաւին մէջ կը մտնեն ու կեանքը կը շարունակուի: Ողբերգականութեան այս պակասին համար է, որ Բակունցի հերոսներուն մէջ լաւը կամ վատը չկայ, ո՛չ զբախանք, ո՛չ ալ ծիսականք, ո՛չ յեղափոխականք, ո՛չ ալ հակախղափոխականք, ու հեղինակը երբեք չի դատեր կեանքն ու իր հերոսները: Չկայ նաեւ մարդու, եւ արեւելահայերու արտին այնքան մօտիկ «Ժողովուրդ» իրողութեան ո՛չ պաշտամունք, ոչ իսկ սէր: Գրողը անշուշտ կը սիրէ գիւղացին, անոր բնազդական կապերը լեռներուն հետ ու արձատները հողին մէջ, սակայն այդ պարագան երբեք յայտնի չէ իր զբառներուն մէջ: Ոչ ալ դասակարգային կամ նոյնիսկ, այս վիպակի պարագային զոնէ՝ աղբային, հայկական մտահոգութիւն: Ոչ իսկ ճակատագիր կամ աստուած կոչուած խնդրական էութիւնները: Ի վերջոյ, կուի մակարդակէն դիտուած՝ աստուած, մարդիկ, անասուններն ու ծառերը իրարմէ շատ ալ տարբերութիւն չունին: Ու կաւը՝ յաւիտենական ներկան է, միակ մունջ, քայց ամենատես լկան, նոյն միայուն արժէքով, անշարժ:

Այս կացութեան մէջ միայն ժամանակն է, որ կը փոխուի, կը շարժի, մինչ կեանքը կը մնայ անփոփոխ: Յեղափոխութիւն ու Պատերազմ, Համաշխարհային պատերազմն ու Դաշնակցութիւն՝ զուրկ են իրենց ընթացիկ զգացականութիւնէն, որովհետեւ դիւցազնը բարձր է միշտ այդ պարագայական իրողութիւններէն: Միայն մէկ հարցի մէջ Բակունցը կը թուի մտածումի խտացում, ճշգրտութիւն փնտռել — այդ ալ առասպելի ստեղծիչն ու առասպելին կէտնք տուողին յարաբերութիւններուն հարցն է: Ըստ վիպակին, եթէ առասպելին արտաքին կերպարանքը, այսինքն՝ ակումբի վարպետը Վրայի նկարը արեւտապէս զործն է եւ ուրեմն քաղաքէն միայն կրնայ գալ ան՝ գիւղացիներն են, որ առասպելին կեանք կրնան տալ, հասարակ ժողովուրդը, այդ տարերային կիները, որոնք ջերմ հաւատքով ընդունեցին ամբողջի կարծիքը եւ որոնց մեղմ հառաչանքն ու լացն է, որ իրականութեան փոխեցին լաթի կտորի մը վրայ գծուած նկարը: Հետաքրքրական պիտի ըլլար ուսումնասիրել Բակունցի սէրը գիւղի ժողովուրդին հանդէպ: Ի՞նչն է, որ կը մղէ իրեն նման զրույ մը իր սուղ ժամանակէն արամադրելով վարդան Այգեկցիի գործով զբաղելու: Ետտ հաւանաբար ճիշդ մը կար «Ժողովուրդ» կոչուածին էութեան թափանցելու՝ առականերու ճամբով: Արդեօք ունէ՞ր կասկածը, թէ այդ ժողովուրդի միասնիքը կրնար լինելու խորհրդաւորութիւն մը ըլլալ լոկ, դունաւոր պղպծակ մը, անբովանդակ յղացք մը, որ սակայն պիտի ծառայէր մեղմելու գիւղէն քաղաք գալթած, փախած, կծիկը դրած դրագէտներու խղճի խայթը: Եւ կամ՝ այդ յղացքը միայն թոյլ, միամիտ մտածում չէր՝ այլ ունէր որոշ իրաւութիւն — հերոսական, անմեղ, մանկութեան նման կորուստէլ զբախտի մը կարօտը, որ կը կապէ զինք գիւղին (նոյնը չէ՞ թուածանիկ պարագան) եւ ուրեմն՝ այդ միտքը վաւերական զգացումն է իրեն նման զրոյներու: Վստահօրէն այս տեսակ զգացումի մը կը պարտինք իր կողմէ Կոկոյի «Քարաւա Պալլապայի թարգմանութիւնը: Կոկոյի նուիրուած իր մէկ ուսումնասիրութեան մէջ, Բակունցը կը գրէ. «Վի գէպ, հարցի այս արձույթով (Քրիստոսեանի հաւատքի ու Թարաւ Պալլապայի առեւտրութեան կ'ազնարկուի — Վ. Օ.) արքան են իրար նման «Տարաւ Բալլապայ» եւ... Եղիշէի «Վասն պատերազմին վարդանանց» պատմութիւնը, եւ սխալ կը լինէր արդեօք ենթադրել, որ վերջինս եւս սուկ գրական գործ է, որի հեղինակն առա-

ւել համ պակաս չափով օգտուել է իւր ժամանակի գուտանքի քրտնաբերից : ... «Գոգուր գուրկ շեր ուրիշ, աւելի շքեղ աշխարհի տեղանքից : Որքան գորշ եւ տաղտկալի էր շրջապատը, այնքան աւելի գորեղ էր նրա ներքին մղումը՝ այլ արտնքնաբերում գտնելու այնպիսի մտադրանք, որոնք հերոս էին» (Ա. Բակունց, «Գրականութեան մասին», Սրբեան, 1959, էջ 92) :

Այս հարցումներուն պատասխանը դեռ չունինք : Ինչ որ օակոյն յըստակ է՝ այդ դիւցազներգական երեւակայութիւնն է, որ կը պրկէ իր մտքին հարկունները, իր մէջ համատարած սէրը, անուազն բացութիւնը, ընկալչութիւնը՝ արարչագործութեան մէն մի հիւլէին հանդէպ, բրդոտ սարգէն մինչեւ Արարատի կապոյտ մշուշը : Որոշ իմաստով, այս երեւակայութիւնը փախուստի միջոց մըն է առօրեայի ճակատագրի հետեւի հերոսական ժամանակ ու վայր, եւ որուն արդիւնքը թէ՛ իբրեւ արուեստ եւ թէ՛ իբրեւ դաստիարակ՝ անհամեմատօրէն բարձր է : Քան թուամեաները : Արդեօք ի՞նչ դուրսգործոց պիտի ունենար մեր գրականութիւնը այսօր, եթէ Բակունցի կարողութիւնները Ստուլցի Գալիթի առասպելին վրայ կեդրոնանային : Իրականութեան փախուստը հասարակ տեղիք է անշուշտ, նոյնիսկ երբ Բակունց, հողեկան յարակցութիւն մը տեսնելով իր ու Գոգուրի միջեւ՝ կը պրկէ, վերջ յիշուած ուսումնասիրութեան մէջ. «Եւ անա տեղի է ունենում հոգու իւրատեսակ մի փախուստ՝ մաշյլ ժամանակից եւ անհրապարհ շրջապատից դէպի հինը, դէպի կողմնակից ազատ եզրայրութեան ժամանակները : «Օ՛, որքան գարշելի է իրականութիւնը, գարշելի նրանով, որ նա հակառակ է ցնարքին», — բացագոյնում է Գոգուր իւր հերոսներից մէկի բերանով : Ինչ որ օակոյն կը փրկէ զբազա մը հասարակ տեղիքի դաստապարտութենէն՝ փախուստին վերջին կայանն է, որ Բակունցի պարագային ո՛չ ետի հետեւն չենքու էլտորատանն է, ոչ ալ ամառի կտակալի մը ծոցը, այլ՝ մարդկային մեծ տաղանակներու ոլորտը : Բակունցի այլ մէկ ուսումնասիրութեան մէջ, նուիրումս ձոնաթան Սուրբիթին, դժուար չէ զգալ իրլանտացի գրողին հանդէպ իր բացառիկ համակրանքը, որ կը բխի հոգեբանական ու իմացական սկզբունքներու նմանութենէ մը, որովհետեւ երկուքն ալ կը պայքարին մարդկային ստորնութեան ու կեղծիքին դէմ ու Սուրբիթի նման Բակունցն ալ կը հակադրուի իր միջավայրի մտածողութեան դէմ : Երկուքն ալ, մասամբ այդ ընդդիմութեան, անհամընթացութեան հետեւանքով ողբերգական ելք մը պիտի ունենային աշխարհէն — Իրլանտացին դէպի խնկութիւն, Հայը՝ դէպի գեղեցկահարութիւն : Գրագէտին եղբրական մահը մեր գրականութեան անդիր օրէնքն է անշուշտ ու մատի վրայ կը հաշուելին անոնք, որոնք իսպառ ջուրով զոցած են աշխարհին : Ու մեր ժողովուրդը, որուն յիշողութիւնը կարճ է ասանկ պարագաներու՝ ոչ իսկ անմահութիւն կը խոստանայ :

Հոգի, բնութեան, հողագործի, աշխատանքի ու կեանքի հանդէպ Բակունցի վստահութիւնը այնքան անսահման կը թուի ըլլալ, որքան իր հասարակութեան հանդէպ : Բայց ինչ որ այս վիպակին կու տայ զուս հայկական ինքնութիւն՝ այդ վահագնի ծնունդին օգեկոչումին ձգտող ու զայն վերստեղծող թէ՛ բաւերն են եւ թէ՛ ալ ոճը : Յստակ է եղէգի խորհրդանշական արժէքը (բառը ՆՏ անգամ կը կրկնուի), արեւի եւ լոյսի նշանակութիւնը (26 անգամ կրկնուած ու այդ յանախակութիւնն իսկ՝ թերադրելու համար դիւցազներգական ամուսնի ոճը) ու այն զուսպ, պիտի անանձնականութիւնը, ատարկայականութիւնը, որով գրագէտը կը ներկայացնէ մարդիկ ու աշխարհ եւ ուրիշ դուրս է իր անձը, իր նախասիրութիւնները, նման գուտանքներու



ոճին, որ արուեստագէտին անձը հետու կը պահէ իր գործէն: Բակունցի Քնն-  
 Արձին բուն նպատակն է գրել այնպէս, որ մարդն ու հողը գիրար ամբողջա-  
 ցընեն, մարդը չըլլայ գերադաս, գործոն դերակատար՝ ոչ ալ բնութիւնը կը-  
 բաւարարէ ներկայութիւն մը, այլ երկուքն ալ գործիք ըլլան, միջոցներ՝  
 պերագոյն նպատակի մը համար, որ կեանքի յաւերժութիւնն է: Այս միա-  
 ցումին, կապակցումին համար միջատները, թռչունները իսկաւ գործիքներ  
 են, նոյնիսկ ուղտերը... Միջատ մը իբրև կաւի երկարածուց մը, իբրև  
 կաւին կեանքի դալը, ու մարդը՝ միջատէն ու թռչունէն անդին՝ նոյն կեան-  
 քի ուժին երկարածուց մը, որ կր յանգի ատասպելին, որ կրկին կեանքի նոյն  
 ուժին, մղումին կը հնադանգի: Բակունցի մօտ շէտայ մարզակեղքոն գունաւո-  
 րումը աշխարհի էակներուն եւ իրերուն, որուն կը հանգիպինք ամանտիկ  
 գրականութեան մէկ ծայրէն միւսը: Այսպէս է, որ բնութեան բնակիչները  
 ոչ թէ իրար կը վարակեն, այլ իրարու կը նմանին, նոյն շարժումները կ'ը-  
 նեն, գրեթէ նոյն բանն են՝ տարբեր մեւերու սակ — տուները եւ ուղտե-  
 րը, արշաւող միւսերները, թռչուններու երամները եւ ակումբի ճափերուն  
 աղճուկը, միջատներու գործունէութիւնը, անճշտակներու խօսակցութիւնը,  
 եւ այլն:

Միութեան նոյն օրէնքը կ'իշխէ գաղափարներու աշխարհին մէջ — հե-  
 թանոսութենէն Քրիստոնէութիւն ու անկրօնութիւն, Դանակցութենէն Հա-  
 մայնապարտութիւն՝ միակ ու նոյն իրականութիւնն է, որ կը շարունակուի  
 անպարտելի ու անզիջողբելի: ոչինչ կը փոխուի, ոչ մէկ նորութիւն՝ խորա-  
 գոյն ճշմարտութիւններուն մէջ քաղաքի արուեստագէտին համար, որ առանց  
 երբեք ճանչած ըլլալու ո՛չ Ալթը, ոչ ալ դիւղը՝ «գիտէ» ինչ է ատասպելին  
 էութիւնը:

Բայց դեռ կը մնայ անպարտ կեանքը, դաշն ապրելու ողորդութիւնը,  
 մարդ ըլլալու անկարելութիւնը: Կը մնայ սէքը, մանկութեան արդամը, հե-  
 րոսներու կարօտը, թշուառութիւնն ու անօթութիւնը մարդոց, հայ ըլլալու  
 տառապանքը: Ի՞նչ պիտի ըսէր Բակունց այդ հարցումներուն: Հաւանաբար  
 պատասխանէր. «Մարդ կամ կ'ապրի՝ կամ կը սոնդի», իր սերմնացանին  
 օրինակով, որ պէտք է մեռնէր՝ որպէսզի ստեղծէր Առասպելը: «Արուեստա-  
 գէտին օրինակով», պիտի աւելցնէր:

ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ

Ռէպորտ, 12 Փետրուար 1980

Յ. Պ Է Բ Պ Է Բ Ե Ա Ն

ՊԱՐՍԿԱՂԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ԱԼՄԻՆ՝ «Լուսարարութիւն».  
ՌՌԻԲԻՆԱ՝ «Իմ սիրտը».  
ՎԱՐԱՆԴ՝ «Արեւաբար».

Վերջին տարիներուն լոյս տեսած պարսկահայ երեք երիտասարդ բունտատեղծներու տուեալ զօրծերուն զննարկումը հետաքրքրական է իր զանազան երեսներով եւ կարեւոր հարցեր կը դնէ պարսկահայ բանաստեղծութեան զարգացման դիմաց: Բնականաբար, Ռուբինա, Ալմին եւ Վարանդ ստեղծագործող միակ նոր դէմքերը չեն, անպայման ըստեղծագործող ուրիշ դէմքեր եւս գոյութիւն ունին, սակայն վերոյիշեալներուն զօրծերը միայն Հասած են իմբադրութեան եւ, պէտք է աւելցնել, որ իրենք ամէնէն աշխոյժ դէմքերը ըլլալ կը թուին ներկայիս:

Պարսկահայ մշակութային իրականութիւնը իր որոշ առանձնաշատութիւնները ունի: Պարսկահայ զաղութը Սփիւռքին կը պատկանի, սակայն լեզուական ճամբով կապուած է Հայաստանեան գրականութեան: Այս կապութիւնը, մանաւանդ եթէ նկատի ունենանք Պարսկաստանի աշխարհագրական դիրքը, կրնար զրական ազդակ մը ըլլալ՝ համադրելու համար արեւելահայ եւ արեւմտահայ բանաստեղծութեան ժառանգութիւնները, սակայն նման միտմունքով չենք Հանդիպիլ, այլ՝ աստիճանաբար արեւմտահայ աւանդութիւնը կը դառնայ մակերեսային ներկայութիւն եւ արեւելահայ բանաստեղծութեան զուգակեռ քերթողութիւն մը կը զարգանայ, առանց սակայն նոյն ուժականութեան կամ Համապատասխան

բովանդակութեան: Հարցը շատ աւելի մտահոգիչ է, քան կը թուի առաջին ակնարկով: Մըտահոգութիւնը Հասկնալի կը դառնայ, երբ պարսկահայ բանաստեղծութիւնը կը քննարկուի ընդհանուր քննադիմ մը մէջ: Նման մեկնակէտ մը նկատի ունենալով, կը հարցադրենք — ինչո՞ւ այս երեք բանաստեղծներուն ստեղծագործութիւնները շատ անձնական են եւ վերացական: Ինչո՞ւ Հաւաքական — ընկերային իրազանութիւնը տեղ չունի իրենց գործերուն մէջ: Ինչո՞ւ նոյն քնարական — ազգային ծանօթ նիւթերու շուրջ թափառող ծանօթ յղացքին կրկնութիւնը (չըսելու համար վերաբառադրութիւնը) կը կատարուի, զիչ մը նուազ կամ անաւել յաջողութեամբ:

Երբ, մինչեւ իսկ բանաստեղծական բառապաշարը (diction) չէ նորոգուած, ծանօթ յղացքի մը վերաբառադրութիւնը նման գրութեան մը կը մատնէ բանաստեղծութիւնը: Երբ ախտաճանաչողական նման դիտողութիւն մը կը գումարենք բանաստեղծութեան յանգ զթիւնը՝ քրոնիկ հիւանդութեան՝ պատկերը բաւական Հասկնալի կը դառնայ: Տակաւին վերջերս, նորայր Աղալեան լայն քննարկումի կ'ենթարկէր խորհրդահայ ժամանակակից բանաստեղծութիւնը եւ Հետեւեալ տողերը կ'արձանադրէր այս առերջութեամբ.

«Այստեղ քաֆուած է ժամանակակից A.R.A.R.@»

տս|իտսահայ պոեզիայի ամենամեծ տղտո-  
ներից մէկը՝ յանգ շաղկն ու յանգ քնն-  
լը»(1) :

Տուեալ յօդուածին մէջ, Աղաւեանի  
արտայայտած մտքերուն մէկ կարեւոր  
մասին հետ կարելի է տարակարծիք ըլլալ  
եւ կամ զանոնք Հարցադրելի նկատել,  
սակայն այստեղ ամբողջութեամբ համա-  
ձայն ենք իրեն հետ :

Հոս գիտել պիտի տրուի, թէ պար-  
կահայ երիտասարդ բանաստեղծները յա-  
ճախ կը փորձեն դուրս գալ այս յանգա-  
պտոյտէն... Սակայն սովորութիւնը կայ,  
ինչպէս եւ այդ Հասկացողութեամբ բա-  
նաստեղծութիւն գրելու վարժութիւնը,  
որ աւելի վտանգաւոր երեւոյթ է :

\*\*\*

Այժմին Վոյսարրուբին»(2), գիրքի  
առաջին քերթուածէն իսկ կը նշէ բանաս-  
տեղծութեան ճամբով հեղինակին ինք-  
զինք զանելու բուսական ծանօթ եւ վիպա-  
պաշտ հասկացողութիւնը :

Ո՞ր, երգ իմ, երգ իմ,  
Քո էտրեան մէջ  
Անհատն՝ւմ, անվե՞րջ  
Ուզում եմ լսել  
Ձայնս անփակամ... (էջ 7)

Բնականաբար, հոս ո՛չ բանաստեղծու-  
թեան եւ ոչ այ տողերուն գեղագիտական  
արժէքը կը քննարկենք: Երբ երգ եւ բա-  
նաստեղծութիւն հաւասարութիւն մը կը  
ստեղծուի եւ բանաստեղծութիւնը ենթա-  
կային համար ինքզինք զանելու ձեւ մը  
կը դառնայ՝ պարզապէս մտանաւած  
կ'ըլլանք Այժմին բանաստեղծութեան ե-  
զանակը: Բանաստեղծութիւն - երգ Հա-  
ւասարումէն ետք, անոնց պիտի հետեւին  
զանյայտ պոետքը, ճեղքը, մեղրամոմէ  
մասնիկները, շողիկները եւ շուտով  
ձեռնարկները, շողիկները, շոյտի, լոյսի մի  
աշխարհը... և ապա տէրեանական Հաս-  
կացողութեամբ Վոյսարրուբինէն ինչ-  
պէս, «Սակայն սովորութիւնը կայ»,  
«Սակայն սովորութիւնը կայ»:

«Հայրենի հողեր» բանաստեղծութիւ-  
նը, որ ազգային-հասարակական հարց մը

կ'արծարծէ, նոյն բառապաշարն ու նոյն  
վերացականութիւնը կը պարզէ-

Դուք հատատմէս, սէ՛րս բոցավառ,  
Մանկական սրտիս տրտիւնը ցիւց  
(էջ 41)

Այս տողերը կարգալով ընթերցողին  
առաջին հակադրեցութիւնը այն կ'ըլլայ,  
որ ի՞նչ մանկական սրտի մասին է խոս-  
քը... Դժբախտաբար, նոյն Ռախու-  
թեամբ եւ մակերեսայնութեամբ կը շա-  
րունակուի քերթուածը:

Այլուր՝ զաղթէն փրկուած մեր ժողո-  
վուրդին հակասադրեր կը ներկայացուի  
այսպէս.

...Փոխուեց սաղայն  
Բայտը դաժան  
Իմ պայտարազ ժողովուրդի  
Եւ դու հիմա  
Հիմքն ես գարձել ու հնոցը  
Հայրենական գործարանի (էջ 29)

Նման քարոզական լուռնայնէր յիշ-  
ցնող տողերու, ներկայիս, բարեբախ-  
տաբար, մինչև իսկ օսվեստահայ բանաս-  
տեղծութեան մէջ չենք հանդիպիր, ո՛ր  
մնաց անոնց ներկայութիւնը համոզել  
զանեկ Պարսկաստանի մէջ... ձիւղ այս  
պատճառով ալ կը յայտնենք, որ ազգա-  
յին-հասարակական տարածանք չենք տես-  
ներ պարսկահայ արդի բանաստեղծնե-  
րուն մօտ, տակաւին առանց նշելու տե-  
ղական ու ընկերային հարցերու սուղա-  
կի կամ անուղղակի արձագանգին չգո-  
յութիւնը՝ ժամանակաշրջանի մը ու  
վայրի մը մէջ, որ ընկերային-ազգայնա-  
բարանական սուր տարածանք կ'անցը-  
նէր...:

Այլուր, ինչպէս Վերջը տունց, վերջը  
տարաւ» բանաստեղծութեան մէջ, լեզ-  
ւական-յանգային մտածողութիւնը պատ-  
ճառ կը դառնայ, որ բանաստեղծութեան  
տեղ բառակոյտ մը կուտակուի էջին վը-  
րայ: Այժմին աւելի աշխուժ է սակայն,  
երբ սեւակեան ժառանգութենէն կը փոր-  
ձէ օգտուիլ եւ, հաւանաբար, այս երո-  
կը դարգացնելով առաւելագոյնս կրնայ

բեղմնաւորել իր բնատուր կարելութիւնները: Նման անկեղծ շեշտ մը եւ արուեստի մը նշմարելի է «Դլանիկն ու ես» կամ «Բն ձմեռ»-ը: «Այո»-ն բանաստեղծութիւններուն մէջ:

Օրին, «Բագին» առանձին անդրադարձած էր Ռուբինայի «Իմ սիրտը» հատորին(3): Սակայն քննարկման այս ընդհանուր ծիրին մէջ օգտակար կը դաննեք պահ մը դարձեալ կանգ առնել գործին դիմաց, որոշ առանձնայատկութիւններ նշելու համար:

Ռուբինա աւելի տաղանդաւոր չէ Ալմիին կամ Վարանդէն: Իր արտադրութեան մէջ եւս նշմարելի են նոյն ինքնազրոյց յղացքի մը բացակայութիւնը, վերացականութիւնն ու կենդանի արտեայի մը չզոյրութիւնը, սակայն ան աւելի համեստ ըլլալով իր ինքնապատկերացումին բացակայութիւնն ու կենդանի արտեայի մէջ, շատ աւելի հետաքրքրական կը յաջողի ըլլալ:

Բացարեւելք, Ալմիին եւ, մանաւանդ՝ Վարանդ, արդէն իբրեւ պոետ կը դասանին իրենց անձը եւ նման հետաւորութեան մը կը փորձեն դիտել շրջապատը: Վարանդ պիտի ըսէ.

Եւ ես սրբէս ետ Տաղի Թար օրդին  
Ու նաեւ կրկին եկող մի պոետ,  
Վե՛ս կը բարբառեմ կանգնած գագաթին  
Իմ կերթուղու թեմե՛ Աստի այս երկարէ(4)

Ալմիին աւելի համեստ է եւ միմիայն «ամլայտ պոետի» համբոյրին մասին կը խօսի կամ «քանաստեղծելիս» ըսելով իր անձին կ'ակնարկէ: Սակայն, երկու պարագաներուն ալ, բանաստեղծը առաւելաբար իր ետով կլանուած է, որ կրնայ մեզ հետաքրքրել կամ չհետաքրքրել, եւ չի յաջողի իր այս ինքնապատկերացու-

մի (ինքնադիմագրութեան) շրջանակը փշրելով անկէ դուրս դալ:

Անձնական եսի կաշկանդումին մէջ չէյնալու առաւելութիւնն է, որ կը փրկէ Ռուբինան, իր փորձառութիւններուն որոշ թարմութիւն եւ աշխուժութիւն հաղորդելով:

Ան շատ աւանդական, մինչեւ իսկ պարզունակ տողերու ընդմէջէն կրնայ յանկարծ անակնկալ պատկեր մը ստեղծել: Այսպէս կը պատահի «Ես քու վրէժն» կտորին պարագային, ուր անակնկալօրէն կը հանդիպենք թուղթէ մարդուն, որ շատ սոփորական ապրումի մը տարբեր դրսեւորում կու տայ: Կամ երբ բանաստեղծուհին «Ո՛վ է» կ'ըսէ.

Մեր յուշերն են զնգալով  
Անցնում գլխիկար:

Եւ կրկնում մեր մերկան  
Իրենց հետքերով:

Արեւելահայ մեր գրողներուն բառերով, վերջին երկու տողերը խորագէտ դիմումի են եւ զգայնութեան նոր գիծ մը կը բանան: Իսկ «Զօզնած եմ» բանաստեղծութեան մէջ նման ապրումներ արթննող պատկերներու կարճ շարք մը կայ՝ իրարու յաջորդող, ուր կախուած հին ջահը, պահած հողը կամ կաղ մարդու ստեղծանքներուն արձագանքը կու տակուելով, յոգնութեան ապրումը շոշափելի կը դարձնեն:

Տակաւին Ռուբինա երբ կը խօսի «Քիթ»-ը ներմարտը խալեցգէ՛ք, մենութեան զգայնութիւններու մասին, յաճախ կը յաջողի սովորականէն դուրս գալ եւ ուշադրու տողեր ու պատկերներ արձանագրել: Կ'ընդգծենք ինչ որ ըսինք՝ տաղեր եւ պատկերներ, որովհետեւ Ռուբինա տակաւին ամբողջական ու առանձին չլրացք մը չունի եւ, ընդհանրապէս, աւանդականի սահմաններուն մէջ կը մնայ: Ինչ որ շահեկան է իր մօտ՝ ընկալիչական դուրս եկող փախուստներն են:

..

Պարսկահայ երիտասարդ բանաստեղծներու խումբին մէջ կ'առանձնանայ Վարանդ իր ստեղծագործական աշխուժութեամբ: Ան արդէն շուրջ վեց դիւրբեր ու գրքոյկներ ունի, ինչ որ ինքնին վկայութիւն մըն է իր շարունակական ճիւղին եւ փորձերուն առնչութեամբ: Գուցէ եւ ան ամէնէն աւելի հետեւողականն է, իբրեւ բանաստեղծ ինքզինք փաստելու ուղղութեամբ: Այս բոլորը լաւ գրաւականներ կրնան ըլլալ իր յատկիկայ աշխատանքներուն աւելցումներ:

Այսօր զլիաւորաբար պիտի տնորդառնանք Վարանդի «Արեւաբար»-ին(5), թէ՛ գործին ծաւալը նկատի ունենալով, թէ՛ տպագրութեան թուականը եւ թէ՛ դիրքին կարեւորութիւնը՝ Վարանդի ըստեղծագործական վաստակին մէջ:

Վարանդ, որ բուական ծանօթ է հայ դասական բանաստեղծութեան ժառանգութեան, հաւանաբար ինքզինք ամէնէն աւելի մօտ կը զգայ Չարենցին (եւ երբեմն Վարուժանին), որ շատ բնական ու հասկնալի երևոյթ է(6): Մակայն անմիջապէս պէտք է աւելցնել, որ այս ազդեցութիւնը ատուելաբար ազերս ունի «Կիլիզական յուսարացէն» եւ «Գիրք Ռանապարիսէն» առաջ ինկող չարենցեան ստեղծագործութեան հետ եւ, եղևալ գործերուն իմացական խնայականութեանն ու ապրումներու եւ բանաստեղծական միութիւն վրայ բանեցուցած հակադիմացն չ'օգտուիր:

«Իմ քննադատութիւն»ը լաւ մուտք մըն է վերոյիշեալ յարաբերութեան եւ Վարանդի բանաստեղծութիւնը բացայայտելու տեսանկիւնէն: Ան գրուած է Չարենցի «Չարենց մամուլ»-ին հետեւողութեամբ, որ կ'արձանագրուին իր գրական հակումները, հրատարակած գիրքերն ու սերերը...: Ճիշտ է, որ Չարենցի օրինակով ինքնակենսագրութիւն է գրուածը, սակայն Չարենց երբ կը գրէր իր պոեմը, ինքնատրոփիւն մը կար իր արարքին մէջ, անկախ Չարենցի տաղանդէն, ու բանաստեղծական կշռոյթէն: Նման բնա-

տիպի մը կրկնութիւնը այս ըջջագրութեան մէջ, տուեալ վերաբառաբերութիւնը կը վերածէ նարկիսականութեան, չըսելու համար ինքնասիրահարման արտայայտութեան: Այս մէկը կ'արձանագրենք մեկնելով ա'յն փաստէն, որ նման արտայայտութիւններ «Արեւաբար»-ին մէջ առատօրէն ցանուած են...: Այլուր, Վարանդ իր «Երգ»-ին մասին պիտի ըսէ:

Արեւներին եւ մարդու  
արեւայիմ համգրում(7):

Նման ետի մը համեմատ դրոշմաբանութեան կը հանդիպենք «Տաղ յարեւմտ»-ին մէջ: Օրինակները շատ են եւ, դժբախտաբար, պատճառ կը դառնան, որ Վարանդ չկարենայ դուրս գալ ինքզինք առանձնաշնորհալ պոետի պատուանդանին վրայ տեսնելու քիչ մը մալած ու վերապաշտ պատկերացումէն:

Վերադառնալով Արալիանի յօդուածին, անկէ վերջնենք այլ նկատողութիւն մը, որ անմիջական ազերս ունի տուեալ կացութեան հետ:

«Սովետահայ պոետիայում վերջին տասը տարիներին, երբի, հարիւրաւոր բանաստեղծութիւններ են գրուել հայրենասիրութեամբ թեմայով: Դրանցում որքան քիչ են հագու խորքից եկող խոստովանութիւնները, որքան շատ է այն ինքնապաշտպան եւ ինքնատր գիտակցութիւնը, թէ ես բանաստեղծ եմ, այն էլ՝ հայ բանաստեղծ, որքան, մանաւ հայրենասիրական երգեր պիտի երգեմ՝ ինչ գնով էլ լինի: Այս ինքնաբնադրական կեղծիքը պղծում է պոետիան(8):

Ճիշտ այս ինքնագոյութեան միտումին, ինչպէս եւ Քարոզական-հրատարակչական զգացումներու եւ բառերու կրկնումին է, որ կ'ակնարկենք, երբ կը խօսինք Վարանդի (կամ քիչ առաջ՝ Արմինի) հայրենասիրական բանաստեղծութիւններուն: Նման կեցուածք եւ արամադրութիւններ ո'չ հայրենասիրական, ո'չ հասարակական եւ ո'չ ալ ընկերային բովանդակութիւն կը ձգեն բանաստեղծութեան մէջ. գայն կը դարձնեն վերացական:

Ձուգահեռ մը գծելով Վարանդի Ծորուղէն կատարած թարգմանութիւններուն եւ ի՛ր իսկ ստեղծագործութիւններուն մէջ, ըսնք, որ Ծորուղի «Թրքուած ծառերի կաղնիք» կտորը կենդանի, յրօտակ, մարդկային ու բնկերային բովանդակութիւն մը կը փոխանցէ, մինչ Վարանդի տաղերուն թագաւոր Երեկոյնները, «Մուժէ կիկները, շեմամաշ մշտններ»ը կամ «Սեւտախէ ղէմներ»ը ոչ մէկ արձագանգող կազմութիւն, բառ կամ պատկեր կը չնշաւորեն: Այս ձեւով, բանաստեղծը ո՛չ իսկ անկեղծ կրնայ ըլլալ իր անձնական փորձառութիւններուն հետ. Ծանօթ լեզուական-ընթացական համակարգը կը փոխարինէ փնտռուքն ու արարումը:

∴

Այս բոլորէն ետք, անշուշտ կարելի է հարցնել, ինչո՞ւ այս իսկական փնտռութիւնը կատարուած է վերացականութիւնը (բովանդակային առումով) պարկուշայ արդի բանաստեղծութեան մէջ:

Աւանդական յղացքներու, պատկերակերտման եղանակներու, յանգապտոյտներու եւ Ծանօթ փոխարեութիւններու կրկնութիւն-վերարտագրութիւնը, առանց համապատասխան բովանդակութեան, լեզուական մեքենայի մը (չըսելու համար խաղի մը) կը վերածեն բանաստեղծութիւնը, ուր մինչեւ իսկ ամէնէն անձնական սպորմները կամ գաղափարները pseudo(ծ) իրականութեամբ մը կը զըրսեւորուին: Տակաւին չենք խօսիր նորարարութեան մասին...:

Բանաստեղծին ինքնակերտնացումը պատճառ կը զատնայ, որ իր կապը աստիճանաբար խզուի շրջապատին հետ եւ

հետզհետէ շեշտուած քնարական-ենթակայական նկարագիրով բանաստեղծութիւն մը ստեղծուի, առանց որ անոր հետեւի թարմութիւնը, կենդանացնող աւելը:

Սփիւռքն ու Սփիւռքի մէջ ստեղծագործող մարդը, մէկուն գոյութեամբ եւ միւսին գոյութեան կացութեամբ՝ հըրապարակագրական տրտագրութիւններէ եւ գաղափարաբանական տարադներէ անդին շատ աւելի խոր իրականութիւն մը կը պարզեն: Իր գոյութեան տաշնապին հետ այդքան սերտ աչքերս ունեցող փորձառութեան ժակերեսայնացումը՝ ամէնէն աւելի կը մտահոգէ մեզ պարսկահայ երիտասարդական բանաստեղծութեան պարագային:

Տակաւին ուշ չէ երիտասարդներուն համար իրենց մեկնակէտերն ու առջնորդանքները վերաստեղծելու եւ թարկելու: Վաղը շատ ուշ կրնայ ըլլալ:

Ծ. ՊԵՐՊԵՐԵՆՆԵ

- 1.— Ն. Աղայան. «Փամանակը եւ բանաստեղծութիւնը», «Մովսէսական գրականութիւն», 1979, քիւ 12, էջ 136:
- 2.— Ալիմ. «Լուսարբութիւն», Թեքրան, 1978:
- 3.— Ռուքիսա. «Էմ սիրտը», Պէյրութ, 1977, տես «Քաղիք», 1978, քիւ 6:
- 4.— Վարանդ. «Շէրիտը ու շուր», Թեքրան, 1979, էջ 6:
- 5.— Վարանդ. «Արեւաբար», Թեքրան, 1978:
- 6.— Վարանդի «Հողմ հոգ» պոէզիա, (Թեքրան, 1978), որ ընթերցանանք մըն է Զարեմըն Զոնդեան 80ամակին տոխրով, առանձին վկայութիւն մըն է այս սէրն ու կապը դրսեւորող:
- 7.— «Արեւաբար», «Ներք», էջ 143:
- 8.— Ն. Աղայան. Առջն տեղը, էջ 138:
- 9.— Զեմէ ուզեր ըսել կեղծ, Գամի որ այսօր իմ Իմ Իմ Իմ Իմ մը եւս կայ:

Է. Յ Ո Վ Հ Ա Ն Ն Ի Ս Ս Ա Ն

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱԻԵՇՏԱԽՕՍՔԸ  
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Մենք բոլորս ծիծաղել ու ծիզադում ենք Պոլոզ Մուկուչի, Կարապետի, Տիգինի Մարգոյի ու Վարդանիկի, Ռուբէնի կամ Հայկուկան ռադիոյի անեկ-վոտներին՝ զաւելտախօսքերի վրայ: Մեզանից շատերը ծիծաղել ու անցել են պաւլիտախօսքերի կողքից, Երբեմն մոռանալով, որ, ինչպէս ասում էր Գեր-ցենը, «ծիծաղը կատակ բան չէ»: Մենք Երբեմն մոռանում ենք, որ քաղաքա-կան զաւելտախօսքը խորհրդային պայմաններում քաղաքական ինքնազիտակ-ցութեան շափանիչ է:

Կար ժամանակ, երբ խորհրդային կեանքին վերաբերուող զաւելտա-խօսքերը Հակախորհրդային քարոզչութիւն էին համարում: Բայց զաւելտա-խօսքը Հակախորհրդային համարել՝ նշանակում է Հակախորհրդային համա-րել նաեւ քոյրը երգիծական հանդէսները. օրինակ, «Ոգնիմ»: Զաւելտախօս-քը անաչտօբէն ծաղրում ու քննադատում է իրականութիւնը, ուստի, չի կարող «հակա» լինել, ինչպէս Հակախորհրդային չէ իմ այս յօդուածս: Իմ յօդուածիս միակ նպատակը այն է, որ ես ցանկանում եմ կենտրոնացնել մեր բանահիւսութեամբ զբազուող Հայրենակիցների ուշադրութիւնը զաւելտա-խօսք կոչուող ժամերի վրայ:

Փոզովրդական բանահիւսութեան հնազոյն ժանրերից մէկը զաւելտա-խօսքն է, որը վարերի խորքերից եկող տոակների մաս է կազմում: Եւ ես կարծում եմ, որ զաւելտախօսքը նոյն յաջողութեամբ կարելի է կոչել հեղ-նատակ կամ հեղնախօսք, որովհետեւ հեղնանքը զաւելտախօսքի ամենակա-րելոր մասն է կազմում:

Արդէն Աւետարանում մենք գտնում ենք Յիսուսի առակների մէջ այն մեծ իմաստութիւնը, որը յաճախ բացակայում է բազմահասար փիլիսոփա-յական աշխատութիւնների մէջ: Դժբախտաբար, Հայ եւ միջազգային բանա-հաւաքների աչքից յաճախ վրիպել են զաւելտախօսք կոչուող հեղնատակնե-րը, որոնք այսօր կամ ընդհանրապէս գրի առնուած չեն եւ կամ էլ մնում են ձեռագիր վիճակում, սիրողների մօտ: Առաւել եւս բացակայում է զաւելտա-խօսքի հասարակագիտական ուսումնասիրութիւնը: Զաւելտախօսքը, ինչպէս եւ բանահիւսութեան այլ ժանրի ստեղծագործութիւնները, ապրելով ժողո-վրդական զանգուածների մէջ եւ մշակուելով, լրացուելով, փոփոխուելով ու բերանից բերան, սերունդից սերունդ փոխանցուելով, պահպանում են տարբեր ժամանակաշրջանների քաղաքական եւ կենցաղային ըմբռումները, ինքնազիտակցութիւնը ու կենսահայեցողութիւնը:

Զաւելտախօսք կոչուող ժանրը առաջին անգամ իր այսօրուայ իմա-տով ծնուել է Արեւմտեան Ներքայում, նուեկների եւ փոքր պատմութեան-քի հետ միասին:

Այդ ժանրին շատ մօտ կանգնած են համարում, օրինակ, Բուկաչչիոյի Հոչակաւոր «Ինկամերսոն»ը: Անեկղոտ բառը ծագել է յունական «անեկղոտ» չհրատարակուած բառից: Անեկղոտների բանահաւաքները միշտ էլ եղել են լուրջ եւ յայտնի գիտնականներ, ինչպիսին էր, օրինակ, Խաւարցի Պաւլո Յաւիթիւն, որին շատերը համարում են այդ ժանրի հիմնադիրը: 1470 թուականին, Իտալիայում առաջին անգամը լինելով հրատարակուեց անեկղոտների ժողովածու՝ «Գաղտնի պատմութիւն» վերնագրով: Դրանից յետոյ գաւելտախօսքերի ժողովածուներ հրատարակուած են աւելի յաճախ: Յայտնի են գաւելտախօսքերի բազմաթիւ միջնադարեան հեղինակներ, օրինակ՝ Հենրի Բերեյը, Մեյնարդը, Գոմենիկացին, Աւլտտեն, Ռէյը, Կոխանուլուկին եւ ուրիշներ: Մոզորաբար անեկղոտ բառը հայերէնով թարգմանուած է որպէս մանրավէպ: Սակայն ես ընտրեցի գաւելտախօսք բառը, որովհետեւ այդպէս էր թարգմանուած Մայիսսեանի բառարանում: Ես անձամբ կը նախընտրէի հեղինակ բառը, որովհետեւ հեղինակը անբաժանելի է անեկղոտից, իսկ առակը, ի տարբերութիւն վէպի՝ հեղինակ չունի: Բայց թողնե՛ք այս խնդրի լուծումը լեզուաբաններին:

Գաւելտախօսքերի ուսումնասիրութիւնը եւ վերլուծութիւնը չափազանց դժուար գործ է: Ինչո՞ւ է քաղաքական ինքնագիտակցութեան նման լուրջ երևոյթը ընդունուած այդքան կատակերգային ձև:

Որտեղի՞ց են ծնուած անեկղոտները եւ ո՞ւմ արամադրութիւններն են նրանք արտայայտուած:

Կարելի՞ է արդեօք գաւելտախօսքը համարել ժողովրդական ստեղծագործութիւն:

Բոլոր այս եւ նման հարցերի դատաստանը պահանջում է դիտական լուրջ ուսումնասիրութիւն, որի համար ես չունեմ ո՛չ ժամանակ եւ ոչ էլ համապատասխան գիտելիքներ ու կարողութիւն: Բայց հետագայ ուսումնասիրութիւնների նախաբանի կարգով՝ ուզում եմ մի քանի խօսք ասել քաղաքական գաւելտախօսքի վերաբերեալ:

Քաղաքական գաւելտախօսքը Ռուսաստանի եւ Լեհաստանի համար միշտ էլ մեծ նշանակութիւն է ունեցել: Գուցէ դա նրանից է, որ Ռուսաստանը, ինչպէս նաեւ Լեհաստանը, իրենց պատմութիւնների ընթացքում երբեք քաղաքականօրէն ազատ չեն եղել: Ռուսաստանի քաղաքացիները միշտ էլ քաղաքականապէս զսպուած են եղել եւ իրենց ներքին արամադրութիւնները արտայայտել են կատակի ձևով:

Ռուսական այդ աւանդոյթը առակասէր հայ ժողովրդի մէջ պարարտ հող գտաւ եւ Հայաստանի համար աւանդական գարձած կենցաղային անեկղոտները փոխրինուեցին քաղաքական գաւելտախօսքերով: Քաղաքական գաւելտախօսքերի ծնունդը թորհրդային Հայաստանում նախ եւ առաջ վկայում է ժողովուրդի մեծագոյն համարձակութեան մասին: 1942 թուականին, երբ ես 10 տարեկան էի երեխայ էի, Երեսնակի վտրտավիրանոցներից մէկում պատուհարսը լսեցի, թէ ինչպէս մի սափրիչ պատմում էր միւսին հետեւեալ գաւելտախօսքը.

«Աւտոմեքենայով մամբարդող Ռուզվելտը, Չրչիլը եւ Ստալինը մտնապարի վրայ պառկած մի կով եմ հանդիպում: Ռուզվելտի եւ Չրչիլի բոլոր փորձերը էջի կովին մտնապարից, անցնում եմ ապարդիւն: Ռուզվելտի խատուամները, Չրչիլի խնդրամեքենա՝ չեմ օգնում: Մտնուում է Ստալինը եւ շշնջում է կովի ականջիմ. «Վեր կաց, թէ չէ կուրտդ կը տանեմ»: Կովը գլուխը առած փախչում է»:



Վարսավիրները բարձրաձայն ծիծաղում էին, իսկ վարսավիրանոցի այն կողմը՝ 42 թուականներին մարդկանց զնդակահարում էին շատ աւելի փոքր յանցանքների համար:

Ռուս զորոջ Անդրէյ Մինեուսկին, համեմատելով զաւելտախօսքը ինքնահարատարակչական աշխատութիւնների հետ, նշում է, որ զաւելտախօսքը պահպանել է ա՛յն կենտրոնակութիւնը, որը բնորոշ է արուեստի համար, եւ պարունակում է իր մէջ աւելի, քան ազատ խօսքն է: Որքան էլ որ հայաժողովրդի զաւելտախօսքը, դրանից նա միայն ուժեղանում է: 30 տարի տեւող գիշերուայ մէջ զաւելտախօսքերը շոգում էին եւ այժմ էլ շոգում են աստղերի պէս: Ռուսական գրականութեան ապագան, երէ նրան վիճակուած է ապագայ, սնունդու է զաւելտախօսքերից, ինչպէս Պուշկինը սեւում էր իր դայեակի հե՛տքը»:

Նշելով զաւելտախօսքի գրական նշանակութիւնը, անհրաժեշտ է ընդգծել նաեւ զաւելտախօսքի զարգացման կողմը: Զաւելտախօսքերը, իսկապէս որ աստղեր են, որոնք ցոյց են տալիս, որ ո՛չ աստիճանն ճամբարները, ո՛չ զնդակահարութիւնները եւ ո՛չ էլ այլ ճնշման շրջաններ չեն կարող կործանել մարդու ներքին ազատութիւնը եւ ուրիշ մէկին (գոնէ մէկին) վասակելու ըզզացմունքը: Մարդկանց զնդակահարում էին, իսկ զաւելտախօսքը մէկից միւսին անցնելով ո՛չ միայն տարածում էր երկրի ներսում, այլեւ ճեղքում էր ամուր փակուած սահմանները եւ դուրս էր գալիս արտասահման: Զաւելտախօսքը ժողովրդի բուն արամադրութիւնների արտայայտիչն է: Եւ եթէ պտղաբեր զաւելտախօսքի սահմաններն անսահման մի բան, ապա այդ գիտութիւնը նորհրդային Հայաստանը հասկանալու գործում կը կատարէր ոչ պակաս դեր, քան որեւէ այլ հասարակագիտական ճիւղ:

Զաւելտախօսքը, ինչպէս ժողովրդական բանահիւտութեան բոլոր ձեւերը, ունի իր օրինաւորութիւնները, աւանդոյթները, առիճանները ու ստորադասակները: Դժբախտաբար, հեղեանակների մեծ մասի մէջ պարունակուող լեզուն գրականութեան համար անվայել է ու զբի չի կարող աւելուել, ասկայն զարգացման զաւելտախօսքերը, այս իմաստով աւելի ժառանգել են:

Յորհրդային Հայաստանում զարգացման զաւելտախօսքերի զարգացումը ընթացաւ մի քանի փուլերով: Ամէն մի փուլ՝ ընթացում էր զարգացման ինքնագիտակցութեան մէջ որոշ արդէլքների, սրբութիւնների ու առասպելների յաղթահարում: Առաջին փուլը տնտեսական առասպելների, մասնաւորապէս կոյտնտեսութեան առասպելի յաղթահարումն էր: Յաղթահարելով այդ առասպելը, ժողովուրդը ստեղծեց բազմաթիւ զաւելտախօսքեր, որտեղ ծաղրում էր կոյտնտեսական կեանքը: Դրանից մէկը մենք արդէն մէջբերեցինք: Կարելի է յիշատակել նաեւ այս մէկը՝

Վոյտնտեսութեան անաւարտները ուզում են Ստալինին հաճեցնել, թէ անկարելի է տարբեր կարգաւթիւններ ունեցող մարդկանց մէկ տեղ հաւաքել ու միասնական տնտեսութիւն ստեղծել: Որպէս օրինակ, նրանք մէկ տեղ են հաւաքում բազմաթիւ գազանների, որոնք ամբիջապէս սկսում են իրար յօշոտել: Ստալինը գիտելով այդ տեսարանը ասում է, թէ եկե՛ք մէկ շաքաթ յետոյ: Մէկ շաքաթ գազաններին քաղցած պահելուց յետոյ, Ստալինը դնում է նրանց առաջ կերը եւ ու՛ժաւաղաւ եղած գազանները խաղաղօրէն մի տաշտակից սկսում են լսփել իրենց լավը»:

Երկրորդ փուլում յաղթահարուեց պրոլետարական միջնադարյանականութիւնը:

**Քեան առասպելը:**

*Սորհրդային Միութիւնում ստեղծուած ազգային փոփոխութիւնները հետեւանքով ծնունդին մի շարք դաւեշտախօսքեր, որոնց հերոսներն էին միամիտ ուսուր, ինքնահաւան վրացին, խորամանկ հրեան, ապուշ ազգրեջանցին, եւայլն: Օրինակ՝ այս մէկը:*

«Հանդերձարանին մտնելում է հրեան եւ, ստանալով իր վերադրուիւն, մէկ ուրիշ է տալիս խոսքերով խօսելիս: — Վերադարձում ինձ 90 կողմի, — ասում է նա: Մտնելում է հայը, վերադարձում է մէկ ուրիշ եւ ասում: — Մնացածը քեզ մնայ: Մտնելում է վրացին, վերադարձում է մէկ ուրիշ եւ ասում: — Վերադարձում քեզ մնայ»:

*Նման դաւեշտախօսքերը միայն որոշ չափով կարելի է քաղաքական համարել: Աւելի շատ նրանք կրում են կենցաղային բնույթ եւ միայն այնքանով են քաղաքական, որքանով քննադատում են քաղաքական վարչակարգից բխող թերութիւնները:*

*Հաւեշտախօսքերի իսկական քաղաքականացումը սկսուեց Երկրորդ հիւսիսային պատերազմից սկսած եւ կապիտալիստական աշխարհի ներկայումս թեւեւ առասպելի:*

«Կոմկուսի քարտուղարը բացատրում է, թէ ինչպիսի առատութիւն է լինելու կոմունիզմի ժամանակ: Հացի, մթերքների, հագուստի, երկրի ու ձիերի պակաս չի լինելու: — Հասկացա՞ք, — հարցնում է քարտուղարը ներկայիցս: — Այո, — պատասխանում է ծերունի Արամը, — միշտ այնպէս է լինելու, ինչպէս քաղաքի ժամանակ էր»:

«Ռազիսի խօսակը պատմում է խորհրդային երիտասարդների ցանկալիքները: Նա նկարագրում է խորհրդային մանկապարտէզների խաղաղայնորդ, համոզուած ուսուցիչները, եւայլն: Գրեւ ինքինքն սին նա պատմում է կապիտալիստական աշխարհի երիտասարդների քաղաքական վիճակը: Ռազիսի հարցումից յետոյ ծնողները միտում են, որ երեւանում ապրող իրենց Գոհարիկը լալիս է, ասելով: — Ես էլ ուզում եմ խորհրդային Միութիւն գնալ, այլեւս չեմ ուզում ապրել կապիտալիստական աշխարհում»:

*Մրանց կարելի է աւելացնել բազմաթիւ սրամիտ դաւեշտախօսքեր, որոնք ծնունդին ներգաղթի հետ միասին եւ որոնք համեմատում էին Հայաստանի կեանքը արտասահմանի հետ: Մրանք այնքան տարածուած են, որ աւելորդ եմ համարում նրանց մէջընդմիջել:*

*Քաղաքական դաւեշտախօսքի յաջորդ հիւսիսային կուսակցութեան անձնորոշման թեման առասպելի յաղթահարումն էր:*

«Կոմկուսի քարտուղարը հարցնում է կուսակցականներից մէկին, թէ ինչու նա ներկայ չէր վերջին ժողովին: — Եթէ իմանայի, որ վերջինն է, — պատասխանում է նա, — անպայման կը գայի»:

«Կուսակցութեան մէջ ընդունուելիս մէկին հարցնում են. «Իսկ դու պատրաստ ես կեանքը տալ կուսակցութեան համար»: — Ի հարկի՛, — պատասխանում է նա, — ո՞ւմն է պէտք այնպէս կեանքը»:

«Ուստա Սիմոնը պատմում է, թէ ինչպէս իրեն դուրս արեցին

կուսակցութիւնից: Երբ խորաշուկին պաշտօնագրկեցին, ես առաւօտեան ռազիօ չէի լսել ու ոչիմչ չգիտէի այդ մասին: Իմ գրասենեակի պատից կախուած էին Բրեժնեւի ու խորաշուկի նկարները: Ներս մտաւ իմ աշխատակիցներից մէկը ու հարցրեց, այս ապուշի նկարը ինչու՞ չես հանել: Որի՞մը, հարցրի ես»:

«Մի կուսակցական ուզում է դուրս գալ կուսակցութիւնից, բայց նրան անընդհատ մերժում են: Ճարահատուած նա մտնում է շրջանի ֆարտուգարի գրասենեակը եւ բացագանչում. «Կեցցէ Հ. Յ. Դաշնակցութիւնը»: Շրջանի ֆարտուգարը վեր է կենում տնօրէնի եւ ուրախացած հարցնում. «Ի՞նչ է, մերժեմ եկան»:

*Վերջին տասնամեակում Լենինը զարձաւ զուելչտախօսքի հերոս: Յաւրդէն այն վերջին փուլն էր, երբ ժողովուրդը յաղթահարեց սրբութիւններէ ապաստելը: Պէտք է նշել, որ հենց այդ ժամանակաշրջանում ամերիկեան նախագահներ Ալլընհատէրը եւ Քենեդին նոյնպէս երեւացին խորհրդային զուելչտախօսքերում: Սակայն, եթէ Լենինը բացասական հերոս էր, ապա ամերիկեան նախագահները, այսպէս ասած, դրական հերոսներ էին, որոնք միւս էլ յիմար վիճակի մէջ էին դնում խորհրդային զեկավարներին:*

«Բրեժնեւը պէտք է հանդիպի Քարտրի հետ: Հետախուզութիւնը հազարքէլ է, ոք Բրեժնեւին յիմար վիճակի մէջ դնելու համար Քարտրը նրան տալու է հետեւեալ դժուար հարցը. «Այն ո՞վ է, որ քո մօր գաւակն է, բայց դու չես»: Հաւաքում է ֆադրիւրոն, բայց ոչ ոք այս հարցի պատասխանը չի կարողանում գտնել: Վերջապէս հերթը հասնում կոսիգիմին, որին հարցնում են. «Այն ո՞վ է, որ քո մօր գաւակն է, բայց դու չես»: — Ի՞մ եղբայրը, — պատասխանում է կոսիգիմը: Բոլորը գոհ են պատասխանից եւ Բրեժնեւը այդ պատասխանով զինւած՝ մեկնում է Միացեալ Նահանգներ: Երբ Քարտրը հարցնում է նրան. «Այն ո՞վ է, որ քո մօր գաւակն է, բայց դու չես»: Բրեժնեւը սուսանց աչքերը քարթելու պատասխանում է. «Կոսիգիմի եղբայրը»:

*Բայց վերադառնանք Լենինին: Մէկ հետաքրքրական նրբութիւն կայ Լենինեան զուելչտախօսքերի շարանի մէջ:*

*Եթէ Ռոբուշովը զուելչտախօսքերում հանդէս է գալիս որպէս միամիտ ու մի քիչ անխելք գիւղացի, ապա Լենինը՝ երեւում է որպէս նենգ ու խորամանկ մարդ: Լենինին նուիրուած զուելչտախօսքերում յաճախ ծագրի է ենթարկուած նրա անձի հետ կապուող պաշտօնական չափազանցութիւնները: Օրինակ այս մէկը.*

«Ամուսինը տուն է վերադառնում եւ գտնում է իր կնոջ անկողնում մի տղամարդ, որը սիրարանում է իր կնոջ հետ: Չայրացած ամուսինը յարձակում է մարդու վրայ, բայց վախեցած կինը բռնում է մարդու ձեռքը եւ առաչում. «Չհամարձակուես նրան ձեռք տալ, նա Լենինին է տեսել»:

*Սակայն լուկ ծաղրանքից բացի, որը վերաբերում է ոչ այնքան Լենինին, որքան որ նրա պաշտամունքը ստեղծող ժառանգորդներին, զուելչտախօսքերում ստեղծուած է Լենինի կերպարը: Հակառակ բարի եւ երաժշտաւէր*

Լենինի, զաւելտախօսքերում ստեղծուած է Լենինի այն կերպարը, որը կարելի է գտնել արտասահմանում լոյս տեսած ուսումնասիրութիւններում: Կատկածից վեր է, որ զաւելտախօսքերի անյայտ հեղինակները չեն կարողացել Լենինին վերաբերուող արտասահմանեան հեղինակների աշխատութիւնները: Եւ եթէ, այնուամենայնիւ, զաւելտախօսքերի Լենինը գրեթէ չի տարբերում իսկական Լենինից, դա կարող է միայն պատիւ բերել ժողովրդի բանածին իմաստութեանը: Մի քանի զաւելտախօսքեր լենինեան շարքից:

● Լենինի գրասենեակն է մտնում Մաքսիմ Գորկին: — Վլադիմիր Իլիչ, — ասում է նա, — շատ աշխատեցիք, գուցէ՞ կէս շիշ կանծեմք միասին:

— Երկուսով, աչ մի դէպքում, անցեալ օրը մենք Սվեռչիովի հետ երկուսով կէս շիշ կանծեցինք եւ ես բարձրանալով զրահագնացքի վրայ, ահագին յիմարութիւններ գուրտ տուցի: Այդ իմ յիմարութիւնների պատճառով այսօր բանաւորները գործադուլ են յայտարարել:

● Լենինի մօտ գալիս է Ստալինը եւ հարցնում.  
— Վլադիմիր Իլիչ, կարելի՞ է մեր կուսակցական ընկերներից մի 10 հոգի գնդակահարել:

- Ինչո՞ւ չէ, եթէ դա անհրաժեշտ է, ինչո՞ւ չզննակահարել:
- Իսկ 100 կոմունիստ գնդակահարել կարելի՞ է:
- Եթէ ամերաժեշտ է՝ կարելի է եւ հարիւր:
- Իսկ ձագար հօգի կարելի՞ է:
- Հագար էլ կարելի է:
- Իսկ մէկ միլիոն կոմունիստ կարելի՞ է գնդակահարել:
- Է, Եսափ Վիսարիոնովիչ, չափը մի քիչ անցնում էք, դրա համար մենք ձեզ ստիպուած կը լինեմք ընկերական դիտադաւթիւն անել եւ քննադատել:

● Յիւրիխում այն տանը, որտեղ ապրել էր Լենինը, յուշատախտակ կ'դրուէր համար մրցութիւն յայտարարուեց: Առաջին մրցանակը շահեց հետեւեալ յուշատախտակը. «Այս տանը Լենինը եւ Ինեսա Արմանը քաճմուռ էին նախե՛ծա կրուպակայից»:

*Չաւելտախօսքերի են նմանում այն ասացուածքները, որ ժողովուրդը յօրինում է այս կամ այն քաղաքական իրադարձութիւնների կապակցութեամբ: Օրինակ, ասում էին, թէ Լենինի ծննդեան 100ամեակի կապակցութեամբ Երեւանի կահոյքի գործարանը արտադրեց երեք տեղանոց մահճակալ, որը կոչուած էր. «Լենինը միշտ մեզ հետ է»:*

Յժական թուականներին խորհրդային քաղաքական զաւելտախօսքի հաւաքական հեղինակը յօրինեց զաւելտախօսքի մի նոր ձեւ, որը կոչուեց «Հայկական քաղիոյի տխրասխանները»: *Չաւելտախօսքի այս ձեւը մեծ տարածում գտաւ եւ ընդունուեց բոլոր բնագաւառներում: Հումորը եւ կատակերգութիւնը կայանում էր նրանում, որ խորհրդային ռազիսները շատ յաճախ իսկապէս կազմակերպում էին հազարդուաներ, որտեղ պատասխանում էին ռազիստոյաների հարցերին: Հարցերը, ի հարկէ, միամիտ ռազիստոյի հարցեր էին, իսկ պատասխանները՝ փորձառու խորհրդային քարոզիչների պատասխաններ:*

տասխաններ և Ու գարմանալի բան, այն օրից, երբ հայկական բաղնիքի անեկ-  
դոտները տարածուեցին, խորհրդային ազդիոները դադարեցրին իրենց պա-  
տասխանները, ըստ երեսնյթին հասկանալով, թէ որքան ողորմելի են իրենց  
չինծու պատասխանները, հայկական բաղնիքի պատասխանների համեմատու-  
թեամբ: Մի՞թէ սա չէ ապացոյցը, թէ որքան մեծ ուժ ունի գաւեշտախօսք  
կոչուող ստեղծագործութիւնը:

Արտասահմանում կան բազմաթիւ հրատարակութիւններ, «հօսում է  
աադիօ Երևանը» վերնագրի տակ: Սակայն սա արտասահմանի յօրինում է,  
որովհետեւ գաւեշտախօսքի այդ ձևը կոչում է «չայկական ադիօյի պա-  
տասխանները»: Ահա նրանցից մի քանիսը.

- Ի՞նչ տարբերութիւն կայ սոցիալիզմի եւ կապիտալիզմի միջև:
- Գապիտալիզմի ժամանակ մարդը շահագործում է մարդուն,  
իսկ սոցիալիզմի ժամանակ՝ հակառակը:

•

- Ի՞նչ է նշանակում ժողովուրդների բարեկամութիւն:
- Ժողովուրդների բարեկամութիւնը նշանակում է այն՝ երբ  
ուկրաինացիները, ռուսները, ուգրեկները եւ բարբ արգերը միանում  
են՝ վրացիներին ոչնչացնելու համար:

•

- Լիմբու՞ է գողութիւն կոմունիզմի ժամանակ:
- Ոչ, ամէն ինչ կը կողպարտի սոցիալիզմի ժամանակ:

•

- Կարելի՞ է Միացեալ Նահանգներում սոցիալիզմ կառուցել:
- Այո, բայց հացահատիկը որտեղի՞ց պիտի գնեմք:

•

- Կարելի՞ է Նիւ Գլոսնի անլանելի վիճակից:
- Քիւզաւոմոտեսական հարցերի չեմք պատասխանում:

•

- Ի՞նչ կարելի է գնել Միացեալ Նահանգներում մէկ դոլարի:
- Այդ մէկը չգիտեմք, բայց գիտեմք, որ Երեւանում մէկ դո-  
լարի կարելի է գնել 7 ռուբլի:

•

- Կա՞յ, արդեօք, կեանք ուրիշ մուտրակների վրայ:
- Ոչ, ուրիշ մուտրակների վրայ էլ կեանք չկայ:

Այստեղ եւ մէջրեկցի միտն այն, ինչ պատահարք միտքս էր մտա-  
ցել: Սրտնք անշուշտ տմենայնոյնները չեն եւ անշուշտ մեր ընթերցողների  
մէջ կան այնպիսիները, որ շատ տւելի լուսերը ու շատ աւելի շատը գիտեն:  
Հենց նրանց էլ ես դիմում եմ, իմ այս յօդուածով, — գրի առէք ու պահէք այս  
գանձերը, որովհետեւ նրանք մեր ժողովրդի բանահիւսութեան լուսադոյն  
նմոյշներն են: Գը գայ ժամանակը եւ այդ գաւեշտախօսքերը լուրջ վերլու-  
ծութեան կ'ենթարկուեն:

Է. Գ. ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# Կար Գրքեր

## ԾԱԳԷ Ի ԾԱԳ, ՀԱՏՈՐ Գ. (ԵՐՈՒԱՆԴ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ)

Երուանդ Պարսեանի ՎՊՊԷ Ի Ծագ պատմական գրքերի ճշգրտողը էր Հանգրիանայի ՎՊՊԷ կրթական կառույցի ղեկավարը, 1979 տարուան հետեան, 200 փորձեր և զեղակազմ էջերով:

Հատորը էր թողնուած ՎՊՊԷ, ՎՊՊԷ-ի Կրթական կառույցի ղեկավարի պատմական գրքեր:

Ներկայ կատորին, ինչպէս նաեւ զայն նախորդող կատորներուան էի՛ՔԷՐԸ (ՎԵՊՊԷ-ի Ծագ պատմական և ՎՊՊԷ-ի Կրթական կառույցի ղեկավարի պատմական գրքեր) և ՎՊՊԷ-ի Կրթական կառույցի ղեկավարի պատմական գրքեր: Այլ փորձաշարները ի յայտ կու գան Պարսեանի ղեկավարի աշխատանքներուան զուգահեռ և կ'ընթանան իրարմէն յայտնաբերուած ՎՊՊԷ-ի Կրթական կառույցի ղեկավարի պատմական գրքեր:

Արդարեւ, Քոմիտասի Կրթական կառույցի ղեկավարը էր ՎՊՊԷ-ի Կրթական կառույցի ղեկավարը, անոր կատարած աշխատանքները էր ղեկավարողը, ՎՊՊԷ-ի Կրթական կառույցի ղեկավարը էր:

Այսպէս, ՎՊՊԷ պատմական գրքով, ՎՊՊԷ-ի Կրթական կառույցի ղեկավարը էր ՎՊՊԷ-ի Կրթական կառույցի ղեկավարը, անոր կատարած աշխատանքները էր ղեկավարողը, ՎՊՊԷ-ի Կրթական կառույցի ղեկավարը էր:

Արդարեւ, Պարսեանի Կրթական կառույցի ղեկավարը էր ՎՊՊԷ-ի Կրթական կառույցի ղեկավարը, անոր կատարած աշխատանքները էր ղեկավարողը, ՎՊՊԷ-ի Կրթական կառույցի ղեկավարը էր:

յաստիման գաղտնիներն մէկը:

Հայկական Յնդակապուստեան Հարցը էր յայտնաբերուած ՎՊՊԷ-ի Կրթական կառույցի ղեկավարի պատմական գրքեր:

Հայ Դասի գրքով տարուած աշխատանքներուան մէկ որեւոր էր պարզուի սոյն պատմական գրքով, իսկ ՎՊՊԷ-ի Կրթական կառույցի ղեկավարի պատմական գրքեր:

Իր ազատ ժամերուան, կտորի կը վիճէ անոնց հետ Հայկական Յնդակապուստեան Հարցը, ՎՊՊԷ-ի Կրթական կառույցի ղեկավարի պատմական գրքեր:

Չուզողի պատմական գրք, յոտանեան ժամուայն վերապահ կ'ընդունուի ՎՊՊԷ-ի Կրթական կառույցի ղեկավարի պատմական գրքեր:

Հայ Դասի ստեղծութեամբ թափուած աշխատանքները արժանաւոր էր զանոնք ի վերջու ՎՊՊԷ-ի Կրթական կառույցի ղեկավարի պատմական գրքեր:

յայտնութեամբ բացատրել որևէ որոշումներն մը կը ստեղծէ կատարել մէջ, որ ի պատիւ իրեն սրտուած ճարտարներն կենացը, որուն լուստն այցելութեանը արժեքներով ձեռնարկուող գործերուն յիշատակը, ճարտար կը զարմնէ իրազորութեամբ յիշուող յոգուածին:

Քվիթմանկամ համաձայնացող երկարատև ոչ պատմութեամբ, Պարտաճան կը ներկայացնէ վիճակներն մէջ, կարճատև այցելութեան մը ընթացքին իր ունեցած գիտապաշտ ապրումները պարտաճի վրաստա Գլխեկնցի հետ:

Յաճախակի զրոյցներով ձեռք բերուած արդարութեանց յոյսին տակ, հեղինակը ո՛չ միայն կը յուշազրէ պարտաճին հետ իր մանկութեան լքուող տարիները Հայկոյի մէջ, այլև կ'ուրուագծէ անոր ընտանեկան կեանքի ողորդութիւնը: Փոքրուանային պատկերացումներով:

Իր հիմնական գիծերուն մէջ, այն պատճառով Վրաստանի հօր՝ Քարլ Գլխեկնցի հողեկան արտադրելի վիճակին ուրուագծումն է, որ ծնունդ կ'ունենէ կեռը՝ Հիլիպին տարածած մահով:

Քարլ այն աստիճան կը սերէր Հելլան, որ կ'ուզէր անոր անդոյ ներկայութեան կերպարել իր ազգան մէջ, փորձելով վերադարձի իրմով հրատական այն պահը, որ ընդհատուեցաւ ճակատագրի եղբերական մէկ խաղով: Այսպէս, Քարլ կը թելադրէր Վրաստանին, որ ամէն զիշէր, վարձաւարը չընաչխատով պարէր իր զիմաց, նիւզ մօրը պէս, եւ ինք ըստփակով ընկերամար անոր պարհին: Անիկն այն իրադրութիւնը, թէ իրենց բնորոշ գիծերով մայր ու աղջիկ նման էին իրարու, յանձնի պատճառ կ'ըլլար, որ Քարլ չփութէր աղջիկը... մօրը հետ: Ամէն զիշէր կրկնուող ծիսանանացած այդ պարը ո՛չ միայն կը վերակենդանացներ իր տարաբարս կեռը կրկնելու թիւ, այլև աղէ կրկնելու թիւն արտապահող յայն հիլիպեանցիներն արժանի կը մատնէր զինք: Երբայ ինքը, Քարլ Գլխեկնցը արդէս հա՛յր... Գրութեան արժանի ստապող մը, որ զուտրիմ հանդէպ իր սերը անարատ պահպանելու համար, կը միայնորէ հեղինակը, զամեն օր, գիրմարդկային պայտար մղելու դառնապարտուած մըն էր ընդդէմ ամենին նուիրական եւ միտնայն տանն ամենին հարմարական մեղքի գիրքմեկով օծուծ հերկայութեան մը, ներկայութիւն մը, որ իր անզիմարդիկ հիմնութեամբք ամեն օր կը վերջանան իր վազմեանի ու պաշտած կիներ: Այս ցաւազնի վիճակը կը լրացնէ իր մէջ կենսազորութեան արտաբերմը մը վերջ կը գտնէ արտապահող արտին վերջին արտաբերմը՝ կեռը Հիլիպին չեմօնի առջին:

Հատորին ընթացքանութեամբ կը նկատենք, որ ընթացիկ աստիճան վերստին գոյութեան չունենէ, այլ՝ ներսանքու կեանքին եւ հողեկան վիճակներուն անդադարձող զրոյցակիցներ: Հետաւոր թէ մտնել անգետի մը մէջ ապրած եւ տա-

նապած անձեր են այդ ներսանքը, որոնք անգետականի տիներն են հիմա եւ կամ կ'ապրին այլ հորիզոններու տակ: Անոնց կենցաղային պայմաններուն, խառնուածքին եւ ներքին աշխարհներուն մէջ իրազն կ'ըլլան հեղինակին եւ իր զրուցակիցներուն միջեւ կայացած անդրադասեցումով կամ անուանութեան տարեզարժի անթիւով արթնած ճակատագրապահակներով: Յուշու հերոս մը կամ պատմական երեւոյթ մը ներկայացնելու գծով, յիշուող պատմականները կը կրեն սակայն դատողական բնոյթ, որոնք անդ-անդ վերածուելով երկարապատու զրոյցի՝ կ'ըլլան նուազ շահեկան, զրկուելով կարգապահ ընթացքի մը նպատակ: Պերճարու արեան մըն է Վրաստանի երկարատև զրոյցը՝ հօրը ողորդական կեանքին պարագաներուն անդադարձող:

Յնչապանութեան Հարցին վերաբերող պատմութեամբ, լրագրային սեւեակներու վերադասուած անգետային մը կը ներկայացնէ աստիճանաբար, զան արուեստի բնորոշի հունով զրահարուած արգար զատի մը տալանալը: Այս պատճառաւ, պատմականը զուտ զուլով գեղարտեսական իր պարունակին՝ կը վերածուի եզրերէ դատարանային արարաց, բիր ու դէմ երկարուած վիճարանութիւններու: Կարծէք Յնչապանութեան Հարցով զրոյցող ԱՄՆի նկարագրողութեան թիւն մէկուն արտապահող մէկ նկարը կը նշանակէր Պարտաճան՝ արտապահող կարգու վերադասութեամբ եւ փոխանակուած կարծիքներու վիճակագրական տուեաններով: Հայկական շարժերու շուրջ անգետական վերջ նստի Բուկարանի եւ Հիլիպեանի վերջին փոփոքարային անձնական քարտուղարներին՝ ուրիշանայն ոլորտն Գլխեկնցի հետ, կը հաստատէ վերադասուած ընդդասուած:

Հիլիպեան ո՛ւր այ գտնուի, լիարարական զործով ո՛ր անձին հետ այ ծածկութեան հաստատել, կը կրէ իր հետ ազգային թէ անհասարակ ցաւ մը անպայման, իրազորութեան բողմանքներու նախածրագիր մը, չհատուցուած պատճառներու նախահաշիւ մը, անցելու յիշող անկողուած կայ մը: Օտար արեւուն, օտար անձնարարութեանց հետ պարագայական իր Թաճարութեան ան կը պայմանուորէ ի յառաջադասելի մօրին մէջ գոյութեան ունեցող որչա՛ր արտաբերանի մը յաջողով: Այս հիմամբ է, որ ծրահուող կ'ունենէ եւ կը կատարուի անոր պատճառանքները, որոնք նոր պայմաններու եւ փորձառութեանց յոյսին տակ աղջային խառնուածք մը կը բնորոշեն (եւայլը), անմասնակցի դաս մը կը հետապնեն (եւճորհակալութիւն Հիլիպեանին) եւ հին մտերմութեան մը կը վերանորոգեն (եւկիցմանկամ հետաձայն): Այս յաջողով ընթացիկի եւ արտակ սուտրու կը գտնան Պարտաճանի զմարդ կրկններ ճատորին պատճառանքները, որոնք նմանի զրոյցներ են, նմանի կցանկով մը յուշարարուած:

ՅԱՆՔ ՄԱՆՈՒԿԱՆ

Իսկ  
 Երբ  
 Տուն դարձանք բանակից  
 Սպասում էր ինձ արդէն  
 Նայիրին... Երկրային մի կին.  
 Աչքերը — ջահեր կրակի,  
 Շրթունքները — Շիրապի՛ վարդեր:

Ինչքան շա՛տ անցան դէմքեր,  
 Բայց հոգիս թող թեպտ՛վ հարբի.

— Ախ, ինչքան ես սիրո՛ւմ եմ թեպ,  
 Արփի՛կ, լուսաո՛ր Արփիկ...  
 .....



ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ

### «ՈՐՏԵ՞Ղ ԵՍ ՀԱՆԳՉՈՒՄ ՀԻՄԱ՝...

«Սովետական գրականութիւն» ամսագրի անցեալ տարւան վերջին թիւին մէջ, «Ոսկէ աստղ» խորագրի տակ, բանաստեղծ Հրաչեայ Յովհաննիսեան ստորագրած է շուրջ եօթնասուն էջոց յուշադրական ակնարկ մը, որ կը պատմէ իր կեանքը՝ մանկութենէն մինչեւ ներկայ օրը, տեղեկութիւններու եւ խոստովանութիւններու հետաքրքրական մանրամասնութիւններ հաղորդելով ընթերցողին:

